

# ԱՐԴՅՈՒԹ

## ԵՂԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԱԳՈՒՀՈՒ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԶԵՖԻՐԻ ՌՈԲԵՐԹՍՈՆԻ ՏԵՍԱԿԵՏԸ  
ՀԻՄՆՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ  
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎՐԱ,  
ՈՐՈՆՔ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ,  
ՊԱՌԱՍԵՆՏԸ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄՈԼՈՐԵՑՎԵԼ

9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2009



«Եթիկական նկատառումներով քննադատության համար ՆՍԿ-ն բաց է:  
Նույնիսկ հաշվի առնելով Թուրքիայի հետ մեր հարաբերությունների (քաղաքական, ռազմավարական և  
առեւտրային) կարեւորությունը՝ ներկայիս ուղին միակ հավանական տարրերակն է»:

Քաղաքականության հուշագիր, Արտաքին գործերի և Քրիտանիայի

Համագործակցության նախարարությունից նախարարին

12 ապրիլի 1999

## ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ.

### ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

2007 թվականին Լոնդոնում Հայկական համայնքի անդամները հանդիպում կազմակերպեցին քննարկելու համար Բրիտանիայի կառավարության արձագանքները՝ կապված 1915թ. Հայկական Ցեղասպանության ճանաչման հետ: Այլ երկներ՝ ներառյալ Ֆրանսիան, Կանադան, Ռուսաստանը, Լեհաստանը, Հոլանդիան, Հունաստանը եւ Վատիկանը, ինչպես նաև Միացյալ Նահանգների առանձին նահանգների մեծ մասը պատշաճ ճենով ճանաչել են 1915թ. իրադարձությունները՝ որպես ցեղասպանություն: Ուելսի Վեհաժողովը 2002թ.-ին նույնպես այս իրադարձությունները ճանաչեց ցեղասպանություն, Ըվեյցարիայում ցեղասպանության հերքումը համարվում է հանցագործություն:

Առկա արձագանքները հակասում էին Բրիտանիայի կառավարության ցուցաբերած էրիկական դիրքորոշմանը, թվում էին ապատեղեկացված, ուստի եւ անպատշաճ: Անհրաժեշտ էր պարզաբանել ու հասկանալ մի հիմնահարց, որը մեծ ցավ եւ շարունակական կալիծ է պատճառում բրիտանարնակ բոլոր հայերին, ինչպես նաև արդարադատության, արդարության եւ մարդու իրավունքների հարցերում շահագրգիռ ավելի լայն հանրության անդամներին: Եվրոպական քաղաքակրթության արժեքներին վճարող միտումներն, անշուշտ, պետք է կանգնեցվեն:

Համապատասխանաբար, որոշվեց ստանալ Թագուհու խորհրդականի՝ ոլորտի ականավոր մասնագետի տեսակետը առկա արձագանքների վերաբերյալ եւ որոշել արդյոք այդ արձագանքները պետք է մնան նույնը:

**Հայկական կենտրոնը\*** (The Armenian Centre, PO BOX 155, Hill House, 210 Upper Richmond Road) համաձայնեց այս իրավական տեսակետի պատրաստմանը տրամադրել սահմանված գումար իր հոգարարձուների միջոցով: Ուստի այն իր լուծումը գտավ որպես Հայկական կենտրոնի ծրագիր:

Գյուլբենկյան Անտոնյան ֆիրման (The firm of Gulbenkian Andonian) նշանակվեց իրավաբանական խորհրդատու: Հոգաբարձուները վստահարար նախաձեռնեցին այս նախագիծը, քանի որ նրանցից մեկը՝ Թ.Ս. Կահվեն բավականին գիտակ է այդ հարցում եւ [www.ararat-heritage.org.uk](http://www.ararat-heritage.org.uk) կայքում ունի Հայկական Ցեղասպանության մասին գրականության ցանկ հինգ լեզուներով (հայերեն տարբերակին կարելի է ծանոթանալ նաև «Արմեղիա» ՏՎԳ-ի էլ. կայքում՝ [www.armedia.am](http://www.armedia.am)):

Իրավախորհրդատուները դիմեցին ԹԽ Զեֆրի Ռոբերտսոնին, ով ունի համաշխարհային մեծ հոչակ այս ոլորտում՝ տալու իր տեսակետը:

Արդյունքում ԹԽ Զեֆրի Ռոբերտսոնի՝ Հայկական ցեղասպանության վերաբերյալ տեսակետի ներկայացում-շնորհանդեսը տեղի է ունեցել 2009թ.-ի նոյեմբերի 3-ին Լոնդոնի Դաութի Սթրիթ Զեյմբրըստ (Doughty Street Chambers, London):  
Հաստ պրա. Ռոբերտսոնի՝ նշված Տեսակետը կարող է օգտագործվել.

- ա) դիվանագիտական ուսուցողական կուրսերի,
- բ) միջազգային ոլորտի կուրսերի համար:

# ԱՐԴՅՈՒՆՔ ԵՂԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թագուհու խորհրդական Զեֆրի Ռոբերտսոնի տեսակետը, 9 հոկտեմբերի, 2009

\* Հայկական կենտրոն հիմնադրամը (*The Armenian Centre Trust*) ստեղծվել է 1988թ.-ին: Կանոնադրությունը պարունակում է մի շարք նպատակներ: Դրանցից մեկն է տեղեկատվություն եւ խորհրդատվություն հավաքելն ու տրամադրելը՝ հանուն հանրության տեղեկացվածության և շահերի:

Հետեւաբար, Հայկական Կենտրոնը նշում է, որ ուսանողներն օգուտ կրադեն այս նշանավոր պրոֆեսորի աշխատանքից ոչ միայն ըմբռնելով Հայկական ցեղասպանությանը վերաբերող տեսանկյունները, այլև ծանոթանալով այլ գիտական ոլորտներին, ներառյալ մարդու իրավունքները:

Բնականաբար կարենուրվում էր նաև Տեսակետի հայերեն թարգմանությունն ու ներկայացումը հասարակության լայն շերտերին:

Հայկական կենտրոնը Տեսակետը հայերեն թարգմանելու եւ ներկայացնելու իրավունքը վերապահեց «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպությանը՝ տալով նրան նաև Տեսակետի հայերեն տարբերակը ՁԼՄ գործընկերոջ միջոցով տարածելու հնարավորություն:

Արդյունքում, 2010 թվականի մարտի 3-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ Տեսակետի հայերեն էլեկտրոնային տարբերակի շնորհանդես-քննարկումը:

Տեսակետի հայերեն էլեկտրոնային տարբերակին կարելի է ծանոթանալ հետեւյալ կայքերում:

1. «Արմեղիա» տեղեկատվական վերլուծական գործակալություն՝ [www.armedia.am](http://www.armedia.am),
2. Արարատ Ժառանգություն (Ararat Heritage)՝ [www.ararat-heritage.org.uk](http://www.ararat-heritage.org.uk),
3. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ՝ [www.genocide-museum.am](http://www.genocide-museum.am):

Նույն կայքերում կարելի է գտնել նաև գրքի անգլերեն տարբերակը:

«Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության կողմից թարգմանությունն իրականացել են Նույն Մելքոնյանը եւ Իզարելլա Բարխուդարյանը:

«Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպությունն իր խորին շնորհակալությունն է հայտնում.

**Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմյանին եւ կառույցի անձնակազմին** Տեսակետի հայերեն լեզվի վերջնական խմբագրման աշխատանքներում ցուցաբերած մասնագիտական աջակցության եւ շնորհանդես-քննարկման համատեղ կազմակերպման համար,

**«Արմեղիա» տեղեկատվական, վերլուծական գործակալությանը** տեղեկատվական աջակցության համար,


**Արարատ Ժառանգություն (Ararat Heritage) կազմակերպությանը** աշխատանքի իրականացման ողջ ընթացքում ցուցաբերած թագմակողմանի աջակցության համար:

## ՀԵՂԻՆԱԿԻ ՍԱՍԻՆ

Զեֆիրի Ռոբերտսոնը, թագուհու խորհրդական (ԹԽ), Դաութի Սքրիփ Չեյմբլըսի հիմնադիրն է եւ ղեկավարը: Ծառ երկրներում նա հանդես է եկել որպես խորհրդական սահմանադրական, քրեական եւ միջազգային իրավունքի ոլորտների կարեւոր գործերում: Նա նաև ծառայել է որպես Սիեռա Լիոներու ՍՍԿ-ի Պատերազմի հանցագործությունների դատարանի առաջին նախագահ, որտեղ հեղինակել է շրջադարձային որոշումներ համաներումների սահմանափակումների, մանկահասակներին զինվորագրելու անօրինականության եւ միջազգային իրավունքի գարգացման համար վճռորոշ այլ հիմնահարցերի վերաբերյալ:

Զեֆիրի Ռոբերտսոնը դատավոր է, Սիցին Թեմփլի մագիստրոս ու նաև Թագուհի Մերի քոլեցում մարդու իրավունքների գծով իրավիրված պլոտֆեսոր: 2008թ. Գլխավոր քարտուղար նրան նշանակեց ՍՍԿ-ի Արդարադատության խորհրդի երեք ականավոր իրավաբան անդամներից մեկը:

Զեֆիրի Ռոբերտսոնը հեղինակել է «Մարդկության դեմ գործած հանցագործություններ» պայքար հանուն համաշխարհային արդարադատության», «Արդարադատության խաղը» (Հուշեր) գրքերը եւ Զարլգ Լ-ի դատավարության մրցանակակիր «Բռնապետի սպանության ամփոփագիր» ուսումնասիրությունը:



## ՆԱԽԱԲԱՆ

Վերջին տարիներին Միացյալ Թագավորության կառավարությունները հրաժարվում են ընդունել, որ 1915-16 թվականներին Թուրքիայում տեղի ունեցած հայերի տեղահանումներն ու սպանություններն են: 2008թ. Հայկական կենտրոնը որոշեց այս հարցի վերաբերյալ ստանալ փորձագետի կարծիքը ու դիմեց պարոն Զեֆրի Ռոբերտսոնին՝ թագուհու խորհրդականին (ԹԽ), ով եղել է ՄԱԿ-ի Պատերազմական հանցագործությունների դատարանի նախագահ և ճանաչված է որպես միջազգային իրավունքի եւ դրա պատմության այս ոլորտի հեղինակություն: Փաստաբան Բեննար Անդրնյանը պարոն Ռոբերտսոնին ցուցումներ տվեց առ այն, որ նա հանգի իր սեփական եզրակացություններին բոլոր իրավական եւ փաստացի հիմնահարցերի վերաբերյալ առանց հաշվի առնելու Կենտրոնի շահերը:

Պարոն Ռոբերտսոն հենց սկզբից առաջարկեց, որ դիմում գրվի՝ «Տեղեկատվության ազատության մասին ակտի» համաձայն ՄԹ կառավարության դիրքորոշման մասին տեղեկացնող բոլոր քաղաքական փաստաթղթերը ձեռք բերելու համար, եւ փաստաբան Քեյք Անանդի օգնությամբ կազմեց այն նամակները, որոնք ի վերջո վեր համեցին այս կարեւոր եւ մինչ այժմ գաղտնի փաստաթղթերը, որոնք պարոն Ռոբերտսոնը վերլուծում է իր տեսակետում: Տիկին Քեյք Անանդը, ով աշխատում է միջազգային եւ եվրոպական իրավունքի ոլորտում, օգնել է ուսումնասիրության հարցում, եւ հեղինակը նաև շնորհակալություն է հայտնում Տիկին Պենելոպե Փրայորին եւ Դաութի Մթիք Չեյմբլըրսին:

Սույն տեսակետը կարեւոր է իրավաբանական եւ պատմական գիտությունների համար՝ որպես ականավոր իրավաբանի կողմից ցեղասպանության դեմ օրենքի մեկնաբանում: Այն հատկապես կարեւոր է Բրիտանիայի քաղաքականության ու միջազգային գործերի մեջ այս երկրի հետագա ներգրավման համար եւ կծառայի որպես այնպիսի դեպքի ուսումնասիրություն, թե որքան հեշտությամբ կարող է կառավարությունը նենգափոխվել մի Արտաքին գործերի նախարարության կողմից, որը հրաժարվել է «էթիկայի նորմերից»՝ հօգուտ այն բանի, ինչը համարում է առեւտրային եւ դիվանագիտական առավելություն:

*Լուսանկարները՝*

*Շապիկ՝ Խարբերդ, պատմական Հայաստան, Օսմանյան կայսրություն, 1915թ.*

*Հայերին Սեպիրեի մոտակայքում քշում են բանա քորք զինվորների հսկողության ներքո:*

*Project SAVE Հայկական լուսանկարների արխիվ, Ուարերքառամ, Մասաշուսեթս, անհայտ նվիրատուի կողմից  
տրամադրված*

*Հեղինակի դիմանկարը՝ Զեյն Բառեմի կողմից*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	05
Ներածություն	07
Հիմնահարցը	07
Լեմկինի պատասխանը	08
ՆՍԿ-ի ներկայիս դիրքորոշումը	10
Ցեղասպանության օրենքը	14
Ցեղասպանության կոնվենցիան	14
Խմբի անդամների մասնակի ոչնչացում	15
Ցեղասպանության նպատակադրում	17
Պետության պատասխանատվություն	21
Մարդկության դեմ գործած հանցագործություններ	23
Արդյո՞ք հայկական ջարդերը կարող են որակվել որպես ցեղասպանություն	24
Հետադարձ ուժ ունենալու հիմնահարցը	24
Եղեռնի նախաշեմին	24
Տեղահանումները եւ ջարդերը	27
Արդարացն՝ թե՝ պատճառաբանություն	29
Ապացույցները	31
Արտաքին գործերի եւ Համագործակցության նախարարության քաղաքականությունը, ցեղասպանության հերքում	37
Տեղեկատվության պահանջների ազատություն	37
Քաղաքական փաստաթղթեր՝ երկու հիմնական սխալ	39
1999 թ. Լորդերի պալատի բանավեճը	42
Երեք «ժխտողական» պատմաբաններ	44
Հետազա պարզաբանումներ	51
Պառլամենտական վերջին լսումներ	54
Դառնինգ Սթրիթի Էլեկտրոնային կայքի դեպքը	59
Եզրակացություններ	62

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### **Հիմնահարցը**

1. Կասկած չկա, որ 1915 թվականին օսմանյան կառավարությունը հրաման արձակեց մոտ երկու միլիոն հայերի տեղահանման մասին Անատոլիայից ու այլ գավառներից. նրանք քայլում էին դեպի Սիրիա եւ հարյուրհազարավորները մահացան *en route* հիվանդություններից, սովոր եւ զինված հարձակումներից: Այդ տարի եղան նաև այլ վայրագություններ՝ ուղղված հայերի դեմ նրանց ռասայի եւ քրիստոնեական կրոնի պատճառով՝ սկսելով ապրիլի 14-ին մի քանի հարյուր մտավորականների Կոստանդնուպոլսում ձերբակալելուց: Երիտրուրքերի կառավարությունը մեղադրվեց այն բանի մեջ, ինչը Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարությունները համատեղ ու պաշտոնապես որակեցին որպես «մարդկության դեմ կատարված հանցագործություն»: Այս դաշնակիցները հանդիսավոր կերպով խոստացան պատժել այն նախապատրաստողներին եւ պատերազմից հետո *Սեւրի պայմանագրում* հատուկ դրույթ մտցվեց այն կիրառելու մասին: Միացյալ Թագավորությունը ձերբակալեց 67 քուք պաշտոնյաների, ովքեր կասկածվում էին վայրագությունների մասին հրամաններ արձակելու մեջ, եւ պահեց նրանց Մալթայում: Սակայն հանուն դիվանագիտական նպատակահարմարության՝ նրանք ի վերջո ազատ արձակվեցին: Մինչեւ 1946թ.-ի Նյուրնբերգի Խարտիան գոյություն չուներ որեւէ քրեական օրենք, որը պատժեր ինքնիշխան պետությունների քաղաքական եւ ռազմական դեկավարներին կրոնական կամ ռասայական պատճառներով իրենց սեփական քաղաքացիների զանգվածային սպանությունների համար: Թուրքիայում հայերի զգալի մասի ոչնչացումը Հոլոքոստին նախորդող տարիներին դարձավ հարացույց նրանց համար, ովքեր պնդում էին, թե անհրաժեշտ է սահմանել ցեղասպանություն կոչվող հանցագործություն. սա ընդունվեց 1948թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Յեղասպանության կոնվենցիայով: Յեղասպանության հարցերով զրադարձ գիտնականների ու պատմաբանների մեծ մասը եւ շատ եվրոպական պառլամենտներ հայերի ճակատագիրը նկարագրում են որպես «ցեղասպանություն», սակայն Բրիտանիայի վերջին կառավարությունները, երբ հարցվում են պառլամենտի անդամների կողմից, կտրականապես հրաժարվում են այդ անելուց:
2. Համաձայն *Տեղեկատվության ազատության ակտի*՝ Արտաքին գործերի եւ համագործակցության հարցերով նախարարությունից (ԱԳՀՀՆ) ձեռք բերվեցին մինչ այժմ գաղտնի պահպող այն քաղաքական փաստարդերն ու հուշագրերը, որոնցում պաշտոնյաները առաջարկություն էին տալիս եւ կազմում այս հերքումները: Հայկական

# ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թագուհու խորհրդական Ձեռքի Ռուսական Հանդիպումը՝ 9 հոկտեմբերի, 2009

Կենտրոնն ինձ հանձնարարել է քննել Բրիտանիայի կառավարության դիրքորոշումը, երբ նրանք իրաժարվում են ընդունել, որ 1915-16 թթ. հայերի զարդերը հավասարազոր են ցեղասպանության, եւ արդյո՞ք այդ դիրքորոշումն ընդունելու հիմքերն օրինական են ու միջազգային իրավունքին համապատասխան:

3. Վերջին տասնամյակի ընթացքում Բրիտանիայի կառավարության անփոփոխ մոտեցումը, երբ էլ որ այս հիմնահարցը բարձրացվել է, անկախ նրանից՝ դա եղել է նախարարական հարցմամբ նախաձեռնված պառամենտական բանավեճ, թե դիվանագիտական փոխանակումների ժամանակ՝ եղել է այն, որ 1915թ. իրադարձությունները նկարագրվել են որպես «ողբերգություն» եւ հայտարարվել է, թե «այնպիսի անհերքելի ապացույցների բացակայության պատճառով, որոնք ցույց կտային, որ օսմանյան վարչակարգը հատուկ որոշում էր կայացրել վերացնելու այն ժամանակ իր տիրապետության տակ գտնվող հայերին, Բրիտանիայի կառավարությունները չեն ճանաչել 1915 եւ 1916 թվականների իրադարձությունները որպես «ցեղասպանություն»:
4. Այս բանաձեւն առաջին անգամ ծեւակերպվել է Բարոնուի Ռամսեյի՝ Լորդերի պալատում կառավարության խոսնակի կողմից 1999թ. ապրիլի 14-ի մի քննարկման ժամանակ: Ընդամենը վերջերս դրա արձագանքը եղել է Լորդ Մելլոր-Բրաունի կողմից տրված 2008թ. փետրվարի Լորդերի պալատի գրավոր պատասխանում, երբ Նորին Մեծության կառավարության (ՄՍԿ) անունից նա պատասխանեց այն հարցին՝ արդյոք կառավարությունը կճանաչի 1915թ. հայերի ցեղասպանությունը:

«Այս հարցում կառավարության դիրքորոշումը հայտնի է վաղուց: Կառավարությունը գիտակցում է պատմության այս ահավոր հատվածի նկատմամբ զգացողությունների ուժգնությունը՝ եւ 1915-1916թթ. կոտորածները համարում է ողբերգություն: Այնուամենայնիվ, ոչ մերկային, ոչ էլ նախորդ կառավարությունները չեն կարծում, որ առկա ապացույցներն այնքան անհերքելի են, որպեսզի մեզ համոզեն, թե այդ իրադարձությունները պետք է որակվեն ցեղասպանություն՝ համաձայն 1948թ. ՄԱԿ Ցեղասպանության կոնվենցիայի»<sup>1</sup>:

## Լեմկինի պատասխանը

5. Այս պատասխանն անշուշտ կապշեցներ Ռաֆայել Լեմկինին՝ Ցեղասպանության կոնվենցիայի ճարտարապետին, քանի որ նա մտածում էր հենց հայկական զարդերի

<sup>1</sup> Lord Malloch-Brown, Hansard, Written Answers, 4 March 2008, Col WA 165:

մասին, երբ ստեղծեց “genocide” (ցեղասպանություն) բառը, որը լատիներեն “geno” (նշանակում է «ռասա» կամ «ցեղ») եւ “cide” (“caedere”, այսիմքն՝ «սպանություն» բարից) բառը: Նա մտածում էր այդ մասին այն ժամանակից, ինչ կարդացել էր Սովորութելերյանի դեպքի մասին, ում ամբողջ ընտանիքը սպանվել էր ջարդերի ժամանակ, եւ ով հանուն վրեժի սպանեց Թալեաթ փաշային՝ Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախկին նախարարին, ով առաջին հերթին է պատասխանատու համարվում այդ ջարդերի համար: 1923թ. Գերմանիայում տեղի ունեցող Թելերյանի դատավարության ժամանակ նրա օգտին բերված ապացույցները համոզեցին Լեմկինին, որ հայերին տեղահան անելու բուրքական իշխանությունների նպատակն էր ոչնչացնել նրանց որպես ազգ, սակայն նա չցանկացավ հավանություն տալ մի միայնակ վրիժառուի, ով գործել էր որպես «մարդկության խիղճը պաշտպանող իրավապաշտպան»<sup>2</sup>: Նա ուսումնասիրեց Քրիտանիայի ձախողված դատավարությունը Մալթայում ընդունվեց «Երիտասարդ Թուրքերի» առաջնորդների եւ այն իրավաբանական բարդությունները, որ ծագել էին՝ կապված այն փաստի հետ, որ այն ժամանակ գոյություն չուներ միջազգային օրենք, չկար ոչ մի իրավական հիմք՝ հետապնդելու որեւէ օտարերկրյա կառավարության պաշտոնյայի՝ իրենց քաղաքացիների մահը կազմակերպելու համար:

6. Այս թեմայի շուրջ Լեմկինի առաջին գեկույցը՝ գրված 1933թ. Մադրիդում կայացած մի համաժողովի համար, պնդում էր, որ աշխարհը կարիք էր զգում մի նոր օրենքի, որը կարգելեր ուսայական եւ կրոնական մահացու ելք ունեցող ճնշումները՝ նախազուշացնելով, որ անհրաժեշտ էր, որպեսզի կանխվեր հայերի օսմանյան սպանությունը այլ երկրներում որեւէ այլ ժամանակ: Կարծես կանխազգացում ունենալով՝ նա ուշադրություն էր իրավիրում Հիտլերի իշխանության գալուն, սակայն այս նոր օրենքի՝ նրա առաջին եւ հետագա նախագծերն անընդհատ անդրադառնում էին հայերի ճակատագրին. ապացույցները, նրա կարծիքով, հստակ էին: Այս հանցագործության համար, որը Լեմկինը ցանկանում էր՝ աշխարհը համարեր անօրինական, իր բերած գլխավոր օրինակը մինչեւ պատերազմի սկսվելը հայկական ջարդերն էին: Նա ընդունեց նացիստական Հոլոքոստին Զերչիլի տված բնորոշումը («Մենք ականատեսն ենք մի հանցագործության, որը չունի անուն») որպես իր համար նախադրյալ՝ մի նոր հանցագործություն ընդունել տալու համար, որը 1943թ. նա անվանեց “genocide” («ցեղասպանություն»): Ցեղասպանության նրա նախավերջին օրինակը, երբ նա ճնշում էր գործադրում 1940-ականների ամբողջ ընթացքում Կոնվենցիան ընդունելու համար, միշտ եղել էն հայերը. նա սկսում էր Մարտնիսներից (չնայած կարող էր նաեւ սկսել Կարթագենի քաղաքացիներից), հետո հուգենոտները՝ Ֆրանսիայում, բողոքականները՝ Բոհեմիայում,

<sup>2</sup> See Samantha Power, *A problem from hell* (Penguin 2002) էջ 19: Եվ տես George R Montgomery, “Why Talaat’s assassin was acquitted” Current History, July 1921, էջ 551-5:

հոտտենտոտները եւ հետո հայերը, որոնց վերջիվերջոն հաջորդում էին հրեաները, զնչուները եւ նացիստների պլավոն զրիերը<sup>3</sup>: Նա հայերի դեպքը ներկայացրեց Կանադայի դեսպանին, ով նրան ծանոթացրեց դոկտոր Հ.Վ. Էվաստի՝ Ավստրալիայի Արտաքին գործերի նախարարի եւ Գլխավոր վեհաժողովի նախագահի հետ, ովքեր եւ շարունակեցին գործը: Դրան օգնեցին (դեռևս 1942թ. հրատարակված) Հիտլերի այն վատահամբավ ելույթի հաշվետվությունները, որոնք ուղղված էր նրա գեներալներին Լեհաստան ներխուժելու նախօրեին:

«Ես իմ Մահվան գումարտակներն ուղարկել եմ արեւելք՝ հրամայելով նրանց անխնա սպանել լեհական ռասային պատկանող կամ լեզվով խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այդ ձեւով մենք կշահենք այն կենսական տարածքը, որը մեզ անհրաժեշտ է: Վերջիվերջոն, ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին»<sup>4</sup>:

7. Այն, թե ինչպես էր Լեմկինը դասախոսություններ կարդում Ժնեվում ՍՍԿ-ի իրավաբանական հարցերով ենթակոմիտեի պատվիրակների համար Ցեղասպանության մասին կոնվենցիայի նախագիծը կազմելիս եւ ինչպես էր ճնշում գործադրում նրանց նկատմամբ, կասկած չի թողնում, որ Նախարանի դրույթը *inter alia*:

«Գիտակցելով, որ պատմության ողջ ընթացքում ցեղասպանությունը մեծ կորուստներ է հասցրել մարդկությանը»

Վերաբերում էր պատմության այդ՝ 1915-16թթ. հատվածին, երբ Օսմանյան կայսրությունում ապրող հայերի մոտ կեսը սովամահ արվեցին կամ կոտորվեցին: Իսկապես, Կոնվենցիայի առաջին դեպքի մեկնաբանության ժամանակ Միացյալ Նահանգների կառավարությունը Սիցազգային դատարանի առջեւ հաստատեց, որ «քուրքերի կողմից հայերի ջարդերը ... ցեղասպանության հանցագործության ակնառու օրինակներից» մեկն է<sup>5</sup>:

## ՆՍԿ-ի դիրքորոշումն այդ ժամանակ

8. ՆՍԿ-ի կողմից այդ իրադարձություններին տրված ներկայիս որակավորումները՝ որպես «ողբերգություն», կայշեցնեին ՆՍԿ-ի դեկավարներին 1915թ. եւ հետպատերազմյան

<sup>3</sup> Տես Samantha Power, *A problem from hell* (Penguin 2002) էջ 54-5:

<sup>4</sup> Այս դիտողությունը, որը բարգմանվել էր 1939թ. Ծովակալ Կանարիսի կատարած գրառումներից, հայտնվեց CP Lochner, *What about Germany* (New York: Dodd Mead) 1942Ա.: Մեկ այլ, ավելի ծանրակշիռ քարզմանություն ներկայացված է Փաստարդեր Բրիտանիայի արտաքին քաղաքականության մասին 1919-1939թթ., 3-րդ շարք, 9 հատորով (HMSO 1949-1955թթ.) հասոր 7 էջ 258, հրատարակված ՄԹ Արտաքին գործերի նախարարության կողմից:

<sup>5</sup> William A Schabas, *Genocide in International Law* (2<sup>nd</sup> edition, Cambridge 2009) էջ 19, հղում 12:

համաժողովների ժամանակ, ովքեր դիտարկում էին դրանք ոչ թե որպես ողբերգություն, այլ որպես խկական հանցագործություն: 1915թ. մայիսին Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի համատեղ հայտարարությունը պնդում էր, որ օսմանյան կառավարության բոլոր անդամները պետք է անձնական պատասխանատվության ենթարկվեին մի բանի համար, որն առաջին անգամ որակվեց որպես «մարդկության դեմ հանցագործություն»<sup>6</sup>: Լորդ Բաֆուրը՝ արտաքին գործերի նախարարը, ասաց, որ «զարդերը Սիրիայում եւ Հայաստանում շատ ավելի սարսափելի են, քան այդ երկրներում պատմության արձանագրած որեւէ այլ սպանող»<sup>7</sup>, իսկ կառավարությունը, ի պատասխան Լորդերի պալատում հնչած բուրքերի նկատմամբ մեղադրանքներին, թե նրանք շարունակել են «կանոնավոր վերացնել մի ամբողջ ռասա իրենց տիրույթներից»<sup>8</sup> խոստացավ, որ «եթք հատուցման ժամանակը զա, այն անհատները, ովքեր արագացրել կամ մասնակցել են այս հանցագործություններին, չեն մոռացվելու»<sup>9</sup>: Լորդ Չորջը՝ այն ժամանակվա վարչապետը, չմեղմացրեց իր խոսքերը, եթք վերիիշեց այն ժամանակվա իր տեսակետը.

«Այս զազանությունների պատճառով, որոնք գրեթե հավասարը չունեն բուրքական կառավարման սեւ ցուցակում, հայկական բնակչության թիվը պակասեց մեկ միլիոնից ավելիով... Եթե մեզ հաջողվեր պարտության մատնել այս անմարդկային կայրությանը, ապա խաղաղության այն կարենոր պայմանը, որ մենք կսահմանեինք, կլիներ Հայկական դաշտավայրերի մելքնդմիշտ գրավաթափումը արյունալի կառավարությունից, որը նրանց անարգել էր բուրքերի ստորությունների շնորհիվ»<sup>10</sup>:

Ինչպես Ուինսթոն Չերչիլը, ով ոչ պակաս պատմաբան էր, դա դիտարկում էր.

«1915թ. բուրքական կառավարությունը սկսեց եւ անողորարար շարունակեց հայերի վատահամբավ համբարիանուր ջարդերն ու տեղահանումները... ամբողջ տարածքներ ծածկվեցին մեկ վարչական հոլորոսով... ոչ մի խելամիտ պատճառ չկար կարծելու, որ այս հանցագործությունը պլանավորվել ու իրականացվել էր քաղաքական նպատակներով»<sup>11</sup>:

9. Փարիզի Խաղաղության համաժողովում Բրիտանիան պահանջեց մեղադրական որոշում կայացնել հայկական ջարդերի պատասխանատուների նկատմամբ: 1919թ. հունվարին

<sup>6</sup> Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի համատեղ հայտարարությունը, 28 մայիսի 1915թ.: Միացյալ ազգերի կազմակերպության Պատերազմական հարցերով հանձնաժողով, Լոնդոն 1948, էջ 5:

<sup>7</sup> Taner Akçam, *A Shameful Act* (Constable, 2007), էջ 234:

<sup>8</sup> FO 371/2488/172811, 17 նոյեմբերի 1915 թ., Լորդ Ուիլյամս:

<sup>9</sup> FO 371/2488/148483, 6 հոկտեմբերի 1915թ.:

<sup>10</sup> Lloyd George, *Memoirs of the Peace Conference* (New York: Yale University Press, 1939) հատոր 8 էջ 811-2:

<sup>11</sup> Winston Churchill, *The World Crisis: The Aftermath* (London 1929) էջ 405:

հիմնվեց *Պատերազմի հեղինակների պատասխանատվության հանձնաժողով*, որը խորհուրդ տվեց դատական կարգով հետապնդել թուրք դեկավարներին իրենց իսկ քաղաքացիների դեմ իրենց իսկ ինքնիշխան տարածքում պատերազմի ժամանակ կատարած հանցանքների համար, քանի որ դրանք «պարզ բարբարոսություն» էին եւ կիրառվել էին «ահարեկչական համակարգի» կողմից: *Վերսալի պայմանագրում Դաշնակիցներն իրավունք վերապահեցին պատասխանատվության կանչել պատերազմի հանցագործներին, իսկ Մելրի պայմանագրի 230-րդ հոդվածը հայտարարում էր.*

*«Թուրքական կառավարությունը պարտավորվում է դաշնակից ուժերին հանձնել այն անձանց, ում հանձնումը անհրաժեշտ կհամարվի որպես այն ջարդերի պատասխանատուների, որոնք կատարվել էին պատերազմական իրավիճակում Թուրքական Կայսրության մաս կազմող տարածքում: Դաշնակից ուժերն իրավունք են վերապահում կազմավորել Տրիբունալ, որը կդատի այն անձանց, ում ներկայացվել է նման մեղադրանք, իսկ թուրք կառավարությունը պարտավորվում է ճանաչել նման Տրիբունալը»:*

Համաձայն 228-րդ հոդվածի՝ թուրքական կառավարությունը պարտավորվում էր ներկայացնել այն բոլոր փաստաբերքերը, որոնք կարող էին «համարվել անհրաժեշտ՝ ապահովելու համար ներկայացված հանցանքի ողջ իսկությունը, օրինազանցների դատական հետապնդումը եւ պատասխանատվության արդար ընկալումը»:

10. Չնայած Ֆրանսիան եւ Իտալիան շուտով ճանձրացան միջազգային արդարադատության այս նորաթուխ պարտականությունից եւ հասկացան Աթարուքի իշխանության ներքո գտնվող նոր Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների առավելությունը, Բրիտանիան պահպանեց վայրագությունների հեղինակներին արդարադատության ձեռքը հանձնելու իր խոստումը: Չքավարարվելով Երիտասարդ թուրքերի ներքին դատավարություններով, որոնք անցկացվում էին Կոստանդնուպոլսում (տե՛ս ստորեւ, կետ 42) 67 մեղադրյալներ բերվեցին Մալթա (որը գտնվում էր գաղութային իշխանության ներքո)` դատի ենթարկելու համար: Մակայն իրենց իսկ քաղաքացիներին սպանելու համար պաշտոնյաներին դատական կարգով պատասխանատվության ննջարկելու իրավաբանական բարդությունները հուզում էին Բալֆուրին. 1918թ. դեկտեմբերի Դաշնակիցների մի համաժողովում նա ասաց, որ հայկական ջարդերի պատրաստողները

*«իսկստ ասած ոչ մի կոնկրետ իրավաբանական խախտում չէին կատարել... անհրաժեշտ էր մտածել, թե ինչպես կարելի էր հասնել նրանց: Թալեաթն ասել էր, թե հայերը մշտապես խնդիրներ էին հարուցում: Նա որոշել էր ազատվել նրանցից, եւ, արդյունքում, զանգվածաբար ոչնչացրել էր նրանց: Դա սուկ քաղաքականություն էր, իսկ օրինազանցները չէին կարող դատվել*

ուազմական դատարանի կողմից,քանի որ չէին կատարել ոչ մի իրավական խախտում»<sup>12</sup>:

11. Ի վերջո, միջազգային արդարադատության այս առաջին ազնիվ մղումը սպառեց իրեն, եւ Մալթայում կալանքի տակ պահվող թուրք կասկածյալները փոխանակվեցին բրիտանացի գերիների հետ, ովքեր իրականում Կոստանդնուպոլսում պահվում էին իբրեւ պատանդներ («Սա որոշ առումով նշանակում է տեղի տալ շանտաժին, սակայն կարելի է արդարացնել ներկայիս\_պայմաններով». Եղավ ԱԳՀՀՆ առաջարկը՝ ընդունել այս փոխանակումը<sup>13</sup>): Ճիշտ է, որ խնդիրներ եղան՝ կապված որոշ անհատների դեմ ապացույցների հավաքման հետ, Սեւրի պայմանագրով պահանջված թուրքերի համագործակցությունը չէր երեւացել, իսկ հետաքննողները մուտք չունեին օսմանյան արխիվներ: Իսկ ժամանակի ընթացքում հույների նկատմամբ Աքարուրքի տարած հաղթանակը ստիպեց դաշնակիցներին հրաժարվել Սեւրի բոլոր պատմիչ դրույթներից 1923թ. *Լոզանի պայմանագրով*<sup>14</sup>: Սակայն, ինչպես երեւում է Բալֆուրի ճառից, ոչ մի դժվարություն չնկատվեց ջարդերի փաստն ապացուելու հարցում կամ այն հարցում, որ դրանք ունեին ռասայական դրդապատճառներ: Ուստի հարցը, որ այժմ պետք է տրվի, հետևյալն է՝ արդյո՞ք, անկախ անհատական մեղավորությունից, հենց ջարդերն ինքնին բավարարում էին 1948թ. Յեղասպանության կանխարգելման եւ պատմի մասին կոնվենցիայի սահմանած չափորոշչին, եւ արդյո՞ք մեկ պետություն, այլ ոչ թե անհատ պաշտոնյա, կարող է պատասխանատվության ենթարկվել հանցագործության համար:

<sup>12</sup> CAB 28/5 IC-99, Դաշնակիցների կոնֆերանս, Լոնդոն 2 դեկտեմբեր 1918, մեջբերումը Garry Bass, *Stay the Hand of Vengeance* (Princeton University Press, 2000), էջ 131:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 142:

<sup>14</sup> Աքարուրքն ընդունեց, որ ջարդերն «ամորքայի գործողություն» էին, սակայն հերքեց թուրքերի պատասխանատվությունը այն բանի հիման վրա, որ դրանք հրահանգավորված չէին. այս դիրքորոշումը Թուրքիան այսօր շարունակում է պահել՝ Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի համաձայն դատական կարգով հետապնդման ենթարկելով այն անձանց, ովքեր վկայակոչում են ցեղասպանությունը: Լոզանի պայմանագիրն ուներ մի «Համաներման հայտարարություն» 1914թ. օգոստոսի 1-ից մինչեւ 1922թ. նոյեմբերի 20 կատարված բոլոր հանցագործությունների համար՝ չնայած նման համբնդիանուր համաներումներն այժմ չին ընդունվի միջազգային իրավունքի կողմից. տե՛ս Geoffrey Robertson, *Crimes Against Humanity* (3<sup>rd</sup> Edition, Penguin 2006) էջ 296-312: Տե՛ս նաև Սեղադրողն ընդդեմ Կոնկեսայի, SCSL-04-14-AR72, Լում Աքրորդի համաներման մասին որոշում, 25 մայիս 2004թ., դատավոր Ռոբերտսոնի կարծիքը (Սիեռա Լիոնեի հասուկ դատարան):

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

### ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

12. 1948թ. Ցեղասպանության կանխարգելման եւ պատժի մասին կոնվենցիայի 1-ին հոդվածը պարզապես ասում է, որ «ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվել է խաղաղ ժամանակ, թե պատերազմի ժամանակ, հանցագործություն է՝ համաձայն միջազգային իրավունքի»: Այս պայմանագիրը վավերացվել է այնքան շատ երկրների կողմից, որ այժմ այն արդեն համարվում է *համընդհանուր օրենք/jus cogens*՝ ընդունված ժամանակակից միջազգային իրավունքի մաս, որը պարտադիր է բոլոր պետությունների համար (անկախ նրանից՝ նրանք վավերացրել են կոնվենցիան, թե ոչ) եւ պահանջում է նրանցից դատապարտել ցեղասպանության գործողությունները: Ինչպես Միջազգային դատարանը (ՄԴ) Ցեղասպանության կոնվենցիայի վերապահումների իր որոշման մեջ բացատրեց, կոնվենցիայի սկզբնավորումը ցույց է տալիս, որ ՄԱԿ-ը նպատակ ուներ դատապարտելու եւ պատժելու ցեղասպանությունը՝ որպես «հանցագործություն՝ համաձայն միջազգային իրավունքի..., որը ներառում է ամբողջ մարդկային խմբերին գոյություն ունենալու իրավունքից զրկելը, մի զրկում, որը ցնցում է մարդկության խիդճը եւ ավարտվում մարդկության մեծ կորուստներով, եւ որը հակառակ է բարոյական օրենքներին ու ՄԱԿ-ի ոգուն եւ նպատակներին»<sup>15</sup>:

13. Կոնվենցիայի Հոդված II ասում է, որ.

«ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից յուրաքանչյուրը, որը կատարվել է ոչնչացմելու նպատակով՝ ամրողովին կամ մասամբ, ազգային, էքնիկ, ուսսայական կամ կրոնական խումբ՝ կատարված որպես այլպիսին՝

- ա) Խմբի անդամների սպանություն;
- բ) Խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքների պատճառում,
- գ) Խմբին կյանքի այնպիսի պայմանների դիտավորյալ պարտադրում, որոնք հաշվարկված են հասցմելու նրան ֆիզիկական ոչնչացման՝ ամրողովին կամ մասամբ,
- դ) այդ խմբի ներսում ծնունդների կանխմանն ուղղված միջոցառումներ;
- ե) Խմբի երեխաների ստիպողական տեղափոխում մեկ այլ խումբ»:

14. Ցեղասպանության իրավական հասկացությունը լիովին չի ընկալվում այն պատմաբանների եւ ԱԳՀՀՆ պաշտոնյաների կողմից, ովքեր հրաժարվել են կիրառել այն հայկական ջարդերի նկատմամբ: Այս հանցագործությունը, ինչպես եւ մնացած բոլոր լուրջ

<sup>15</sup> Վերապահումներ Ցեղասպանության գործով կոնվենցիայի վերաբերյալ (1951թ.) ՄԴ գել. 15, էջ 23:

հանցագործությունները, ունի փաստացի տարր (*actus rea*) եւ մտավոր տարր (*mens rea*): Փաստացին ներառում է որեւէ խմբի անդամներին վճաս հասցնելը՝ ֆիզիկական կամ մտավոր, որը նշանակետ է դարձել ազգային, էքնիկ կամ կրոնական խորականության պատճառների հիման վրա: Խիստ կարեւոր է, որ այն ներառում է «*Խմբին կյանքի այնպիսի պայմանների դիտավորյալ պարտադրում, որոնք հաշվարկված են հասցնելու այն ֆիզիկական ոչնչացման՝ ամրողովին կամ մասամբ»>, եւ հենց այդ Հոդված II-ը (գ) կազմելիս շատ հնարավոր է, որ մտածել են հայերի ճակատագրի մասին: Օսմանյան կառավարությունը հրամայել էր նրանց տեղահան անել այնպիսի պայմաններում, որ, անշուշտ, նրանք մատնվելու էին հիվանդությունների, սովոր եւ «Հատուկ կազմակերպության» (*Teshkilat-I Mahsusa*) ինքնակամ զինյալների եւ ասպատակող քրոների մահացու հարձակումներին: Ինչպես ասվում է ցեղասպանության վերաբերյալ առաջատար դասագրքում.*

«1915թ. բուրք կառավարողների վերաբերմունքը հայերի նկատմամբ օրինակ է հանդիսանում կյանքի պայմաններ պարտադրելու դրույթը քննարկելիս: Այս հանցագործությունները հաճախ են նկարագրվել որպես «տեղահանումներ»: Սակայն դրանք շատ ավելին են, քան պարզապես արտաքսումը կամ տեղափոխումը, քանի որ տեղահանումն ինքնին ներառում է հիմնարար մարդկային անհրաժեշտություններից զրկելը, ինչի արդյունքում շատերը մահացան հիվանդություններից, թերսնումից եւ ուժասպառությունից»<sup>16</sup>:

## Խմբի անդամների մասնակի ոչնչացում

15. Պարտադիր չէ, որ նպատակը լինի ողջ խմբի ոչնչացումը. բավարար կինի դրա աշխարհագրականորեն առանձնացող մի մասը, նույնիսկ մի փոքր մասը: (Այսպիսով՝ ՄԴ-ն որոշել է, որ Բոսնիայում, ընդհանուր առմամբ, ցեղասպանություն չի կատարվել, այլ միայն Սրեբրենիցայում՝ սպանելով 7.000 տղամարդ ու տղա եւ տեղահանելով 25.000 կին ու երեխա, ովքեր բնակվում էին այդ տարածքում<sup>17</sup>): Նախկին Հարավալավիայի հարցերով միջազգային տրիբունալը (ՀՀԱՏ) ուսումնասիրեց պահանջը, թե պետք է լինի որեւէ խումբ «ամրողովին կամ մասնակիորեն» ոչնչացնելու մտադրություն Կոշտիչի դեպքում, եւ եկավ այն եզրակացության, որ մտադրությունը ոչնչացնելու մի որեւէ խումբ որեւէ սահմանափակ աշխարհագրական տարածքում, ինչպես օրինակ մի երկրի առանձին շրջանում կամ

<sup>16</sup> William A Schabas, *Genocide in International Law* (2<sup>nd</sup> edition, Cambridge 2009), էջ 192-3:

<sup>17</sup> Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ պատժի մասին կոնվենցիայի կիրառում (Բոսնիան եւ Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի եւ Մոնտենեգրոյի) Գործ 91, ՄԴ դատավճր 26 փետրվարի 2007թ.:

քաղաքում, կարող է բնութագրվել որպես ցեղասպանություն<sup>18</sup>: Ինչպես նշում է Շարասը (Ցեղասպանությունը միջազգային իրավունքում):

«...որեւէ մայրցամաքում, կամ երկրում, կամ վարչական միավորման մեջ կամ նույնիսկ քաղաքում որեւէ խմբի բոլոր անդամներին ոչնչացնելը կարող է բավարարել 3-րդ հոդվածի «մասնակիորեն» պահանջը: Խորքական կառավարությունը թիրախ էր ընտրել հայերին իր իսկ սահմանների ներսում, այլ ոչ թե Սփյուռքում»<sup>19</sup>:

16. Պահանջն այն է, որ «մասը» պետք է լինի առանձին սահմանվող մաս կամ էլ ամբողջի գգալի մաս (ՀՀՍՏ Բունիան ընդդեմ Մերքիայի գործում իր որոշման մեջ համարել է, որ «գգալի» մասը պետք է հանդիսանա թիրախ): Կասկած չկա, որ բոլոր հայերը արեւելյան գավառներում, ներառյալ Անատոլիայում (մոտ 1.5 միլիոն) հանդիսանում էին տեղահանումների թիրախ, եւ մոտ 800.000 մարդ սպանվել է, (հաշվարկները 600.000-ից հասնում են մինչեւ 1.2 միլիոն մահացածների): Ամեն դեպքում, որ հաշվարկն էլ որ ընտրվի, սա կազմում է հայերի մի գգալի մաս (ընդհանուր առմամբ, 2 միլիոն), եւ, անշուշտ, եւս հարյուրհազարավոր մարդիկ ֆիզիկապես եւ/կամ հոգեբանորեն վիրավորվել էին: Քավականին ապացույց կա, որ հենց հայերն են հանդիսացել թիրախ, այսինքն՝ որպես ազգային խումբ, այլ ոչ թե զուտ այն բանի համար, որ նրանք քրիստոնյա էին<sup>20</sup>:
17. Ուուանդայի հարցերով միջազգային տրիբունալի (ՈՀՍՏ) Ակայեսուի գործում Վերահսկիչ պալատը (ՎՊ) որոշեց, որ «խմբին կյանքի այնպիսի պայմանների դիտավորյալ պարտադրում, որոնք հաշվարկված են հասցնելու նրան ֆիզիկական ոչնչացման՝ ամրողության կամ մասսամբ» դրույթը ներառում է մարդկանց մի խմբի «համակարգված արտաքսում տներից»<sup>21</sup>, ինչպես օրինակ՝ այնպիսի տեղահանման մասին հրամանները, որոնց ենթարկվեցին հայերը 1915թ.: Կայիշենա եւ Ուոզինդանա գործի դեպքում գտան, որ այն նաև ներառում է «կյանքի համար անհրաժեշտ միջոցներից, ինչպես օրինակ՝ սննդից կամ բժշկական ծառայությունից, մտադրված զրկելը»<sup>22</sup> (կրկին, սա 1915թ. տեղահանմանը բնորոշ գիծ էր, եւ ընդունվել է թուրք պատմաբանների կողմից, տես ստորեւ՝ կետ 62): Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային տրիբունալը վճռեց, որ սահմանումը նաև ընդգրկում է այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք հանգեցնում են դանդաղ

<sup>18</sup> Սեղադրողն ընդդեմ Կրիշտիչի, Գործ No. IT-98-33-T, Դատավճիռ, ՀՀՍՏ ՎՊ, 2 օգոստոսի 2001թ., կետ 589:

<sup>19</sup> Schabas, վերեւում հղում 17, էջ 285:

<sup>20</sup> Օրինակ, երբ մի գավառապետ սկսում էր սպանել բոլոր քրիստոնյաներին, ում կարողանում էր բռնել, Ներքին գործերի նախարարությունից նրան տեղեկացրին, որ ուշադրությունը սահմանափակի հայերով. տես Donald Bloxham, *The Great Game of Genocide* (Oxford, 2005) էջ 95-96:

<sup>21</sup> Սեղադրողն ընդդեմ Ակայեսուի, Գործ No. ICTR-96-T, Դատավճիռ, ՈՀՍՏ ՎՊ, 2 սեպտեմբերի 1998թ., կետեր 505-6:

<sup>22</sup> Սեղադրողն ընդդեմ Կայիշենայի եւ Ուոզինդանայի, Գործ No. ICTR-95-1--T, Դատավճիռ, ՈՀՍՏ ՎՊ, 2 մայիսի 1999, կետ 115:

մահվան, ինչպես օրինակ՝ նորմալ բնակարանային պայմանների, հազուստի, հիգիենայի բացակայությունը կամ չափազանց շատ աշխատանքը կամ ֆիզիկական հյուծվածությունը<sup>23</sup>, 1915թ. «մահվան երթերին» բնորոշ եւս մեկ զիծ:

18. Կոնվենցիայի 3-րդ հոդվածը ընդլայնում է ցեղասպանության սահմանումը մինչեւ դավադրություն (պայմանավորվածություն մասնակցելու ցեղասպանության գործողությանը), *ցեղասպանություն գործելու իրակրում* (օրինակ՝ Ռուսական ռազմի հաղորդումների միջոցով կատարված հանցագործությունը. «Գերեզմանն ընդամենը կիսով չափ է լի, ո՞վ կօգնի մեզ այն լրիվ լցնել») եւ *«հանցակցություն»* ցեղասպանությանը՝ մի հասկացություն, որը ներառում է ոչ միայն օգնելն ու դրդելը, այլև «փաստից հետո հանցակից լինելը», այսինքն՝ օգնությունը այն կոծկել կամ օգուտներից շահի ստացումը: ՄԴ-ն գտավ, որ Սերբիան խախտել էր Կոնվենցիայի համաձայն իր ստանձնած պարտավորությունները, երբ չէր կարողացել կանխել Սրեբրենիցայի ջարդերը եւ երբ չէր կարողացել դատական պատասխանատվության ենթակել ցեղասպանության համար պատասխանատուներին<sup>24</sup>:
19. Ցեղասպանության դեպքում անձեռնմխելիություն գույություն չունի. այն ընդգրկում է «սահմանադրուեն պատասխանատու իշխանավորներին, պետական պաշտոնյաներին կամ առանձին անհատներին» (Հոդված 3): Սա կարեւոր հոդված է, որովհետեւ քուրքամետ պատմաբանները եւ ԱԳՀՀ-ն կարծես թե հակված են մտածել, որ ցեղասպանություն կարելի է կատարել միայն որպես պետական քաղաքականություն, եւ պահանջում են «անհերթելի» փաստաթղթային ապացույցներ կառավարության որոշումների մասին»: Սա հանցագործության անհրաժեշտ քաղաքրիչ չէ:

## Ցեղասպանության նպատակադրում

20. Ցեղասպանության կոնվենցիան վերապահում է անում, որ ցեղասպանության հանցագործությունը պահանջում է ամբողջովին կամ մասնակիորեն որեւէ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ոչնչացման մտադրություն: *Ակայեսուի դեպքում ՌՀՍ դատաքննչական պալատը պնդեց*, որ ցեղասպանության իրագործումը պահանջում է «հատուկ մտադրության» ապացույց՝ նկատի ունենալով, որ ոճագործն ակնհայտորեն ձգտում էր իրագործել հանցագործություն որակվող գործողությունը: Վերահսկիչ պալատը նկատեց, որ խոստովանության դեպքում դժվար է ապացուցել այս մտադրությունը, եւ հետեւաբար եզրակացրեց, որ անհրաժեշտ մտադրության մասին կարելի է հետեւություն

<sup>23</sup> Սեղադրող ընդդեմ Բրդանինի, Գործ Նո. IT-99-36--T, Դատավճիռ, ՌՀՍ ՎՊ, 1 սեպտեմբերի 2004թ., կետ 691:

<sup>24</sup> Բոսնիան ընդդեմ Սերբիայի, հղում 12 վերեւում:

անել մի շարք այլ գործոններից ելնելով<sup>25</sup>: Օրինակ՝ մտադրության մասին կարելի է հետեւություն անել բառերից կամ արարքներից, կամ էլ կանխամտածված գործողության եղանակից<sup>26</sup>: Մտադրության մասին հետեւություն կարելի է անել նաև այն ընդհանուր համատեքստից ելնելով, որտեղ այլ հանցավոր արարքներ են պարբերաբար կատարվել նույն խմբի դեմ՝ անկախ նրանից՝ նման գործողությունները կատարվել են նույն ոճրագործի, թե ուրիշների կողմից: Այլ գործոններ, ինչպես օրինակ՝ կատարված վայրագությունների մասշտաբը, դրանց համընդհանուր բնույթը, որեւէ տարածքում կամ երկրում դրանց իրականացվելը, կամ դիտավորյալ եւ պարբերաբար այնպիսի գոհերին ընտրելու փաստը, ովքեր պատկանում են ինչ-որ կոնկրետ խմբի՝ բացառելով այլ խմբերի անդամներին, նույնպես կարող են հնարավորություն տալ հետեւություն անելու ցեղասպանության նպատակադրության մասին<sup>27</sup>:

21. *Ակայեսուի դեպքում ՈՀՍՍ Վերահսկիչ պալատը հետեւություն արեց, որ մեղադրյալն ուներ պահանջող մտադրությունը՝ ելնելով նրա ունեցած ելույթներից եւ Թուրքիաների դեմ դիտավորյալ ու պարբերաբար գործած վայրագություններից<sup>28</sup>: Նմանապես, Սուլեմայի դեպքում ՈՀՍՍ Վերահսկիչ պալատի արած հետեւությունը, որ կար պահանջվող մտադրություն ոչնչացնելու Թուրքիաներին, բխում էր նրանց դեմ գործած բազմաթիվ վայրագություններից, մեծածավալ հարձակումներից ընդդեմ քուրսի ցեղի քաղաքացիների եւ քուրսի խմբի անդամների դեմ գործած այլ համատարած ու պարբերական հանցագործ արարքներից<sup>29</sup>: Այս տարրերն առկա էին հայկական տեղահանումների ժամանակ: ՈՀՍՍ եւ ՀՀՍՍ նախադեպային իրավունքը, դատելով գաղտնազերծված փաստաթղթերից, կարծես թե չի ներկայացվել ԱԳՀՀ-ի ուշադրությանը:*
22. Մտավոր տարրը (*mens rea*) հաճախ դժվար է ապացուցել պետական պաշտոնյաների պարագայում (ովքեր ոչնչացնում են մեղադրական գրառումները) եւ առանձին անհատների պարագայում, երբ պետք է ապացուցել, որ նրանք ունեցել են «խտրականություն դնելու մտադրություն», այսինքն՝ գործել են զիտակցված մտադրությամբ մասնակցելու մի ծրագրի, որը նպատակ ունի ոչնչացնելու խմբին որպես այդպիսին՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն: Նման զարիութելի մտադրության շատ հազվադեպ կարելի է հանդիպել որեւէ փաստաթղթում. դրա մասին եզրահանգում պետք է անել հանգամանքներից բխող ապացույցներից: «Դժվար չէ ապացուցել զանգվածային սպանությունը՝ հաճախ լուսանկարների ապացույցներով կամ զանգվածային գերեզմանները բացելով: Ոչնչացնելով նպատակով խտրականություն դնելու

<sup>25</sup> Մեղադրողն ընդդեմ Ակայեսուի, կետ 523:

<sup>26</sup> Մեղադրողն ընդդեմ Կայիշենայի եւ Ռուզիմդանայի, կետ 93:

<sup>27</sup> Մեղադրողն ընդդեմ Ակայեսուի, կետ 523:

<sup>28</sup> Մեղադրողն ընդդեմ Ակայեսուի, կետ 730:

<sup>29</sup> Տես Antonio Cassese, *International Criminal Law* (Oxford, 2008), էջ 143:

մտադրության մասին պետք է հետեւություն անել մի շարք ապացույցներից, որ բացահայտում է խմբին ուղղված կանխամտածված չար դիտավորություն. սովորաբար կարող է լինել դրա հետապնդումների մասին որոշակի պատմություն, բացի այդ, հետապնդողներն իրենք խանդավառված կլինեն ազգայնական գաղափարներով, ինչը ստիպում է պարծենալ իրենց սեփական ռասայի գերակայությամբ եւ ստորացնում է զոհ հանդիսացող խմբին (օրինակ՝ Միություն եւ առաջադիմություն կուսակցության «Թուրքացման» ծրագիրը, որի նպատակն էր վերացնել հակառակորդ էթնիկ միավորներին, հատկապես՝ հայ եւ քորդ): Յեղասպանության այլ ցուցիչ կարող են լինել հարձակումները, որոնք ուղղված են զոհ դարձած խմբի մտավորականության կամ մշակութային առաջատարների դեմ (ինչպես օրինակ՝ մի քանի հարյուր հայ մտավորականների, իրավաբանների, գրողների եւ մշակույթի գործիչների ձերբակալումները, տեղահանումները եւ հետագա սպանությունները Կոստանդնուպոլսում 1915թ. ապրիլի 24-ին եւ դրանից անմիջապես հետո)<sup>30</sup> եւ հարձակումները խմբերի կրոնական ու մշակութային խորհրդանիշների վրա (այսուղ նշենք հայկական եկեղեցիների ավերումը):

23. Քաղաքական հուշագրից պարզ է դառնում, որ ԱԳՀՀՆ-ն եւ դրա մեջբերած բուրքամետ պատմաբանները կարծում են, թե ցեղասպանության հանցագործության համար անհրաժեշտ է կառավարության քաղաքականություն կամ որեւէ պետության կողեւկախիկ գործունեությունը: Սակայն ՀՀԱՏ բողոքարկման պալատը Յելիշիշի դեպքում որոշեց, որ «որեւէ ծրագրի կամ քաղաքականության գոյությունը հանցագործության իրավական բաղկացուցիչ չի հանդիսանում»<sup>31</sup>: Քանի դեռ «խմբին կյանքի այնպիսի պայմանների դիտավորյալ պարտադրումը, որոնք հաշվարկված են հասցնելու նրան ֆիզիկական ոչնչացման՝ ամբողջովին կամ մասամբ» ենթադրում է որոշակի հրաման, ինչը հավասարվում է «պարտադրման», Ներքին գործերի նախարարի հրամանը հայերի տեղահանման վերաբերյալ դրա վառ օրինակ է: Հաջորդը կարող է լինել կողեւկախիկ կամ կազմակերպված գործողությունը, երբ, ենթադրենք, մյուսներն ունեն ընդհանուր ծրագիր, օրինակ՝ տեղահանվողներին կողոպտել, բռնաբարել կամ սպանել: Ինչեւէ, պարտադիր չէ, որ սա լինի կառավարության քաղաքականություն. սա կարող է կատարվել իշխանությունների լուր համաձայնությամբ<sup>32</sup>: Կասկած չկա, որ 1915թ. օսմանյան կառավարությունը կամովին լուր համաձայնություն տվեց եւ նույնիսկ շարունակեց տեղահանումները՝ գիտակցելով, որ տեղահանվողների մեծ մասը մահանալու է:

<sup>30</sup> Տես Peter Balakian, *The Burning Tigris* (Heinemann 2003), էջ 212-216:

<sup>31</sup> /Մեղադրողն ընդդեմ Յելիշիշի, Դեպք No. IT-95-10-A, Դատավճիռ, ՀՀԱՏ ԲՊ, 5 հուլիսի, 2001թ., կետ 48:

<sup>32</sup> Տես Cassese, հղում 29 վերեւում, նույն տեղում 90:

24. Չի վիճարկվում, որ օսմանյան կառավարությունը պատասխանատու է «էթնիկ զսումների» հարցում, երբ հրամայեց հայերին տանել Միրիա՝ չնայած սա հավասարազոր չէ ցեղասպանության, քանի դեռ չեն պարտադրվել պայմաններ, որոնք հաշվարկված են խումբը ոչնչացնելու համար (ու անշուշտ կարող էր հավասարեցվել մարդկության դեմ հանցագործության, տես ստորեւ՝ կետ 28:) *Բոսնիան ընդդեմ Սերբիայի* իր որոշման մեջ<sup>33</sup> ՄԴ-ն նախազգուշացնում է, որ էթնիկ զսումը որոշ հանգամանքներում կարող է հավասարեցվել ցեղասպանության, սակայն ու անհրաժեշտաբար կամ միշտ չէ, որ իրականացվում է ոչնչացնելու մտադրությամբ: Դա ցեղասպանություն կհամարվի, թե ոչ, կախված է նրանից՝ արդյո՞ք նրանք, ովքեր տալիս են տեղահանման հրաման, եւ նրանք, ովքեր իրականացնում են հրամանները, գիտակցում են, որ տեղահանումների իրականացման ձեւն ու հանգամանքներն անխուսափելիորեն ներառելու են խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացում: Նույնիսկ եթե տեղահանման մասին հրամաններին ուղեկցում էին ցուցումներ, որ տեղահանվողների մասին պետք է հոգ տանել, իսկ նրանց տներն անհրաժեշտ է փակել, որպեսզի սպասեն նրանց վերադարձին, հայկական տեղահանումների պայմաններում, անիրատեսական կլիներ ենթադրել, թե նախարարական, վարչական կամ տեղական մակարդակներում կանգնած մասնակիցները չեն կանխատեսում իրենց վարած քաղաքականության մահացու հետեւանքները:
25. Ամեն դեպքում, տեղահանումների ողջ ընթացքում նրանք քաջատեղյակ էին, որ դրանք վերածվել էին մահվան երթերի: Հայերը մահանում էին հարյուր հազարներով, իսկ այն մարդիկ, ովքեր դրել էին նրանց այդ պայմանների մեջ, ոչինչ չեն անում նրանց փրկելու կամ այդ պայմաններին վերջ տալու համար, օրինակ՝ տեղահանվողներին պաշտպանելով կամ պատժելով նրանց, ովքեր հարձակում էին գործում նրանց վրա: Գոյություն ունեն բավարար ապացույցներ, որ Միություն եւ առաջադիմություն կուսակցության առաջնորդները տեղյակ էին այս ջարդերից: ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն ասում է, որ ինքը բազմիցս բողոքել է Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային նրա կառավարության «քննաջնող» քաղաքականության մասին եւ մեջքերում է Թալեաթի խոսքերը. «*Մենք արդեմ ազատվել ենք հայերի երեք քառորդից. ոչ մի հայ արդեմ չի մնացել Բիրլիստում, Վանում եւ Էրզրումում: Ասելությունը հայերի ու քուրքերի միջև այժմ այնքան ուժեղ է, որ ստիպված ենք նրանց վերջը տալ: Եթե մենք դա չանենք, նրանք կծրագրեն իրենց վրեժը*<sup>34</sup>: Պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների ժամանակակից դատավարությունների ընթացքում դեսպանի վկայության վրա կիենվեին որպես ապացույց այն բանի, որ Թալեաթը ընդունում էր, որ տեղյակ է (*mens rea*), ինչը

<sup>33</sup> Հղում 17 վերեւում, նոյն տեղում 90:<sup>34</sup> Stein Balakian (հղում 31՝ վերեւում) էջ 274 եւ Morgenthau, Henry: *Ambassador Morgenthau's Story* (New York, Doubleday 1918) էջ 333-338, 342:

բավարար է այժմ ցեղասպանության հանցագործության համար՝ համաձայն պատասխանատվության կիրառման սկզբունքի:

## Պետության պատասխանատվություն

26. Այստեղ հարցն այն չէ, թե արդյո՞ք որևէ կոնկրետ երիտրուք առաջնորդ կամ պաշտոնյա անկասկած մեղավոր էր այս հանցանքի մեջ: ՆՄԿ-ին անընդհատ հարցրել են՝ արդյո՞ք օսմանյան պետությունը գործել է ցեղասպանություն, եւ դրա պատասխանը, թե «ապացույցները անհերքելի չեն», կարծես ենթադրում է, թե ինչ-որ անհատ է դատվում, իսկ պետությունը՝ որպես այդպիսին, չի կարող գործել հանցանքը: Այսպիսին էր Սերբիայի փաստարկը ՄԴ-ի առջեւ Բունիան ընդդեմ Սերբիայի գործում, եւ դատարանը մերժեց այն՝ պնդելով, որ բոլոր պետությունները՝ համաձայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի, պարտավորված են կանխել ցեղասպանությունը, իսկ այդ պարտականությունը ենթադրում է, որ պետություններին, ինչպես նաև անհատներին արգելվում է գործել այդ հանցագործությունը<sup>35</sup>: Պետությունը պատասխանատվություն է կրում, եթե «արդյունավետորեն վերահսկում է» նրանց, ովքեր իրականացրել են ցեղասպանության գործողությունները<sup>36</sup>, չնայած ավելի փոքր՝ «ընդհանուր առմամբ է վերահսկում» չափորոշիչն է նախապատվություն ստացել պատերազմի ժամանակ գործած հանցագործությունների գծով դատարաններում<sup>37</sup>: Օսմանյան կառավարությունը, անշուշտ, 1915թ., «ընդհանուր առմամբ, վերահսկում էր» Անատոլիան եւ այդ վայրագություններն այնտեղ իրագործողներին: Այդ վերահսկողությունը բավականին արդյունավետ էր այն շրջանների մեծ մասում (եթե ոչ բոլորում), որտեղ տեղի էին ունենում սպանությունները, որպեսզի ուղղորդեր մյուս ուղղությամբ եկող թուրք փախստականների հոսքերը Բալկաններից դեպի Անատոլիա, իսկ այդ ներգաղթողների մի մասը պետք է գրադեցներ այն տները, որոնք հայերը ստիպողաբար ազատել էին:
27. Համաձայն պետության պատասխանատվության մասին օրենքների՝ ցեղասպանության համար պետության պատասխանատվությունը կարող է քննարկվել՝

<sup>35</sup> Նոյն տեղում, պարբերություն 142-179:

<sup>36</sup> Նոյն տեղում, պարբերություն 399-407:

<sup>37</sup> Մեղադրողն ընդդեմ Տաղիչի, Գործ №. IT-94-1-A, Բողոքարկման դատավճիռ, ՀՀՍՏ ԲՊ, 15 հուլիսի 1999, կետ 131. «Որեւէ ռազմական կամ ռազմականացված խմբի գործողությունները պետությանը վերագրելու համար անհրաժեշտ է ապացուցել, որ պետությունն իր ձեռքում է պահում այդ խմբի նկատմամբ ընդհանուր վերահսկողությունը ոչ միայն այդ խմբին հանդերձելու կամ ֆինանսավորելու առումով, այլ նաև դրա ռազմական գործությունն իմմնականում ծրագրելու առումով: Միայն այդ դեպքում կարելի է պետությանը միջազգայնորեն պատասխանատվության ենթարկել այդ խմբի անընդունելի վարքագծի համար: Ինչեւից, պարտադիր չէ, որ, բացի դրանից, պետությունը նաև ցուցումներ տա խմբի դեկավարին կամ անդամներին գործելու միջազգային իրավունքին հակասող որոշակի գործողություններ»:

- i. Եթե հրամաններն արձակվել եւ կիրառվել են պետական *de jure* մարմինների կողմից, այսինքն՝ նախարարների, պետական պաշտոնյաների, ոստիկանության եւ կանոնավոր բանակի սպաների կողմից,
- ii. Եթե մարդասպանությունները կատարվել են պետական *de facto* մարմինների կողմից, մասնավորապես՝ պետական գործակալությունների հետ կապված ոչ կանոնավոր մարմինների (ինչպես օրինակ՝ «Հատուկ կազմակերպության»), մահվան գումարտակների եւ զինյալների կողմից կամ
- iii. որոշակի հանգամանքներում պետական մարմինների հրամանների ներքո գործող անձանց կամ մարմինների կողմից:

Այս չափանիշները կիրառելով՝ իր առջեւ եղած ապացույցների հիման վրա (որը շատերի պնդմամբ բավարար չէր) ՄԴ-ն եզրակացրեց, որ չնայած Սրբազնիցայում ցեղասպանություն էր իրականացվել Սերբիայի Հանրապետության/ Republika Serpska բանակի կողմից, ոչ այդ կառավարությունը, ոչ էլ դրա բանակը չին գտնվում Սերբիայի բավարար վերահսկողության ներքո, ուստի դրա միջազգային պատասխանատվության հարցը չէր քննարկում: Ինչպես մենք կտեսնենք, կասկած չկա, որ տեղահանության մասին հրամանները, որոնք, ինչպես հայտնի է, պարտադրեցին հայ ժողովրդի զգալի մասի բնաջնջում ապահովող պայմաններ, տրված էին պետության այնպիսի *de jure* մարմինների կողմից, ինչպիսիք են նախարարները եւ կառավարության պաշտոնյաները, եւ որ ջարդերի մեջ ներքաշված էին Օսմանյան կայսրության թե՝ *de jure* եւ թե՝ *de facto* գործակալներ: Ավելին՝ այդ պետությունը քաջատեղյակ էր պատմական թշնամանքից, որը կարող էր պոռթկալ հայկական փոքրամասնությունների զանգվածային սպանություններով (այսինքն՝ 1894-96 եւ 1909թթ.) եւ դիտավորյալ բորբոքել էր այդ թշնամանքն իր թուրքացման ծրագրով. տեղահանությունների մասին հրամաններ արձակած պաշտոնյաները պիտի որ իմացած լինեին հավանական հետեւանքների մասին, բայց եւ այնպես ոչ մի քայլ չճենարկեցին դրանցից խուսափելու կամ տեղում պահակազոր ապահովելու համար: Նման պայմաններում, երբ մարդասպանությունները կատարվում են հանցագործ խմբերի կողմից եւ իշխանությունների գիտությամբ ու թողտվությամբ, ովքեր կարող էին, սակայն չին գործում դրանք կանխելու համար, «Քրականացման պատասխանատվության» սկզբունքները հենց իշխանություններին են պատասխանատու դարձնում հանցագործ խմբերի գործած այն սպանությունների համար, որ նրանք կանխատեսում են, սակայն չեն կանխում կամ հետագայում պատժում<sup>38</sup>:

<sup>38</sup> ԱՍՆ ընդդեմ Յամաշիտայի (1946) 927 ԱՍՆ 1:

## Մարդկության դեմ գործած հանցագործություններ

28. Նախքան շարունակելը եւ քննարկելը՝ արդյոք հայկական տեղահանումների ու ջարդերի անհերքելի փաստերը կարող են իսկապես որակվել ցեղասպանություն, անհրաժեշտ է հասկանալ, որ ցանկացած դեպքում դրանք հանդիսանում են մարդկության դեմ հանցագործություն: Այս անվանումը դաշնակիցների կողմից 1915թ. կիրառվում էր ավելի շատ որպես հռետորական, քան իրավական որակավորում, քանի որ այն ժամանակ միջազգային իրավունքը դեռ չէր մշակել քրեական իրավասության շրջանակ: Այսօր հանցագործության այս տեսակը իրավասու ձեւով սահմանված է Սիցազգային քրեական դատարանի օրենսդրական ակտի 7-րդ հոդվածում. այն ընդգրկում է քննակչության տեղահանում կամ բռնի տեղափոխում (այսինքն՝ «բռնի տեղափոխում արտաքսման կամ այլ հարկադիր գործողությունների միջոցով այն տարածքից, որտեղ նրանք օրինական հիմունքներով գտնվում են») եւ հետապնդում («հիմնարար իրավունքներից դիտավորյալ եւ խստորեն զրկում խմբի ինքնության հիման վրա», երբ նման խմբի կամ խմբավորման ինքնությունը որոշվում է «ռասայական, ազգային, էթնիկ, մշակութային (կամ կրոնական) հիմունքներով...»): Տեղահանումը կամ հետապնդումը հավասարեցվում է մարդկության դեմ կատարված\_հանցագործության, երբ ոճրագործը տեղյակ է, որ դա մասն է «մի լայնատարած կամ համակարգված հարձակման՝ ուղղված ցանկացած քաղաքացիական քննակչության դեմ»: Կասկածից վեր է, որ Թուրքիայի արեւմտյան գավառների հայ քննակչության տեղահանումները՝ կյանքի համար սպառնալիք ներկայացնող պայմաններում հավասարազոր էին այն բանին, ինչը մեր ժամանակներում, անշուշտ, կորակվեր որպես մարդկության դեմ գործած հանցագործություն: Ուստի մի՞թե անհրաժեշտ է, որ դա համապատասխանի նաև ցեղասպանության որակավորմանը: Երկու միջազգային հանցագործություններն ունեն շատ համընկնող գծեր. բոլոր ցեղասպանությունները մարդկության դեմ գործված հանցագործություններ են, սակայն մարդկության դեմ գործած ոչ բոլոր հանցագործություններն են ցեղասպանություններ. տարբերակումը պետք է դրվի այն հարցի վրա, թե արդյո՞ք ոճրագործն ունի պահանջվող ռասիստական կամ խտրականություն դնող մտադրություն՝ ոչնչացնել խումբը լրիվ կամ մասամբ: Հենց այս տարբեր է, որ դարձնում է ցեղասպանություն այդքան զարիւրելի եւ միջազգային իրավունքի մեջ նախատեսում է այնպիսի պարտավորություններ եւ պատժամիջոցներ, որոնք ավելի խիստ են, քան մարդկության դեմ գործած հանցագործությունների համար նախատեսվածները: Այս առումով՝ սույն տեսակետով քննարկվող հիմնահարցը պահպանում է իր կարեւորությունը, որը զուտ խորհրդանշական չէ:

**ԿԱՐՈՒՂ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ՑԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ ՈՐԱԿՎԵԼ ՈՐՊԵՍ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Հետադարձության հիմնահարցը**

29. Ես չեմ համարում, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան հետադարձ ուժ ունի, եւ ես չեմ ընդունում այն իրավագետների տեսակետը, ովքեր հավատացած են, թե Կոնվենցիան բացատրում էր մինչ այդ գոյություն ունեցող միջազգային իրավունքը, եւ պնդում են, թե այն կարելի է կիրառել հետադարձ ուժով<sup>39</sup>: *Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան*<sup>40</sup> սահմանում է մի կանխավարկած, որ պայմանագրերը չունեն հետադարձ ուժ, ինչը շատ ավելի խիստ է՝ կապված քրեական հանցագործության հետ, եւ ես ոչինչ չեմ գտնում հերքելու համար այս կանխավարկածը Ցեղասպանության մասին կոնվենցիայի տեքստում: Սակայն, անկեղծորեն ասած, «ցեղասպանություն» տերմինը կարող է կիրառվել Կոնվենցիայի ընդունումից առաջ կատարված ջարդերի նկատմամբ. այն մարդիկ, ովքեր դա նախագծում եւ քննարկում են, անընդհատ խոսում են այլ պատմական իրադարձությունների մասին որպես «ցեղասպանություն»՝ չնայած դրանք կատարվել են դարեր առաջ (սպարտացիներից յուրաքանչյուրին մահապատժի ենթարկելը եւ Կարթագենի քաղաքացիներին բնաջնջելը ծառայում են որպես վաղ ժամանակների օրինակներ): Նախարանի պնդումը, որն ընդունում է, թե «պատմության բոլոր ժամանակահատվածներում ցեղասպանությունը մեծ կորուստներ է հասցել մարդկությանը», բավարար հիմք է, որպեսզի այդ անվանումը կիրառվի մինչ Կոնվենցիան տեղի ունեցած այն իրադարձությունների նկատմամբ, որոնք բավարարում են դրա չափանիշներին:

**Ցեղասպանության նախաշեմին**

30. Օսմանյան կայսրությունում կար մոտ երկու միլիոն հայ, ովքեր հիմնականում բնակվում եին Կայսրության արեւելյան գավառներում: Նրանց հանդուրժում են, առանց ուազմական կամ քաղաքական իշխանությունը կիսելու հնարավորություն տալու, մինչեւ Կայսրությունը դարձավ «Եվրոպայի հիվանդը» 19-րդ դարի վերջում՝ Սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք (ով վարչապետ Գլադսթոնի կողմից դատապարտվել է որպես «մեծագույն մարդասպան»

<sup>39</sup> օրինակ՝ Alfred de Zayas, *Memoranda on the Genocide Against the Armenians and the Application of the 1948 Genocide Convention*:

<sup>40</sup> Պայմանագրային օրենքի Վիեննայի կոնվենցիայի 28-րդ հոդված:

1890-ականների հայերի ջարդերի ժամանակ իր խաղացած դերի համար): Նա որոշակի պատասխանատվություն է կրում պանիլամական կրքերը թեժացնելու համար (նա հայերին անվանում էր «մի այլասերված համայնք»)<sup>41</sup>: Առաջին զանգվածային ջարդերը տեղի ունեցան 1894-96թթ. եւ կատարվեցին օսմանյան ուժերի կողմից տեղի քրոների օգնությամբ: Տասնյակ հազարավոր հայեր (ոմանց հաշվարկներով՝ գոհերի թիվը վեցանիշ է) սպանվեցին այդ ժամանակահատվածում (1.200 հոգի կենդանի այրվեցին Ուրֆայի տաճարում): Նրանց քրիստոնեական եկեղեցիները կողոպտվեցին, իսկ շատերը կրոնափոխվեցին ու դարձվեցին մահմեդական (կամ որոշեցին կրոնափոխվել իրենց կյանքերը փրկելու համար): Այդ նույն ժամանակ բազմաթիվ հեղափոխական հայկական շարժումներ հայտ եկան, որոնցից ամենանշանակալին Դաշնակցական կուսակցությունն էր, որը առանձին պետության եւ դրան ուժով հասնելու կողմնակիցն էր: Ինչեւիցե, գոյություն ունեն միանգամայն բավարար ապացույցներ այն մասին, որ 1894-96թթ. բռնության դրդապատճառները ռասայական ու կրոնական ատելությունն էին, ինչը խրախուսվում էր օսմանյան կառավարության կողմից եւ սրվում էր զինված հայկական դիմադրության պատարիկներով: Անկասկած, այսպիսին էր Բրիտանիայի դեսպանի եւ այն ժամանակ նրա փոխարքանությունների տեսակետը, ովքեր որպես բողոք օսմանյան իշխանությունների դեմ՝ դուրս եկան Բրիտանիայի կառավարությունից՝ կասկած չունենալով նրանց մեղավորության մեջ<sup>42</sup>: 1909թ. Աղանայում տեղի ունեցան 25.000 հայերի հետագա ջարդեր՝ հիմնականում կատարված բանակի զորաջոկատների կողմից. այս անգամ դա մեղադրվեց այդ ժամանակվա կառավարության կողմից, սակայն շատ քերը պատճվեցին: Այս ջարդերն ընդգծեցին երկրում գոյություն ունեցող ռասայական ու կրոնական ատելության ողջ խորությունը եւ այն, որ յուրաքանչյուր կառավարություն պարտավոր է թույլ չտալ դրանց կրկին սանձազերծումը:

31. Մինչդեռ այդ նույն ժամանակ երիտրուրքերի շարժման ուժն աճում էր Միություն եւ առաջադիմություն կուսակցության միջոցով: Սկզբնական շրջանում քաղաքականապես առաջադիմ լինելով՝ Միություն եւ առաջադիմություն կուսակցությունն այնուամենայնիվ մշակեց այնպիսի ռասայական գերակայության տեսություններ, որոնք գործնականում կապված են ցեղասպանության հրահրման հետ: Օրինակ՝ այն ռասխստական գաղափարը, թե թուրանյան ազգությունը գերակայության խորհրդանիշ է, բացառում էր ոչ մահմեդականներին՝ հատկապես քրիստոնյաներին, փոքրանասնություն կազմող խմբերին, ինչպես օրինակ՝ հայերին հասարակայնորեն նվաստացնելը («պալարախսի մանրեներ»), ծայրահեղ ազգայնական եռանդը, որը պահանջում էր «ռազմիկ ազգին»

<sup>41</sup> Տե՛ Michael Oren, “The mass murder they still deny”, *The New York Review of Books*, հատոր 53 No 8, 10 մայիսի 2007թ.:

<sup>42</sup> Մեջքերված Balakian, հղում 31 վերեւում, էջ 55-61: Բրիտանացի Սիստոնները ջարդերի մեջ տեսել են հակաքրիստոնեական դրդապատճառներ, տե՛ս էջ 82 և 112:

կանխել «քուրքական ռասայի քայլայումը», «քուրքականացման» ծրագիրը լեզվի եւ մշակոյթի ոլորտում, հայկական կազմակերպությունների արգելումը: 1913թ. հունվարի 23-ի պետական հեղաշրջումից հետո Երիտասարդ Թուրքերը կառավարությունում ստացան տեղեր, իսկ 1914թ. սկզբին նրանց առաջնորդներից երեքը ստանձնեցին քաղաքական վերահսկողությունը: Նրանք ստեղծեցին Թալեաթի Ներքին գործերի նախարարության առընթեր հատուկ կազմակերպություն, որն ուշադրությունը հրավիրում էր այն ազգային փոքրամասնությունների անդամների վրա, ում հավատարմությունը կասկածելի էր համարվում: Այս անգամ Բրիտանիայի դեսպանը նշում է «Թուրքիան թուրքերի համար» բռնի արշավի ի հայտ գալու մասին. «Նրանց (Երիտասարդ Թուրքերի) համար «օսման» կարծես նշանակում է «քուրք», եւ նրանց ներկայիս «օսմանացման» քաղաքականությունը նման է թուրքական համայնքում ոչ քուրք տարրերը փոշիացնելուն»<sup>43</sup>: Ամենաազդեցիկ Երիտրուք քաղաքական գործիչները՝ Թալեաթը, Քեմալը եւ Էնվեր փաշան, զբաղեցնում էին բարձր պաշտոններ եւ ձեւավորում էին քաղաքականությունը Միություն եւ առաջադիմություն կուսակցության Կենտրոնական կոմիտեի միջոցով: Նրանց բարձրագույն ազգայնականությունը ներքաշեց Թուրքիային Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Գերմանիայի կողմից: Կասկած անգամ չի կարող լինել «քուրքականացման» արշավի գոյության կամ այն ռասայական ատելության հարցում, որ այն բորբոքում էր հայերի դեմ: Կառավարական հրամանագրերը զրկում էին հայերին իրենց սեփականությունից (համարելով այն լրված) եւ հրահանգում էին բանկերին հայկական ակտիվներն ուղղել դեպի պետության կողմից հիմնված «լիկվիդացիոն հաշիվները»<sup>44</sup>: Էնվեր փաշայի տված հրահանգներում, որոնք արվել էին հեռագրերի միջոցով, ասվում էր, որ մահմերականների կողմից զրաված գյուղերը, գետերը, քաղաքները պետք է վերանվանվեն, եթե դրանք կրում էին քրիստոնեական կամ հայկական անուններ<sup>45</sup>:

32. Գոյություն ունեն զգալի ապացույցներ, որ 1914թ. սկսած՝ Միություն եւ առաջադիմություն կուսակցության Կոնգրեսը մշակել է «քուրքականացման» հռետորությունը, ինչը հարթեց ցեղասպանության ուղին: Թաներ Ակչամը, օրինակ, պնդում է, որ 1914թ. հունվարին Էնվերի՝ Պաշտպանության նախարար նշանակվելուց հետո մի շաբթ գաղտնի հանդիպումներ անցկացվեցին քննարկելու համար Անատոլիայի էքնիկ գտումը: Պատերազմի տեսն ավարտվեց նոյեմբերին՝ քրիստոնյաների դեմ «Զիհար» (Սրբազն

<sup>43</sup> Սեգրերում՝ Ben Kiernan, *Blood and Soil – A World of Genocide and Estermination From Sparta to Darfur*, (Yale University Press, 2007), էջ 405:

<sup>44</sup> 1916թ. հունվարի 1-ին Առևտրի նախարար հրահանգ տվեց բանկերին տեղափոխել հայկական ակտիվները՝ հող, բանկային դեպողիտներ եւ այլն, դեպի պետական հաշիվներ: Բռնագրավման մասին այս հրամանագրերը Օսմանյան կառավարության հրամաններն էին. տե՛ս Վարուժան Դեյրմենջյանն ընդդեմ Դոյչ բանկի ԱՄՆ նահանգային դատարան, Կալիֆոռնիա (դատավոր Մորրոու), 11 սեպտեմբերի, 2006: Այս հրամանագրերն անհամատեղելի են թուրքական այն պնդումների հետ, թե տեղահանումները գուտ ժամանակավոր էին:

<sup>45</sup> Տես Taner Akçam, “Demographic Policy and Ethnic Cleansing”, SOAS դասախոսություն, 4 մարտի 2008թ., էջ 10:

պատերազմ) հայտարարելով (չնայած կառավարության դաշնակիցների՝ գերմանացիների ու ավստրո-հունգարացիների վրա դա չէր տարածվում)<sup>46</sup>: Թալեաթն ու Քեմալը սպառնում էին ճնշամիջոցներ կիրառել, եթե մուտումանները սպանվեին դաշնակիցների ռազմածովային ռմբակոծություններից: 1915թ. փետրվարին օսմանյան բանակի հայ զինվորները զինաբափվեցին եւ ուղարկվեցին աշխատանքային գումարտակներ<sup>47</sup>: Ծրագրեր էին կազմվում վերաբնակեցնելու հայերից «մաքրված» տարածքները, եւ «հատուկ կազմակերպությանը» հրահանգավորվեց արագ ավարտել գործը, որը չպետք է հրապարակայնորեն կապվեր կառավարության հետ<sup>48</sup>:

## Տեղահանումները եւ ջարդերը

33. Ջարդերի մասին փաստերը կասկածի ենթակա չեն: Կարեւոր չէ (ինչպես որոշ պատմաբաններ պնդում են)` արդյո՞ք բնաջնջման մասին ծրագիրը համաձայնեցված էր 1915թ. հունվարի Միություն եւ առաջադիմություն կուսակցության գաղտնի համաժողովում, թէ՞ ոչ. կառավարության տեղահանումների մասին հրամանների հետեւում գոյություն է ունեցել քաղաքական ծրագիր, որի սկիզբը տրվեց 1915թ. ապրիլին: Ապրիլի 24-ին՝ Գալիքոլիում դաշնակիցների ափհանման նախորդ գիշերը, մի քանի հարյուր հայ մտավորականներ Կոստանդնուպոլսում ձերբակալվեցին եւ արտաքսվեցին, իսկ մի մասը ենթարկվեց Լինչի դատաստանի: Մայիսին Թալեաթը հրաման արձակեց Անատոլիայից տեղահանումների մասին, իսկ սրան հաջորդեցին ամբողջ Արևելյան Թուրքիայով մեկ հայերի խմբերի տեղահանումները: Մի քանի տեղական պաշտոնյաններ հրաժարվեցին կատարել հրամանները՝ նշան այն բանի, որ որոշ կառավարական գործիչներ գիտակցում էին դրանց մահացու հետեւանքները<sup>49</sup>: Հայերի տներն ու սեփականություննը թալանվում էին կամ խլվում: Նրանց, ում հրամայված էր անցնել անապատով, կամ ուժով նատեցվում էին զնացքներ, տալիս էին շատ քիչ ուտելիք, կամ ընդհանրապես չէին տալիս, եւ տասնյակ հազարավոր մարդիկ պետք է մահանային սովոր ու հիվանդություններից: Ոչ մի անվտանգություն չէր ապահովում, մարդկանց շարասյունների վրա հարձակվում էին, դրանց անդամները թալանվում էին, բռնաբարվում, առեւանգվում կամ սպանվում էին քորդ ելուզակների, զինյալ կազմավորումների եւ կուսակցական պաշտոնյանների կամ տեղական նահանգապետերի վերահսկողության տակ գտնվող ոստիկանության կողմից: Ոչ մի ապահով տեղ չկար, ուր նրանք կարող էին գնալ. ԱՄՆ մի վստահելի փաստահավաք

<sup>46</sup> Այս ջիհադը, որը, ըստ Մորգենթաուի, սկիզբ դրեց կրքերի, որոնք հանգեցրին ջարդերի, հայտարարվեց զիսավոր կրոնական հեղինակության, Միություն եւ առաջադիմություն կուսակցության նորանշանակ պաշտոնյայի կողմից: *Balakian (Supra)*, էջ 169:

<sup>47</sup> Donald Bloxham, *The Great Game of Genocide* (Oxford 2005), էջ 70-71:

<sup>48</sup> Ste'v Taner Akçam, *A Shameful Act* (Constable 2007):

<sup>49</sup> Գոյություն ունեն վստահելի տեղեկություններ, որ ովքեր հրաժարվել էին ենթարկվել, պատժվեցին:

առաքելություն 1919թ. (The Harbord Report) եզրակացրել է, որ «կանայք, ծերերը եւ երեխաները մի քանի օր անց տեղահանվեցին դեպի, Թալեաք փաշայի խոսքերով ասած, «զյուղատնտեսական գաղութներ»՝ Հայաստանի բարձր զով քամիների դաշտավայրից դեպի Եփրատի՝ մալարիայով հեղեղված հարթավայրերը եւ Սիրիայի ու Արաբիայի այրող ավագները»<sup>50</sup>: Հարյուրհազարավոր մարդիկ զոհվեցին այս երթերի ժամանակ, քանի որ նրանք հայ էին, եւ որովհետեւ դիտավորյալ ձեւով հրամայված էր, որ նրանց «պարտադրվեն կյանքի այնպիսի պայմաններ, որոնք հաշվարկված են հասցնելու նրանց ֆիզիկական ոչնչացման՝ ամբողջովին կամ մասամբ». ամեն դեպքում լավ հաշվարկ էր: Թալեաքի հրամանները, համաձայն վստահելի տեղեկությունների, նպատակ ունեին լուծելու հայկական հարցը «վերջնական, լիովին եւ բացարձակ ձեւով»<sup>51</sup>: Մի քանի հազար կանայք առեւանգվեցին կամ լուռ համաձայնվեցին կրոնափոխվել իսլամի, որպեսզի փրկեին իրենց կամ իրենց երեխաների կյանքերը<sup>52</sup>: «Ստիպողական կրոնափոխությունը» եւս ցեղասպանության մեկ ցուցանիշ է:

34. Զարդերի իրական փաստերը ցույց են տալիս, թե ինչ աստիճանի էր ռասայական ատելությունը բորբոքվել «թուրքացման» գաղափարախոսությամբ: Տեղեկություններ կան ամբողջ համայնքների բնաջնջման մասին՝ նաև այնպիսի միջոցներով, ինչպիսիք են զանգվածային իրկիզումները, ջրահեղա անելը եւ շնչահեղա անելը անապատային ճամբարներում: Ծատ հայ տղամարդիկ հավաքագրվել էին զինվորական ծառայության, իսկ 1915թ. փետրվարին նրանք ուղարկվեցին աշխատանքային ճամբարներ: Ծեր տղամարդիկ, երեխաները եւ կանայք անապատներով անցնող երթերի խոցելի զոհերն էին: Որոշ երիտասարդ կանայք ու երեխաներ կարողացան փրկվել՝ առաջարկելով դառնալ հարսներ ու սեփականություն, մինչդեռ մյուսները փրկվեցին իսլամ ընդունելու միջոցով: Վկայություններ կան, որ շատ երեխաներ ուժով հեռացվել են ու տրվել մուսուլմանական ընտանիքների՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ Հոդվածի (ե) կետի խախտում: Երկումիլիոնանոց հայ բնակչության 800.000-1 միլիոնը ուղակիորեն կամ անուղղակիորեն սպանվեց 1915-16թթ.-ին<sup>53</sup>: Փաստերի վերջին ամփոփումը՝ կազմված բրիտանացի պատմաբան Կեյքի Կարմայքլի կողմից եւ հրատարակված 2009թ.-ին, հետեւյալն է<sup>54</sup>.

<sup>50</sup> General Major James Harbord, *Report of the American Military Mission to Armenia*, 5 December No 266 7 (1920):

<sup>51</sup> Տե՛ս Oren, վերետում հղում 42: Մորգենբաում մեջբերում է անում Թալեաքի ուղարկած հեռագրերից, որոնք հրամայում են մանկատներին շընդունել այն հայ երեխաներին, ում ծնողները մահացել էին երթերի ժամանակ, քանի որ «կառավարությունը...այդ երեխաների փրկությունը վնասակար է համարում»: Տե՛ս Professor Michael J Kelly, “Genocide – The power of a label”, Case Western Journal of International Law, (2008), Հատ. 40, էջ 151-2:

<sup>52</sup> Balakian, հղում 31, վերետում, էջ 180:

<sup>53</sup> Mark Levene, *Genocide in the Age of the Nation State*, Հատ. 1 (IB Tauris 2008թ.), էջ 73:

<sup>54</sup> Cathie Carmichael, *Genocide before the Holocaust* (Yale University Press, 2009), էջ 18-19:

«Տարրեր վայրերից կառավարության ուղարկած հեռագրերով նախաձեռնված տեղահանումները ներառում էին հայերի շրջապատումն ու հենց տեղում սպանությունը: Ծատերը նաև ենթարկվում էին իրենց հարեւանների խիստ զայրույթին ու քողնվում էին հենց ճանապարհին՝ առանց որեւէ պաշտպանության: Չնայած նրանք անունով «տեղահանվում էին», իրականում հայերի մեծ մասը զոհվեց չպաշտպանված լինելու, հիվանդությունների, սովոր պատճառով կամ էլ լեռներում ժանդարմների ու քրդերի հրոսակախմբերի դաժան հարձակումներից: Մել ծովի Տրապիզոն նավահանգստում տեղի համայնքին ծով դուրս բերեցին ու ջրախեղդ արեցին: Ծատ կանայք անարգվում էին եւ սպանվում հենց իրենց ընտանիքների առջեւ: «Տեղահանվողների» առնվազն երկու երրորդը կենդանի չմնաց այս գործողությունների պատճառով, իսկ այն քերը, ովքեր մնացին, իրենց նվաստալի գոյությունն էին պահպանում Սիրիայի փախստականների ճամբարներում կամ Ռուսաստանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում... Ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում մի ամբողջ համայնք վերացվեց ընդմիշտ: Մոտ մեկ միլիոն հայեր զոհվեցին, մինչպատերազմյան բնակչության մոտ կեսը, սակայն նրանց համայնքը հենց Անատոլիայում այդպես էլ երբեք չվերականգնվեց... Տեղահանումներն ու ջարդերը արդյունավետորեն կիրառել էին բռնություն՝ լուծելու համար այն խնդիրը, որը եվրոպացիները տասնամյակներ շարունակ անվանում էին «Հայկական հարց»: Ինչպես Դոնալդ Բլոքսինման է պնդում, ջարդերը «հնարավորություն տվեցին Սիրավորման եւ առաջընթացի կուսակցությանը ապահովել Անատոլիան՝ որպես էքնիկապես «մաքուր» առանցքային տարածք թուրք ժողովրդի զարգացման համար»»<sup>55</sup>:

## Արդարացո՞ւմ, թե՞ պատճառաբանություն

35. Այն ժամանակ Սիրիայուն եւ առաջադիմություն կուսակցությունը պաշտպանում էր իր տեղահանման քաղաքականությունը (ինչպես այդ անում է Թուրքիայի կառավարությունն այսօր)՝ որպես երկրի ինքնապաշտպանության համար անհրաժեշտություն. դա արդարացվում է «հինգերորդ շարասյան մասնակիցների» հեռացմամբ Դարդանելի ներխուժման պահին Գալիպոլիի մոտ եւ իր Արեւելյան սահմաններին սպառնացող վտանգով, որտեղ իրական վտանգ կար, որ հայ բնակչությունը կմիանար ոռուսական հարձակմանը, իսկ այդ վտանգը ներկայացվում էր ապրիլի 20-ին Վանում հայերի

<sup>55</sup> Bloxham, Great Game of Gencoide, էջ 4:

Խոռվությամբ: Ինչեւիցե, հակառակ զինված հայկական դիմադրության փոքրիկ պատարիկների գոյությանը՝ դժվար է դա արդարացում համարել մի ամբողջ բնակչության տեղահանման մասին հրաման արձակելու համար: Ինչպես վերջերս անցկացված մի ուսումնասիրություն եզրակացնում է.

«Հնդիանուր առմամբ, քիչ վկայություն կա այն մասին, թե գոյություն ուներ համբնդիանուր հայկական սպառնալիք արեւելյան տարածաշրջանում... Իրականում հայ կրոնական եւ քաղաքական առաջնորդները հավատարմություն ու հանգստություն էին քարոզում, ինչպես նաև հորդորում երիտասարդ տղամարդկանց կատարել իրենց պարտքը օսմանյան բանակում: Ավելին՝ հայերի զգալի մեծամասնությունը մնում էր չքաղաքականացված: Այն հայկական դիմադրությունը, որ գոյություն ուներ, պարզում է, որ կրում էր տեղային, հուսահատ բնույթ եւ բնաջնջման սպառնալիքին տված արձագանքն էր»<sup>56</sup>:

36. Թուրքերին համակրող մի զուսպ պատմաբան եւ «ցով բառից խուսափելու» կողմնակից (արդյո՞ք ցեղասպանություն եղել է, թե՞ ոչ) դիտարկել է 2009թ.-ին, որ.

«Անողոքարար վերահսկող, պարբերարար ահարեկչությունների ենթարկված լինելով՝ հայերի զգալի մեծամասնությունը նոյնակ քաղաքականապես գրագետ քաղաքներում ոչ մի դեպքում ի վիճակի չէր ապստամբություն սկսելու»: Խեղճ գյուղացիների մեծ մասի համար տեղահանումը մահվան դատավճիռ էր, եւ կասկած չկա, որ տեղահանումների մասին հրամանները, գյուղ գյուղի հետեւից, գալիս էին կենտրոնական կառավարությունից, ի կատար էին ածվում տեղական պաշտոնյաների կողմից, զիտեին, որ հապշտապ կազմված պահակազորները տեղի զինյալների, զողերի եւ ոստիկանության կողմից ենթարկվելու էին բալանի, բռնարարության եւ ջարդերի: Ծատ սպանությունների դրդապատճառը հեշտասիրությունը կամ ազահությունը բավարարելու հնարավորությունից օգտվելու ցանկությունն էր, սակայն դրանք չին տեղի ունենա, եթե չիներ արմատացած էքնիկ ատելությունը հայերի նկատմամբ, կամ կրոնական ատելությունը՝ ամփոփված «Ասոված մեծ է» ճիշը մեջ, որն ուղեկցում էր սպանությունների մեծ մասին»<sup>57</sup>:

37. Այնուամենայնիվ, սխալ կլիներ հաշվի չառնել թուրք առաջնորդների այն զգացողությունը, թե հայ բնակչությունը սպառնալիք էր ներկայացնում՝ մի հինգերորդ շարասյուն, որը

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Christopher de Bellaigue, Rebel Land (Bloomsbury 2009), էջ 79:

կարող էր դաշինքի մեջ մտնել Ռուսաստանի հետ հարձակման դեպքում: Եթե 1915թ. վերջերում ցարական ուժերն առաջացան դեպի Արևելյան Անատոլիա, այնտեղի հայկական զինված խմբավորումները դաժանորեն վրեժինդիր եղան տեղի քրդերից ու բոլորդերից, եւ պատերազմի վերջում կատարված հայկական վայրագությունների մասին կան բազմաթիվ վկայություններ: Խելամիտ կլինի քննադատել Վահագն Դադրյանի նման հայ պատմաբաններին՝ այս տիած փաստերը կոծկելու համար<sup>58</sup>, սակայն դրանք, ընդհանուր առմամբ, չեն փոխում թուրքական գործողություններին տրված ցեղասպանություն բնորոշումը: Դրանք չեն պատճառաբանում կամ թեթեացնում, առավել եւս չեն արդարացնում մի քաղաքականություն, որի նպատակն էր երկիրը մաքրել մի ազգային փոքրամասնությունից: Այդ հանցագործությունը կատարվել է զուտ այն նպատակով, որ թույլ չտա այնպիսի քաղաքականության ձեւավորմանը, որը կհետապնդեր փոքրամասնություններին սպառնալիքի եւ պետական արտակարգ իրավիճակներում, եթե հավանականություն կա, որ խտրականության ենթարկված փոքրամասնությունները կանցնեն զավթիչի կողմը, ով ընկալվում է որպես ազատարար: Այս վտանգը կարող է արդարացնել նրանց ժամանակավոր հեռացումը սահմանամերձ տարածքներից կամ նրանց քաղաքական առաջնորդների ներկալումը, սակայն դա չի կարող փորձել արդարացնել այն, ինչը 1919թ. ԱՄՆ կառավարությանը Հարբորդի զեկույցում նկարագրվում էր որպես «ռասայի նկատմամբ այս լայնածավալ մահավորձ»<sup>59</sup>:

## Ապացույցները

38. Գոյություն ունեն այս զարիուրելի իրադարձությունների հարյուրավոր ժամանակակիցների նկարագրությունները: Դրանցից շատերը պատկանում են ականատեսներին՝ լրագրողների, մասնավորապես՝ «Նյու Յորք Թայմս», գերմանացի բանկիրների, միսիոներների (ներառյալ գերմանացի քրիստոնեական միսիոներներին) եւ կազմակերպիչների ու հյուպատոսական պաշտոնյաների (հատկապես ԱՄՆ փոխհյուպատոսների, ովքեր տեղեկություններ էին տալիս որպես մտահոգված չեզոք կողմ, եւ գերմանացի պաշտոնյաների, ովքեր տեղեկություններ էին տալիս որպես մտահոգված դաշնակիցներ): Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուն (ում հեռագրերն ահազանգեցին Վաշինգտոնին «ռասայական բնաջնջման» մասին, որոնք կատարվում էին «սարսափելի կտտանքների, արտաքումների եւ ջարդերի միջոցով») բազմից բարեխոսել է Թալեաքի առջեւ, որը միայն ասել է, թե «քողեք մենք այդ քրիստոնյաների հարցը լուծենք այնպես, ինչպես որ մենք ենք ցանկանում»: Նա կասկած անգամ չուներ, որ այն, ինչն ինքը

<sup>58</sup> Նոյն տեղում, էջ 106: Դը Բելեգը նկատում է, որ զարմանալի է, թե ինչպես Դադրյանը անտեսում է այդ բեման իր «Հայկական ցեղասպանության պատմությունը» սպառիչ գրքում:

<sup>59</sup> Balakian, հղում 31 վերետում, էջ 357:

բնորոշում է որպես «ռասայի բնաջնջման փորձ», պատասխան չէր մոլեռանդմերի ժողովրդականություն վայելող պահանջներին, այլ «Կոստանդնուպոլիսից եկող» քաղաքականություն էր»<sup>60</sup>: Գերմանացի դիվանագետները ոչ մի դրդապատճառ չունեին ստելու համար, երբ զեկուցում էին իրենց դաշնակցի արարքների մասին, եւ Ստամբուլում Գերմանիայի դեսպան Կոմս Վոլֆ-Մետտերնիխը զեկուցում է Բեռլին, թե «Միություն եւ առաջադիմություն կուսակցությունը պահանջում է հայերի վերջին մնացորդներին արմատախիլ անել... Թրքացում նշանակում է արտոնել այն ամենի սպանությունը, արտաքսումը կամ ոչնչացումը, ինչը բուրքական չէ, եւ բռնությամբ տիրանալ այլոց ունեցվածքին»<sup>61</sup>: Երգրումում Գերմանիայի փոխիյուպատոսը տեղեկացնում է, որ Սիություն եւ առաջադիմություն կուսակցության միջոցների դաժանությունը նշանակում էր հայ տարահանվողների «անխուսափելի մահը»: Նա ասում է, որ Սիություն եւ առաջադիմություն կուսակցությունը «քացահայտորեն ընդունում է, որ իր գործողությունների նպատակը հայերի իսպառ ոչնչացումն է: Ինչպես մի իշխանավոր քառացիորեն հայտարարեց. «Սենք Թուրքիայում պատերազմից հետո ոչ մի հայ չենք ունենալու»»<sup>62</sup>: ԱՄՆ փոխիյուպատոս Լեալի Դեյվիսը՝ փորձառու իրավագետը, 1915թ. իր հեռագրերում եւ իր հետագա ինքնակենսագրության մեջ՝ «Սպանդանց զավառ», կասկած չէր արտահայտում այն բանի առթիվ, որ կառավարությունը հակված էր բնաջնջելու հայկական ռասան իր մշակութային գանձարանների հետ մեկտեղ<sup>63</sup>: Զեսսի Ջ Զերսոնը՝ կոփված ԱՄՆ դիվանագետը, ով 1915-16թթ. Հալեպում հյուպատոս էր, իր հաղորդագրություններում նկարագրում է տեղի քաղաքներն ու շրջանները, «որտեղ հայերն արդեն գործնականում բնաջնջվել էին», եւ բուրք կառավարության բռնագրավման ծրագիրն անվանում է «քալանի հսկայական ծրագիր, ինչպես նաև (հայկական) ռասան բնաջնջելու վերջին հարված»<sup>64</sup>:

39. Կան քրիստոնյա միսիոներների եւ հումանիտար օգնության աշխատողների արած բազմաթիվ հաստատված հայտարարություններ, իլ չենք խոսում կենդանի մնացածների գրքերի եւ այլ գրառումների ու նամակագրության մասին: Այս բոլոր «առաջին դեմքով» պատմությունների ընդհանուր գիծը սպանությունների, ծեծերի եւ բռնաբարությունների ժամանակ տիրող ռասայական ատելության բաղադրիչն է, որը հաճախ բխում էր պաշտոնյաներից, երբեմն հարձակում գործողներից, ովքեր կապված էին Հատուկ կազմակերպության բանակի հետ, ինչպես նաև կողոպտող քրդերից: Այս բոլոր աղբյուրներից դատելով՝ կասկած լինել չի կարող, որ Արեւելյան գավառներով դեպի

<sup>60</sup> Samantha Power, հղում 6 վերեւում, էջ 6-8:

<sup>61</sup> Ben Kiernan, հղում 44 վերեւում, էջ 186՝ մեջբերելով գերմանական արխիվները:

<sup>62</sup> Balakian, հղում վերեւում 31, էջ 186, մեջբերված գերմանական արխիվներից:

<sup>63</sup> Davis, Leslie: *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide 1915-17*. Susan K Blair ed. New Rochelle, New York, (1989):

<sup>64</sup> Balakian, հղում 31 վերեւում, էջ 188 և 257:

Սիրիա հազիվիազ քարշ եկող տեղահանված հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների խոցելի եւ սովահար շարասյուների վրա գործած ռասայական հարձակումներն ունեին որոշակի համակարգ: Այս արդյունքը կարելի էր եւ պետք էր կանխատեսել, եւ ամեն դեպքում հենց այդպիսին էր իրավիճակը ամիսներ շարունակ, երբ չկա ոչ մի պաշտոնական միջամտություն՝ սպանությունները դադարեցնելու կամ տեղահանվածներին պաշտպանելու, կամ էլ ոճրագործներին պատժելու համար:

40. Պատժելու փորձ արվեց այն բանից հետո, երբ Երիտրուրքերը կորցրին իշխանությունը 1918թ. հոկտեմբերին: Այն ժամանակվա Սուլթանը հայերի Միություն եւ առաջադիմություն կուսակցության կողմից հետապնդումները նկարագրել է որպես «Մարդկության եւ պետության օրենքների դեմ գործված հանցագործություններ», եւ ռազմական տրիբունալը նրանց մեղադրեց մասնավորապես «տեղահանման եւ ջարդերի» հանցագործության մեջ»: Նրանցից շատերը մեղավոր ճանաչվեցին: Չնայած Թալեաթը, Էնվեր փաշան եւ Քեմալն արդեն հասցրել էին փախչել Գերմանիա, նրանք դատապարտվեցին *in absentia*: Նոր կառավարությունը հավանաբար ստեղծեց այդ դատարանը, որպեսզի հաճոյանա հաղթանակող երկրներին, սակայն չի հիշատակվել, որ դրա դատավորներն անկախ չեն, կամ որ նրանց վարած գործերն անսովոր էին կամ անարդար՝ տեղի չափանիշներից ելնելով: Նրանք եկան սահմոկեցուցիչ եզրակացությունների այն ապացույցներից, որոնք նկարագրում էին մի դեպք, թե ինչպես էին Միություն եւ առաջադիմություն կուսակցության քարտուղարը եւ մի տեղական նահանգապետ կազմակերպում «հայերի ջարդն ու բնաշնչումը»՝ օգտագործելով բանտից դուրս բողնված հանցագործներին որպես պահակներ, սակայն ունենալով հրահանգներ՝ սպանելու տղամարդկանց եւ ջրախեղդ անելու երեխաներին: Ակնհայտորեն դատարանը եզրակացրեց, որ Միություն եւ առաջադիմություն կուսակցության ձեռնարկած միջոցները բնորոշվում էին որպես «վերջնական լուծում»: Օտարերկրյա դիվանագետների հաղորդագրություններում Թալեաթին եւ Միություն եւ առաջադիմություն կուսակցության այլ առաջնորդներին տրված բնորոշումները ենթադրում են, որ նման բառապաշտը հաճախ էր օգտագործվում քաղաքական առաջնորդների կողմից, ովքեր արդեն 1915թ. կեսերին սկսել էին գիտակցել, որ նրանց տեղահանումները դառնալու էին մահվան երթեր:
41. Ցանկացած օբյեկտիվ վերլուծաբան պետք է որ ցնցվի այդ տեղեկությունների բվից եւ հետեւողականությունից. դրանք անկեղծորեն նկարագրում են ցեղասպանության դեպքեր: Թուրքական կառավարությունը եւ բուրքամետ պատմաբանները փորձել են նվազեցնել այս փաստաթղթերի մի մասի արժեքը. օրինակ՝ «Կապույտ գիրքը» (1916թ.), որի նախարանի հեղինակն է Լորդ Ջեյմս Բրայսը, իսկ խմբագիրը Առնոլդ Ջ. Թոյնին է,

կասկածի տակ է առնվում, քանի որ Բրայսին համարում են պրոպագանիստ<sup>65</sup> եւ մեղադրում են Բելգիայում գերմանական վայրագությունները չափազանցնելու կամ հորինելու մեջ: Այդ իսկ պատճառով ես չեմ հենվում դրա վրա որպես աղբյուրի<sup>66</sup>: Սակայն հենց միայն ապացույցների կշիռը եւ ականատեսների պատմածների հետեւողականությունը, ներառյալ հարգված մարդկանց ներկայացրածները, ովքեր դժվար թե անձնական շահագոգովածություն կամ խարդախելու պատճառ ունենային (գերմանացի միսիոներները եւ դիվանագետները, օրինակի համար, ում երկիրը Թուրքիայի հետ դաշինքի մեջ էր, եւ չեզոք ԱՄՆ փոխհյուպատոսները, ինչպիսիք էին Դեյվիսն ու Չերսոնը), իսկապես ստիպում է ենթադրել, որ գոյություն ունի որոշակի հակաբորքական գաղտնի համաձայնություն՝ ճնշելու ճշմարտությունը: Ինչ վերաբերում է բոլոր հայկական հաշվետվություններին, եթե նույնիսկ դրանց մի մասը չափազանցություն է, բոլոր միասին դրանք ունեն մի ընդհանրություն: Ինչպես պատմաբաններից մեկն է նշում, «Աշխարհով մեկ սփոված, տարբեր լեզուներով խոսող հայկական Սփյուռքի համար ստի մի հսկայական համերգ կլիներ հորինել ջարդերի նկարագրությունները, հնարել նման հուշեր: Նման դավադրությունն աննախադեպ կլիներ»<sup>67</sup>:

42. 1919թ. դատավարություններն ու դատավճռները չեն կարող անտեսվել՝ ենթադրելով, որ դրանք «քեմականացվել» են դաշնակիցներին գոհացնելու նպատակով. դրանք իրական դատավարություններ են՝ իրականացված թուրքական օրենքին համապատասխան, ինչը, թեև մեր չափորոշչների տեսանկյունից անկատար է (հատկապես *in absentia* դատավարություններ թույլատրելու հարցում), այնուամենայնիվ օրինական գործընթաց է, եւ նախկին առաջնորդներին ու պաշտոնյաներին պատասխանատվության կանչեց

<sup>65</sup> Տե՛ս Philip Knightly, *The First Casualty* (Andre Deutsch, 1975) էջ 83-4; David Miller, *The Treatment of Armenians in the Ottoman Empire: History of the Blue Book*, RUSI Journal, August 2005; *The Treatment of the Armenians in the Ottoman Empire* (Misc. 31, Cnmd 8325) HAISO, 1916: Նայրին նկատում է, որ գերմանացիների վերաբերյալ հորինված վայրագությունների մասին պատմությունների չափազանց մեծ թվով հանգեցրեց «հասկանայի անտրամադրվածության՝ հավատալու վայրագությունների մասին այն թիվ պատմություններին, որոնք իրական էին: Փարիզի *«Le Journal»* Հարի Բարբին եւ *«The Times»* Էդմունդ Քենդլերը՝ երկուսն էլ գրում էին սարսափազող պատմություններ այն վայրագությունների մասին, որ թուրքերը կատարում էին հայերի նկատմամբ, սակայն նրանց մանրամասն ու դատապարտող մեղադրանքները կրում էին այն ժամանակված կեղծ եւ չափազանցված քարոզության խառնաշփորտության մեջ (տես վերեւում, էջ 104-5):

<sup>66</sup> «Կապույտ գրքի» վերաբերյալ հակասականությունը այդպես էլ վերջնականորեն չի պարզաբանվել: Բրայսը նախկինում եղել է Քաղաքացիական իրավունքի դասախոս Օքսֆորդում եւ դեսպան ԱՄՆ-ում, եւ վերջին ուսումնասիրությունը որոշ չափով վերականգնել է նրա հեղինակությունը՝ ապացուցելով, որ նրա «քարոզության» մի մասը ճիշտ է. այնքանով, որ այժմ պարզ է, որ գերմանական բանակն անողոքարար մահապատճի է ենթարկել Ֆրանսիայի եւ Բելգիայի 6.500 անմեր քաղաքացիների 1914թ. օգոստոսից մինչեւ նոյեմբերը: Տե՛ս John Horne and Alan Kramer, *German Atrocities 1914: A History of Denial* (Yale University Press, 2001): Թոյնին, իսկապես մի մեծ պատմաբան, կազմել ու խմբագրել է «Կապույտ գիրքը» եւ հետազայն կասկած շոներ, որ դրա պարունակությունը վկայում էր «1915թ. հայերին բնաջնջելու փորձի մասին: Այս դեպքում հարյուրհազարավոր մարդիկ դարձան գող ու մարդասան Օսմանյան կայսրությունը դեկավարող մի քանի տասնյակ հանցագործների վարչական գործողությունների հետեւանդով»: Ինչեւէ, նա մեկնաբանում էր (հեղմանքով), որ «Կապույտ գիրքը» «ներկայացվում էր որպես պատերազմի քարոզություն»: Տե՛ս, Arnold J Toynbee, *The Western Question in Greece and Turkey* (Constable, 1922), էջ 265-6 եւ 50:

<sup>67</sup> De Bellaigue, տե՛ս վերեւում, էջ 104:

Աերին իրավունքի համաձայն այն ժամանակ, երբ միջազգային իրավունքն իրավասություն չուներ պաշտոնյաներին պատժելու սեփական ժողովրդին սպանելու համար: 1919թ. սեպտեմբերին գեներալ Հարբորդի ղեկավարած խմբի ստանձնած փաստահավաքության առաքելությունը նույնպես վստահելի է. նա եզրակացրել է, որ երկրով մեկ կատարված ջարդերն ու տեղահանումներն իրականացվում էին «որոշակի համակարգի» համաձայն. նրա ուսումնասիրած տարածքներում զինվորներն անցել էին քաղաքից-քաղաք՝ հավաքագրելով 15-45 տարեկան հայ տղամարդկանց պետական ծառայության, իսկ հետո տարան նրանց մահապատճի: Այնժամ կանայք, ծերերն ու երեխաները մնացին սվինի բերան երկար երթերի ժամանակ, որտեղ «սովը, տիֆը եւ արնալուծը», ինչպես նաև զինված հարձակումները հասնում էին անասելի չափերի»<sup>68</sup>:

43. Ես ուսումնասիրել եմ այն չորս պատմաբանների գրածները, ում վրա հենվում է ԱԳՀՀՆ (տե՛ս հետագա 59-64 պարբերություններ), եւ կասկածում եմ՝ արդյո՞ք նրանք իսկապես զիտակցում են ցեղասպանության իրավաբանական իմաստը: Նրանց թվում է, ինչպես եւ թվում է ԱԳՀՀՆ-ին, թե ցեղասպանության համար անհրաժեշտ է կոնկրետ կառավարության որոշում՝ բնաջնջելու հայ ազգը: Քանի որ ոչ մի այդպիսի կառավարական փաստաթուղթ չի հայտնաբերվել, որը պարունակեր նման իրաման կամ նման քաղաքականության մասին մեջբերում, նրանք կասկածում են, որ ցեղասպանություն կատարվել է: Նրանք չեն հասկանում, որ ցեղասպանությունը, ինչպես որ այն սահմանվում է Կոնվենցիայի մեջ, կարող է իրականացվել առանձին անհատների, ինչպես նաև պաշտոնյաների կողմից, եթե այդ պաշտոնյաները գործում են պաշտոնական խրախուսանքի կամ լուր համաձայնության ներքո: Եվ նրանք կարծես թե չեն զիտակցում, որ դրա սահմանումը ներառում է «կյանքի այնպիսի պայմանների» դիտավորյալ պարտադրում, որոնք ամենայն հավանականությամբ հանգեցնելու են մահվան եւ ոչնչացման: Ցեղասպանության Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «զ» կետը հենց այն սահմանումն է, որ հստակորեն նկարագրում է 1915թ. տեղահանումների հանգամանքները:

44. Այս պատմաբանները շահագրգռված են պարզաբանելու այն հանգամանքները, որոնց ներքո հրամայվեց իրականացնել տեղահանումները: Նրանք բավականին համոզիչ ձեւով լուսաբանում են լարվածությունը, որը ծագում էր Օսմանյան կայսրության փլուզումից եւ Դարդանելում դաշնակիցների մոտալուտ ափիանումից: Նրանք ընդգծում են բուրքական կառավարման դեմ հայկական զինված դիմադրությունը, որը 1915թ. հանգեցրեց Վանի գավառում լուրջ ապստամբության: Նրանք մատնանշում են, որ մի շաբթ հայեր անցան ուսական զորքերի շարքերը թուրքերի դեմ կռվելու համար հովհանն նրանց կատարած ասպատակություններից հետո, չնայած տեղահանումներն արդեն սկսվել էին: Նրանք

<sup>68</sup> Major General James G Harbord, *Conditions in the Near East: Report of the American Military Mission to Armenia*, 66<sup>th</sup> Congress 2<sup>nd</sup> sess., Dec No 266, ապրիլի 13, 1920 թ., կետ 7:

պնդում են, թե ջարդերի մեծ մասը կողոպտիչ քուրդ հրոսակախմբերի ձեռքի գործն էր, եւ ոչ մի կապ չուներ կենտրոնական կառավարության հետ, իսկ շատ մահեր էլ եղել են սովոր ու հիվանդությունների արդյունքում: Այս ամենը կարող է լինել ճիշտ, սակայն դա միայն ծառայում է բացատրելու համար, թե ինչու կատարվեց ցեղասպանությունը, եւ քրդերին որպես ոճրագործ խմբերից մեկը ճանաչելու համար. դա չի կարող ծառայել որպես պատճառաբանություն աններելի հանցանքի համար, որը գործվել է Միություն եւ առաջադիմություն կուսակցության առաջնորդների եւ տեղական պաշտոնյաների կողմից, ովքեր պետք է որ իմացած լինեին եւ ակնհայտորեն գիտեին, որ հայերին՝ հայ լինելու պատճառով նրանց պարտադրած կյանքի պայմանների արդյունքն անխուսափելիորեն լինելու էր այդ ժողովրդի զգալի հատվածի մահը:

45. Կարճ ասած՝ ես կարծում եմ, որ անհաղթահարելի փաստ է այն, որ օսմանյան պետությունը պատասխանատու է (27 պարբերությունում բերված իրավական սկզբունքների համաձայն) մի բանի համար, ինչը ներկայումս կորակվեր ցեղասպանություն: 1915թ. այդ պետությունը դեկավարողները պետք է որ իմացած լինեին այն, ինչն ակնհայտ էր անկողմնակալ օտարերկրյա դիտորդների համար, եւ նրանց ռասիստական մտադրության մասին կարելի է եզրակացություն անել ոչ միայն նրանց արած հայտարարությունների մասին տեղեկություններից, այլ նաև 1894-96 եւ 1909 թվականներին տեղի ունեցած ռասայական ու կրոնական զանգվածային սպանությունների մասին նրանց ունեցած տեղեկություններից, տեղահանության մասին նրանց հրամաններից ու հետեւանքների մասին կանխատեսումներից, տեղահանվողներին չպաշտպանելուց եւ նրանց վրա հարձակում գործողներին չպատժելուց, որոնց մի մասը պետական գործակալներ էին: Նրանք հրահրեցին կամ գոնե լրու համաձայնվեցին հայ ազգի զգալի մասին՝ Արեւելյան Թուրքիայում 1915թ. սկզբին կենդանի եղածների հավանաբար մոտ կեսին սպանելու հետ: Կարելի է ասել մեկ այլ ձեռվ, հավանաբար այնպես, ինչպես արդարամիտ եւ տեղեկացված ԱԳՀՀՆ պետք է որ խորհուրդ տված լիներ՝ իր նախարարներին պատասխանելու, եթե այս նույն իրադարձությունները կատարվեին այսօր մի երկրում, որը նման է 1915թ. Թուրքիային, կասկած լինել չի կարող, որ Յեղասպանության մասին կոնվենցիան երաշխավորած կլիներ եւ ամկասկած պահանջած կլիներ դատական կարգով հետապնդումներ ցեղասպանության համար:

**ԱՐՏԱԶՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՂԱՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՔՈՒՄԸ**

**Տեղեկատվություն պահանջելու ազատությունը**

46. Որպեսզի լիովին հասկացվի, թե կառավարությունն ինչ փաստարկներ է բերում հայերի հետապնդումները ցեղասպանություն համարելուց հրաժարվելիս, եւ որոնք են այն ապացույցները, որոնց վրա հենվում են պառավմենտական պատասխանները, դիմումներ գրվեցին «*Տեղեկատվության ազատության մասին ակտի» համաձայն ձեռք բերելու համար համապատասխան փաստաթղթերը եւ քաղաքական հուշագրերը ԱԳՀՀՆ-ից: Առաջին դիմումը մերժվեց ԱԳՀՀՆ-ի կողմից, չնայած այն ընդունեց, որ «ունի շատ վաղուցվա տեղեկատվություն այդ հարցերի վերաբերյալ»<sup>69</sup>: Ինչեւիցե, նախարարությունը հաշվարկեց, որ այդ տեղեկությունները ստանալու համար կպահանջվի Ակտով թույլատրված առավելագույնը երեքուկես օրից ավելի ժամանակամիջոց, իսկ այդ գործողությունը կարծենա 600 ֆունտ ստենլինգից ավելի: Հաշվի առնելով քննարկվող հիմնահարցի կարեւորությունը (վերջին տարիներին բազմաթիվ եվլուպական երկրների կողմից ընդունված Հայկական ցեղասպանության մերժումն արգելող օրենքների հետեւանքով)` խիստ զարմանալի է, որ ԱԳՀՀՆ-ն չի համակարգել կամ ճշտել պահանջվող նյութերը որեւէ ուացիոնալ ձեւով, ինչը հնարավորություն կտար դրանք հանել երեքուկես օրվա ընթացքում: Ավելին՝ այս նախնական պատասխանը Ակտի 16-րդ մասի խախտում էր, որը պարտավորեցնում է ԱԳՀՀՆ-ին օժանդակել տեղեկատվության հետ կապված հարցերում եւ ենթարկվել Ակտի 45-րդ մասի համաձայն ստեղծված Գործումնեության կողերսին: Տիկին Քեյք Անանդը կազմեց նամակ-հիշեցում, որը պահանջում էր, որ ԱԳՀՀՆ-ն հավուր պատշաճի ենթարկվի Ակտի 16-րդ եւ 45-րդ մասերին<sup>70</sup>, եւ 2008թ. հոկտեմբերի 16-ին սա որոշ արդյունքներ տվեց: ԱԳՀՀՆ-ն իմ ենթակայության տակ գտնվող փաստաբաններին հանձնեց վերջին տասը տարիների ընթացքում Ուայրիում՝ տեսադաշտից դուրս քննարկված եւ նշված քաղաքականությանն առնչվող բավականին շատ փաստաթղթեր:*
47. Այս փաստաթղթերը եկան ի պատասխան դիմումի «ստանալ այն ասկացույցների պատճենները, որոնք ներկայիս Լեյբորիստական կառավարությունը համարել է բավարար չափով անհերքելի՝ համոզելու համար, որ այս իրադարձությունները պետք է որակվեն

<sup>69</sup> Նամակ Յան Ուիլխախից, ԱԳՀՀՆ, Բեռնար Անդրեյանին, 5 օգոստոսի 2008թ.:

<sup>70</sup> Նամակ Բեռնար Անդրեյանից Յան Ուիլխախին, ԱԳՀՀՆ, 11 սեպտեմբերի 2008թ.:

*ցեղասպանություն»:* Սակայն այս փաստաթղթերի մեջ ոչինչ չէր կարող դասակարգվել որպես ապացույց, ել չենք խոսում լորդ Մելլոր-Բրաունի պատասխանում եղած որեւէ «եզրակացության» մասին (տես վերեւում՝ կետ 3): Իսկապես, ԱԳՀՀՆ-ն ընդունեց, որ 1997թ. իր ընտրվելուց ի վեր Լեյբորիստական կառավարությունը պարզապես շարունակել է նախկին կառավարությունների որդեգրած քաղաքականությունը «առանց հիմնարար սկզբունքների տեսակետից վերանայելու»<sup>71</sup>: Սա կարեւոր գիշում է, քանի որ ցույց է տալիս, որ Լեյբորիստական կուսակցությունը երբեք չի դիտարկել Ցեղասպանության կոնվենցիայի «հիմնարար սկզբունքները» 1915-16թթ. տեղի ունեցած ջարդերի ապացուցված փաստերի նկատմամբ կիրառելու հնարավորությունը: Ավելին՝ ԱԳՀՀՆ-ն ընդունում է, որ «գոյություն չունի համապատասխան արխիվներում պահպղ պատմաբանների կողմից կազմված փաստաթղթերի, հրապարակումների կամ զեկույցների որեւէ փաթեթ կամ ապացույցներ, որ ինչ-որ փաստաթղթեր ներկայացվել են նախարարներին քննարկման համար»<sup>72</sup>: Փոխարենը երեւան հանեց 1997թ. նախարարներին տրված այն մաս-մաս առաջարկությունը՝ հիմնականում ԱԳՀՀՆ Արեւելյան դեպարտամենտի կողմից ուղղված, որը չէր պարունակում հիմնախնդրի վերաբերյալ ոչ մի դատողություն եւ ոչ ոչ մի այնպիսի քանի վերլուծություն, որը կարելի կլիներ անվանել «ապացույց»:

48. Այս փաստաթղթերի մասերը խմբագրված էին (այսինքն՝ սեւացված էին) Ակտի 27-րդ մասին հղելով, որն ասում է, թե տեղեկությունն ազատ է, եթե «հավանականություն չկա, որ այն կհակասի ՄԾ եւ այլ երկրների միջեւ հարաբերություններին»: ԱԳՀՀՆ-ն պնդում է, որ «ձեր խնդրանքին առնչվող մեր ունեցած տեղեկությունների մի մասի բացահայտումը կարող էր վճասել ՄԾ եւ այլ երկրների միջեւ հարաբերություններին, եթե հրապարակվեր»: Ընդգծված տողերի արանքում եւ ներքեւում մնացած հատվածներից պարզ է դառնում, որ նշված հատվածների հիմնական մասը վերաբերում է թուրքական կառավարության վերաբերմունքի մասին մեկնաբանություններին: Դրանք, անկասկած, շարունակում են մեկնաբանել կառավարության իրական մտահոգությունը, եւ հրապարակված փաստաթղթերից հստակորեն պարզ է դառնում, որ Հայաստանում ցեղասպանության ընդունումը կվճասեր Թուրքիայի հետ հարաբերություններին՝ առանց Բրիտանիայի տնտեսական ու դիվանագիտական շահերին որեւէ փոխհատուցող առավելություն բերելու: ԱԳՀՀՆ-ն հրաժարվեց վերհանել՝ սովորականի պես ծախսերով հիմնավորելով ավելի վաղ ժամանակաշրջանի որեւէ գրավոր փաստաթուղթ (իմ փաստաբանները նման փաստաթուղթ էին խնդրել ՄԵյզորի եւ Թեքչերի վարչակարգի մի ժամանակահատվածի վերաբերյալ), չնայած դրանք ավելի ուշ տրվեցին՝ հերթական դիմումից հետո, որոնք

<sup>71</sup> Նամակ Լինն Ռուսից, ԱԳՀՀՆ, Բեռնար Անդրնյանին, 16 հոկտեմբերի 2008թ., էջ 2:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 1:

կպարունակելին 1997թ. ի վեր նախարարների քննարկմանը ներկայացված որոշ քաղաքական ուղղություններ: Փաստաթղթերի այս վերջին փաքեթը, որը կրկին ենթարկվեց խմբագրման 27-րդ մասի համաձայն, չտրամադրվեց ԱԳՀՀՆ կողմից մինչեւ 2009թ. մարտի 13-ը<sup>73</sup>: Անկասկած սխալմամբ՝ դրանք պարունակում էին 1995թ. որոշ գրություններ, որոնցում ԱԳՀՀՆ-ի այն ժամանակվա նախարարին (պ. Հոգին) խորհուրդ չէր տրվում մասնակցել բոլոր կուսակցությունների մասնակցությամբ անցկացվող կոտորածների 80-րդ տարեկանի հիշատակին նվիրված ծառայությանը<sup>74</sup>: Հետագայում լեյբորիստների կառավարության նախարարներին նույնպես տրվում էր նույն խորհուրդը (տե՛ս պարագաֆ 64՝ ստորև):

49. Ես դեռեւս գոհ չեմ, որ ԱԳՀՀՆ-ն լիովին կամ ճշգրտորեն հետեւել է FOI (Freedom of information) փոքրամասշտաբ դիմումին: Ես նկատում եմ, որ օրինակ 2001թ. մի գրություն պնդում է, թե «հետազոտող վերլուծաբանները» ուսումնասիրել են գիտական համայնքի տեսակետները. մեզ չի տրամադրվել ոչ մի նման փաստաթուղթ: 2005թ. հուլիսի 14-ի քննարկման ժամանակ լորդ Թրիսմենը կառավարության անոնից անդրադարձել է «Սիացյալ ազգերի կոնվենցիայի համաձայն պահանջվող եզրակացությանը, թե պետք է բացահայտել, որ պետությունն ունեցել է մտադրություն: Այսինքն՝ այն բաղադրիչը, թե իրավաբանները եզրակացրել են, այս դեպքում չի երեւում»<sup>75</sup>: Տրամադրված ոչ մի փաստացի հղումի մեջ ես չեմ տեսել, որ որեւէ իրավաբան երբեւէ «եզրակացություն» կամ խորհրդատվություն է տրամադրել կառավարությանը այդ հիմնախնդրի վերաբերյալ կամ առաջարկել է խորհրդատվություն: Եթե դա արվել է, ապա դժվար է պատկերացնել, որ այդ խորհրդատվության մասին որեւէ հիշատակում չէր արվի ԱԳՀՀՆ-ի փաստարդերում: Ինչեւէ, չնայած բացերին եւ խմբագրումներին՝ այժմ ես ունեմ բավականին նյութ՝ պատասխանելու համար այն հարցերին, որոնք կապված են ՆՍԿ քաղաքականության, դրա պատճառների եւ այն հարցի հետ, թե արդյո՞ք այդ պատճառները համապատասխանում են միջազգային իրավունքին:

### **Քաղաքական փաստաթղթեր՝ երկու հիմնական սխալ**

50. 1997թ. ի վեր Լեյբորիստական կառավարության քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը սկսվում են 1999թ. մարտի 8-ի Արեւելյան դեպարտամենտի պատասխանում եղած ձեւակերպմամբ՝ ուղղված լորդ Էյվերիին, ով կազմել էր 400 գիտական աշխատանքների գրականության ցանկ, որոնք պնդում են, թե հայկական

<sup>73</sup> Լին Ռոբս, Ռուսաստան, Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի տնօրինություն, ԱԳՀՀՆ, Բերնար Անդրնյանին, 13 մարտի, 2009թ.:

<sup>74</sup> Հուշագիր պ. Հոգին, 21 մարտի, 1995թ.:

<sup>75</sup> Լորդ Թրիսմեն, Լորդերի պալատ, Հեննարդ, 14 հուլիսի, 2005թ., Հավ. 1210:

ջարդերը հավասարազոր են ցեղասպանությամ<sup>76</sup>: Դեպարտամենտն ընդունում է, որ ոչ միջոցներ ունի, ոչ էլ հակված է ուսումնասիրելու այս հղումները, եւ նրանց ցանկացած եզրակացություն (օրինակ՝ որ ջարդերն անտարակույս հավասարազոր էին ցեղասպանության) չեր «ունենա որեւէ ազդեցություն ներկայիս քաղաքականության վրա»: Հուշագիրն ասում է, որ «վեճը նրանում չէ, թե ինչ է պատահել, կամ ինչ անուն տալ դրան», չնայած վեճը հենց դրա վերաբերյալ էր (այսինքն՝ պատահածն անվանել «ցեղասպանություն»): Արեւելյան դեպարտամենտը համարում է, որ ՆՍԿ-ի գործը չէ որոշել, թե ինչ է նշանակում ցեղասպանությունը. «հետազոտելը, վերլուծելն ու մեկնաբանելը պատմաբանների գործն է»: Այս հիմնարար սխալը կարելի է նկատել հենց ի սկզբանե, մասնավորապես այն, որ ՆՍԿ-ն ցանկանում էր, որ պատմաբանները լուծեն իրավաբանական խնդիրը: Թե ինչն է հավասարազոր ցեղասպանությանը, միջազգային իրավունքի համաձայն՝ դատողություն կատարելու խնդիր է, այլ ոչ թե պատմաբանների: Պատմաբանները հավաստում են փաստերը. իրավաբանները պետք է եզրակացնեն՝ արդյո՞ք այդ փաստերը հավասարազոր են միջազգային իրավունքի խախտման:

51. Այս հուշագրից պարզ է դառնում, որ Արեւելյան դեպարտամենտին պարզապես չի հետաքրքրում եւ ոչ էլ ուզում է, որ ՆՍԿ-ն հետաքրքրվի այն հարցով՝ արդյոք ջարդերը հավասարազոր են ցեղասպանության: Հուշագիրը նշում է, որ 600.000 հայեր սպանվել են, իսկ «եւս հարյուրիազարավորներ մահացել են փախուստի ժամանակ» (իրականում նրանք սպանվել են տեղահանվելու ընթացքում), իսկ «որոշ պատմաբաններ ասում են, թե գոյություն ունեն ապացույցներ, որ այդ մահերը դիտավորյալ պետական քաղաքականության մասն էին կազմում, կամ որ օսմանյան կառավարությունը գոնե լուս հավանություն է տվել սպանություններին: Սակայն սա ապացուցող ոչ մի փաստաթուղթ մեզ հայտնի չէ»<sup>77</sup>: Այստեղ մենք ունենք եւս մեկ սուստ լուր, որը սովորաբար եւ պարբերաբար հայտնվում է Արեւելյան դեպարտամենտի հուշագրում՝ այն հասկացությունը, թե պետք է լինի ինչ-որ գրավոր փաստաթուղթ, որը կպարունակեր հայ ժողովրդին բնաջնջելու մասին կառավարության կամ դեկավարության որեւէ որոշում: Անշուշտ, նացիստական Հոլոքոստի հետ կապված կամ (ինչպես Միջազգային տրիբունալը Ռուսական մատնանշել) Ռուսական ցեղասպանության հետ կապված ոչ մի նման փաստաթուղթ գոյություն չունի<sup>78</sup>: Ակնհայտորեն սխալ է ենթադրելը, որ պետք է

<sup>76</sup> Հուշագիր ԱԳՀՀ-ից նախարար Զոյս Քուինին, 8 մարտի, 1999թ., «Լորդ Էյվերիի նամակի» վերաբերյալ:

<sup>77</sup> ԱԳՀՀ Արեւելյան դեպարտամենտի հուշագիրն ուղղված նախարար Զոյս Քուինին եւ այլոց, 12 ապրիլի, 1999թ., Վերմագիր. Լորդերի պալատի շենտված հարց 14 ապրիլի. բարոնուի Քոքս, Հայկական ցեղասպանություն, պարագրաֆ 6:

<sup>78</sup> Սեղադրողն ընդդեմ Թեղեւստե Բագոստրայի եւ այլոց, Գործ № ICTR-98-41-T, Դատավճիռ, ՈՀՍՍ Վ.Պ, 18 դեկտեմբերի 2008թ., պար. 2088. «Actus reus հասկացության համաձայն պայմանավորվածությունը կարող է ապացույցն պարզելով ցեղասպանություն ծրագրելու համար հանդիպումների գոյությունը, սակայն դրա մասին կարելի է նաև եզրակացնել՝ իհմնվելով հանգանակային ապացույցների վրա: Անհատների խմբի համակարգված կամ կառավարվող գործողությունը կարող է ծառայել որպես պայմանավորվածության ապացույց»:

լինեն ցեղասպանություն գործելու մասին քաղաքական որոշման փաստաթղթային ապացույցներ, որպեսզի հնարավոր լինի ցեղասպանության դատավճիռ կայացնել:

52. Հուշագիրը շարունակում է անպատկառ կերպով քննարկել ցեղասպանությունը ճանաչելու գործընթացի ազդեցությունը եւ նշում է, որ «այս փուլում գործընթացը պարզվում է, որ չոնի բավականին աջակցություն կամ դեկավարում, որպեսզի լրջորեն անհանգստացնի ՆՍԿ-ին»<sup>79</sup>: Նախարարներին ուղղված այս անպատկառ ուղերձով խորհուրդ է տրվում հետեւել վաղուց հաստատված «գծին», ըստ որի.

*«ՆՍԿ-ն վաղուց ճանաչել է 1915թ. ջարդերը, եւ դրանք դատապարտվել են պառամենտի կողմից ամենախիստ արտահայտություններով, սակայն՝ ա) ոչ մի ապացույց չկա, որը ցույց կտար, որ օսմանյան կառավարությունը հասուկ որոշում է կայացրել այն ժամանակ իր տիրապետության տակ գտնվող հայերին բնաջնջելու մասին, բ) անցյալը մեկնարանները պատմարանների, այլ ոչ թե կառավարությունների գործն է»:*

53. Զեւակերպումը մարմնավորում է երկու հիմնարար սխալները: Առաջին հերթին դա չընդունելն է, որ գոյություն չունի պահանջ, թե ցեղասպանության հանցագործության համար անհրաժեշտ է, որ լինի կառավարության տիրապետության տակ գտնվող բոլոր հայերին բնաջնջելու մասին «որեւէ կառավարական որոշում» կամ որեւէ փաստագրական որոշում: Երկրորդը չընդունելն է, որ որոշելը, թե արդյոք անցյալում կատարված իրադարձությունները հավասարագոր են ցեղասպանության, թե ոչ, դա իրավական չորակացության խնդիր է, այլ ոչ թե պատմաբանների գործն է: Վերջին սխալը ձեւակերպվել է լորդ Էյվերիին ուղղված Արեւելյան դեպարտամենտի սեւագիր նամակում, որը նախարարին (Զոյս Քուինին) խնդրեցին հաստատել հետեւյալ ձեւով.

*«Ես շարունակում եմ վստահ լինել, որ Բրիտանիայի կամ որեւէ այլ կառավարության գործը չէ խոսել այնպիսի հարցերի մասին, որոնք ավելի ճիշտ կբննեն պատմաբանները: Մենք պետք են դա բողնենք փորձագետներին»<sup>80</sup>:*

Պատմաբանները, ինչպես ամեն ինչ շատ պարզ կդառնա, ամենեւին էլ ցեղասպանության վերաբերյալ փորձագետներ չեն: Սա Արեւելյան դեպարտամենտի կազմած նախագիծն էր, որ նախարարը չուղարկեց: Սակայն նա այնուամենայնիվ գրեց լորդ Էյվերիին 1999թ. փետրվարի 9-ին՝ ասելով, որ «անցյալը մեկնարանները պատմաբանների գործն է, եւ

<sup>79</sup> ԱԳՀՀՆ Արեւելյան դեպարտամենտի հուշագիրը՝ ուղղված նախարար Զոյս Քուինին եւ այլոց, 12 ապրիլի, 1999թ., Վերմագիր. Լորդերի պալատի շենտված հարց, 14 ապրիլի. բարոնուիկ Քոքս, Հայկական ցեղասպանություն, պարագրաֆ 9:

<sup>80</sup> Զոյս Քուինի նամակի նախագիծ՝ ի պատասխան լորդ Էյվերիին (առանց ամսաթվի):

հասարակությունը սովորում եւ օգուտներ է քաղում իրադարձություններին տված նրանց գնահատականներից: Ընդհանուր առմամբ, ես չեմ կարծում, թե անցյալի իրադարձությունների մասին այսօրվա արժեքների եւ մոտեցումների տեսակետից խոսելը ներկայիս կառավարության գործն է»<sup>81</sup>: Այն, որ արժեքներն ու մոտեցումները ժամանակ չեն ճանաչում, նախարարի մտքով չի անցել:

## 1999թ. Լորդերի պալատի բանավեճը

54. Խնդիրն իր գագաթնակետին հասավ մի քանի ամիս հետո Լորդերի պալատում քարոզուի քորսի ձեռնարկած համապարփակ բանավեճի ժամանակ: Արեւելյան դեպարտամենտի ծանուցագիրը խնդիրը ուղղակիորեն դրեց հեռանկարի վրա: Դրանում ուղղակիորեն ասվում էր.

«ՆՄԿ-ն երիկական առումով քննադատության համար քաց է: Սակայն ընդունելով Թուրքիայի հետ մեր հարաբերությունների (քաղաքական, ուղմակարական եւ առեւտրային) կարեւորությունը որպես ելակետ, եւ այն, որ ցեղասպանության ճանաչումը թե՛ ՄԹ-ին, թե՛ կոտորածից այսօր ողջ մնացած սակավարիկ մարդկանց գործնականում որեւէ օգուտ չի բերի, ու նաեւ չի օգնի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ բարեկամական հարաբերությունները վերականգնելուն՝ ընթացիկ ուղղությունը միակ նպատակահարմար տեսակետն է»<sup>82</sup>:

55. Սա հաջորդ տասնամյակի համար բացահայտում է Լեյբորիստական կառավարության նախարարներին ուղղված ԱԳՀՀՆ-ի կողմից որդեգրված դիրքորոշման հետեւում քաքնված ցինիկ ճշմարտությունը, որը գրեթե աներկրայորեն, առանց առարկության ընդունվել է նրանց կողմից, այսինքն՝ այն, որ նրանց կողմից որդեգրված դիրքորոշումը քաց էր երիկական քննարկման համար, սակայն Թուրքիայի հետ տնտեսական, ուղմակարական եւ քաղաքական լավ հարաբերություններ պահպանելու կարեւորությունը նշանակում է, որ այդ երիկական կողմը պետք է անտեսվի, որ չկա դրան փոխարինող որեւէ օգուտ՝ այնպիսի պատասխան տալու համար, որը կհարուցեր նրանց դժգոհությունը: Այլ կերպ ասած՝ հենց այս ցեղասպանությունը չէր կարող ճանաչվել ոչ թե այն պատճառով, որ այն տեղի չէր ունեցել, այլ որովհետեւ դա անելը քաղաքականապես եւ տնտեսապես անհարմար էր:

<sup>81</sup> Զոյս Քուինի նամակը լորդ Էյվերիին, 9 փետրվարի 1999թ.:

<sup>82</sup> Հուշագիր ԱԳՀՀՆ Արեւելյան դեպարտամենտից նախարար Զոյս Քուինին եւ այլոց, 12 ապրիլի, 1999թ.: Վերնագիր՝ Լորդերի պալատի շնչված հարցը, 14 ապրիլի. քարոզուի քորս, Հայկական ցեղասպանություն:

56. Այս ծանուցման մեջ, թվագրված 1999թ. ապրիլի 12-ով, ԱԳՀՀՆ-ն կրկնում էր ծանոթ եւ կրկնակի սխալական երրումը, թե «մենք տեղյակ ենք, որ չկա որեւէ ապացույց, որ Օսմանյան ղեկավարության կողմից այդ օրերում դիտավորություն է եղել ոչնչացնելու հայերին (ցեղասպանության հանցագործության հիմնական բաղադրատարրը), եւ դա պատմաբանների եւ ոչ թե կառավարությունների խնդիրն է որոշել, թե ինչ էր պատահել»<sup>83</sup>: ԱԳՀՀՆ-ն նոյնիսկ բարձրաձայնեց նախազգուշացնող ծանուցագիր Պետական քարտուղարի կողմից «ցեղասպանություն» բառը օգտագործելու համար Միլոշեիչի եւ նրա սերբական զինված ուժերի կողմից Կոսովոն «էթնիկապես գտելը» նկարագրելիս. անհանգստություն կար, որ դա կիրակրեր հայկական ջարդերին նոյն որակավորումը տալու պնդումներին, որոնց «էթնիկական գտումները» տեղահանությունների ձեւով, այնուամենայնիվ, կոսովացիների տառապանքների համեմատ ծանրության շատ ավելի բարձր աստիճան ունի, քանի որ նրանք չեն դատապարտվել սովամահության եւ հարձակումների՝ ոչնչացվելով հարյուրհազարներով:
57. Այս ծանուցագրին կցված էր ելույթի նախագիծ, որը բարոնուի Ռամսեյը, խոսելով կառավարության անունից, արտասանեց փաստորեն բառացիորեն ապրիլի 14-ին<sup>84</sup>: Բացի պնդելը, որ «հայերին ոչնչացնելու հատուկ որոշում չի եղել»՝ ելույթը քննարկում էր նաև այն հարցը՝ արդյո՞ք անհրաժեշտ է ՀՀՍ կամ ՌՀՍ կարգի տրիբունալ հիմնել խնդիրը լուծելու համար, բայց եւ նշում էր, որ համապատասխան պաշտպանյալները վաղուդ արդեն մահացել էին, եւ ասում, որ «դեռեւս որոշված չէ՝ արդյո՞ք... հնարավոր կիմի ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառումը», տեսակետ, որին մի քանի տարի անց պ. Զեֆ Հունը ՊԱ պետք է վերադառնար: Դա անհաջող տեսակետ է այն առումով, որ օրենքի հետադարձ կիրառման սկզբունքը տարածվում է անհատների դեմ գործած այն քրեական հանցագործությունների վրա, որոնք դրա կատարման պահին ենթադրաբար հանցագործություն չեն համարվում: Ոչ ոք չի առաջակում, որ պետք է քրեական հետապնդում կիրառել վաղուց մահացած մարդկանց նկատմամբ, խնդիրն այն է՝ արդյո՞ք հայերի զանգվածային սպանությունները հստակորեն որակված են որպես «ցեղասպանություն»՝ համաձայն ՍԱԿ-ի 1948թ. ընդունած Կոնվենցիայի:
58. Արեւելյան դեպարտամենտի հաղորդագրությունը ընթերցվել էր առնվազն մեկ նախարարի՝ Զոյս Քուինի կողմից: Նա բացառություն էր կազմում դրանում պարունակվող «ցեղասպանության միտման» ծայրահեղական դիրքորոշման հարցում, որը ներառում էր այնպիսի տողեր, ինչպես «մենք տեղյակ ենք, որ չկա որեւէ ապացույց, որ Օսմանյան ղեկավարության կողմից այդ օրերին դիտավորություն է եղել ոչնչացնելու հայերին», եւ

<sup>83</sup> Հուշագիր ԱԳՀՀՆ Արեւելյան դեպարտամենտից նախարար Զոյս Քուինի 12 ապրիլի, 1999թ.: Վերնագիր. Լորդերի պալատի շնչված հարցը, 14 ապրիլի. բարոնուի Քորս, Հայկական ցեղասպանություն:

<sup>84</sup> Տե՛ս վերեւում՝ պարագափ 4. բարոնուի Ռամսեյ, Լորդերի պալատ, Համսարդ, 14 ապրիլի, 1999թ., Մաս 826:

«ՆՄԿ-ն ոչ մի ուղղակի ապացույց չունի այն մասին, թե ինչու այդ ջարդերը տեղի ունեցան»: Բանավեճից մեկ օր առաջ Քուինը ոչ պաշտոնապես եւ հստակ նշեց, որ մտադրության հարցը երբեք չի ուսումնասիրվել կառավարության կամ ԱԳՀՀՆ-ում որեւէ մեկի կողմից<sup>85</sup>: Այս հատվածները, ըստ կարգի, ջնջվեցին, սակայն հենց միայն այն փաստը, որ ԱԳՀՀՆ-ն առանց որեւէ ուսումնասիրության կարող էր պետնախարարին տեղեկացնել, որ չկա որեւէ անհերքելի ապացույց մտադրության մասին (արդյո՞ք նրանք տեղյակ չեն դեսպան Մորգենթաուի եւ Թալեարի գրույցների կամ Հարբորդի գեկույցի, Սեւրի պայմանագրի կամ Կ.Պոլսի դատարանի դատավճռի մասին), եւ այն, որ չկա առաջին ձեռքից որեւէ ապացույց այն մասին, թե ինչու ջարդերը տեղի ունեցան (անտեսելով հարյուրավոր վկաների, միսիոներների, դեսպանության աշխատակիցների եւ այլոց վկայությունները), ցույց է տալիս այն, թե այդ ժամանակ որքան խորն էր ցեղասպանության ժխտումը արդեն արմատավորվել Արեւելյան դեպարտամենտում: Բավարար ապացույցի հիման վրա «մարդկության դեմ գործած հանցագործության» համար Բրիտանիայի կողմից 1915թ. Թուրքիային դատապարտումը այլեւս չի հնչում ԱԳՀՀՆ-ի միջանցքներում, որը հիմա թվում է, թե ձգտում է ամբողջովին փակել աչքերը ցեղասպանության վրա՝ Թուրքիայի հետ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների շահերից ելնելով:

## Երեք «ժխտող» պատմաբաններ

59. Բանավեճից մի քանի օր հետո Թուրքիայի դեսպանը ԱԳՀՀՆ-ի մի քանի նախարարների՝ Զոյս Քուինի, Զեյյը Վազի եւ բարոնուի Սքոթլանդի հետ նամակագրություն սկսեց, ինչը շարունակվեց հաջորդ տարիների ընթացքում: Նա նրանց ամերիկացի պատմաբան Ջասթին ՄըքԶարթիի աշխատությունից քաղվածքներ ուղարկեց, որտեղ նկարագրվում էր, որ 1915թ. սպանությունները իրականացներին նույնիսկ մինչեւ այսօր: Նա պնդում էր, որ ավելի շատ հայեր, քան թուրքեր էին զոհվել ավելի ուշ ոչ թե կառավարության գործողությունից, այլ «սովոր, իիվանդությունից եւ պարտիզանների հարձակումներից, որոնց այդ ժամանակ իշխանությունները անզոր էին կանխել»<sup>86</sup>: Թուրքիայի դեսպանությունը բավարարված էր ԱԳՀՀՆ-ի՝ ցեղասպանության ճանաչումը մերժելու դիրքորոշումով («անհերքելի ապացույցների բացակայությամբ՝ ցույց տալու, որ օսմանյան դեկանակարությունը հայերին ոչնչացնելու հասուկ որոշում էր ընդունել...»): Սա,

<sup>85</sup> Նամակ Արեւելյան դեպարտամենտին, ուղարկողի անունը խմբագրված է, սակայն այն գրված է Զոյս Քուինի անունից, 13 ապրիլի, 1999թ.:

<sup>86</sup> Նամակ, Թուրքիայի Ժամանակավոր հավատարմատարը բարոնուի Սքոթլանդին (Ըստ Պետական քարտուղարի, ԱԳՀՀՆ), 7 օգոստոսի, 2000թ.:

կարծում ենք, «ճիշտ տեսակետ է, եւ մենք հույս ենք հայտնում, որ այն աջակցություն կստանա»<sup>87</sup>:

60. Այս հույսը լավ հիմնավորված էր: Քեյք Վազը Թուրքիայի դեսպանին<sup>88</sup> հաղորդեց, որ կառավարությունը մերժել է հայկական ջարդերը ընդգրկել Հոլոքոստի հիշատակության օրվա մեջ: Պ.Վազը հստակեցնում է, որ այս որոշումը արտահայտում էր «միջդեպարտամենտական ընդլայնված խորհրդակցությունները, ներառյալ ԱԳՀՀՆ-ն»: Հայկական ջարդերը Հոլոքոստի հիշատակման օրվա մեջ բացառելու այս հակասական որոշման վրա ազդել է Արեւելյան դեպարտամենտի հեռանկարը, ինչը չափից շատ է շահագրգոված Թուրքիայի հետ լավ հարաբերություններ պահպանելու հարցում:
61. Պ.Ջասթին Մըքքարթին՝ քուրքական կառավարության կողմից առաջադրված պատմաբանը, Լուիսվիլի համալսարանի պրոֆեսոր է: Նա այլ շեշտադրում է կատարում, սակայն ես նրա վերլուծությունները համարում եմ ո՞չ իրավաբանորեն ճիշտ, ո՞չ էլ ցեղասպանության տվյալները փաստացի բացառող: 1915թ. դեպքերը նա դիտարկում է որպես քաղաքացիական պատերազմ եւ այն բնորոշում որպես «... ոչնչացման պատերազմ: Եթե դու բոնվեիր հակառակորդի կողմից, դու կսպանվեիր: Կողմերից ոչ մեկը չէր խնայում կանաց եւ երեխաներին»<sup>89</sup>: Այս բնութագրումը կարող է համապատասխանել ցեղասպանության սահմանմանը, եթե մի կողմի սպանությունները ուղղված կամ քույլատրված էին դրա կառավարության կամ պաշտոնական դեկանական կողմից ռասայական կամ կրոնական հիմքերով:
62. Մըքքարթին հնարավոր է համարում, որ օսմանյան կառավարությունը

«հրամայել էր Ամաստոլիայի հայերին տեղահանել Սիրիա ... հարկադիր երթերի արդյունքում հայերի մեծ մասը մահացավ սովոր եւ հարձակումներից, նրանցից շատերը սպանվեցին իրենց տարրեր ցեղերի կողմից, ովքեր ներքաշված էին հայերի հետ մահացու պատերազմի մեջ: Այլ հարց չկա՝ բացի նրանից, որ շարասյուները օսմանցիների կողմից լավ պաշտպանված չէին: Այնուամենայնիվ, ավելի քան 200.000 տեղահանված հայեր ապահով հասան Մեծ Սիրիա»<sup>90</sup>:

Սա, իսկապես, ամբողջությամբ համապատասխանում է ցեղասպանության սահմանմանը. այն, որ որոշ զոհեր փրկվել էին (ինչպես տեղի ունեցավ նացիստական Գերմանիայում, Ռուսականում եւ նույնիսկ Կամբոջայում), որեւէ կապ չունի խնդրի հետ:

<sup>87</sup> Նոյն տեղում, էջ 3:

<sup>88</sup> Նամակ Քեյք Վազից դեսպան Հ.Է. Կորկմազ Հակտանիրին, 6 փետրվարի, 2001թ.:

<sup>89</sup> Justin McCarthy, *The Ottoman Turks: an Introductory History to 1923*. (Longman 1997) էջ 365:

<sup>90</sup> Նոյն տեղում, էջ 365:

Կառավարությունը պատասխանատվություն է կրում սրբնաց արշավի մասին հրաման արձակելու եւ շարասյուներին համապատասխան պաշտպանություն չապահովելու որոշման համար՝ զիտակցելով, որ «մահվան երթերում» շատերը կսպանվեին: Մըքջարքին մի պատմաբան է, որ թվում է, թե չի հասկանում ցեղասպանության հիմքում ընկած օրենքը, եւ այդ պատճառով թյուրիմացաբար նշում է<sup>91</sup>, որ «եթե դա լիներ ցեղասպանություն, ապա դա շատ տարօրինակ ցեղասպանություն էր, որտեղ իրականում շատ ավելի մարդասպաններ ոչնչացան, քան զոհեր»: Թվերը նշանակություն չունեն, կարեւոր է ցեղասպանության դիտավորությունը: Բացի այդ՝ 1915թ. զոհերը գերազանցապես հայեր էին, մինչդեռ Մըքջարքնին հաշվում է թուրքական կորուստները Դարդանելում եւ ոռուսական ռազմաճակատում, ինչը կարող էր ամբողջությամբ կեղծ տպավորություն բողնել, քանի որ այդ թուրքերից շատերը սպանվել էին դաշնակիցների եւ ոչ թե հայերի կողմից: Նույնիսկ ընդունելով այդ աղավաղված թվերը՝ հայերը շատ ավելի զգալի թվով էին սպանվել, քան թուրքերը: Թվերը աղավաղված են, եթե ենթադրությունը կատարվում է այն թուրքերի հետ, ովքեր սպանվել էին հայ պարտիզանների կողմից ավելի ուշ՝ 1916թ. ոռուսական բանակի ներխուժման ժամանակ: Դրանից հետո իհարկե կային ջարդեր, եւ հայկական թուրք պատմաբանը մոտավորապես 40.000 թուրք զոհերին վերագրում է հայերին<sup>92</sup>: Ակնհայտ է, որ Մըքջարքին համակրում է թուրքական դիրքորոշմանը, քայց նրա գործը չի (ինչպես ավելի ուշ ՆՍԿ-ն պնդում էր, տես պարագրաֆ 67 եւ 84) հերքում ցեղասպանության մեղադրանքը: Շշմարտությունն այն է, որ Օսմանյան կայսրության հայերի մեծ մասը զոհվեց, եւ Անատոլիայում նրանցից քչերը ողջ մնացին:

63. Զասքին Մըքջարքին այն երեք պատմաբաններից մեկն է, ում դիրքորոշման վրա հենվում է ԱԳՀՀՆ-ն ցեղասպանության հարցից խուսափելու իր դիրքորոշման համար: ԱԳՀՀՆ-ի նյութում, այնուամենայնիվ, ես նկատում եմ, որ նա ընդունում է, որ կես միլիոն հայեր էին զոհվել: Նա ավելացնում է, որ «օսմանյան պետության դեմ նրանց զինված ապստամբությունն էր դրա պատճառը՝ չնայած երթերի զոհերի մեծ մասը կանայք, երեխաներ եւ ծերեր էին, եւ սա ավելի շատ քարոզություն է, քան ճշգրիտ մեկնաբանություն: Նա շարունակում է՝ ընդունելով, որ մահվան պատճառները «երկարատեղ երթից թուլությունը, հյուծվածությունը, կլիմայի կտրուկ փոփոխությունը եւ հարուստ պահակագորի վրա ավագակների հարձակումներն էին կյանքի համար վտանգավոր բոլոր պայմանները, որոնց մասին տեղահանությունների հրաման արձակողները պետք է իմանային (եւ ցանկացած մեկը, ով ուսումնասիրել է խոնված

<sup>91</sup> Ինչպես 1999թ. ապրիլի 19-ի մի նամակում մեջբերում է Թուրքիայի դեսպանը, չնայած Մըքջարքի քաղվածքին հղում արված չէ: Էլեկտրոնային կայքը <http://www.turkish forum.com.tr/en> հղում է անում. Զասքին Մըքջարքի, «Հայկական ահարեկչություն. պատմությունը՝ որպես թույն եւ հակառույն», Միջազգային ահարեկչության մասին զիտաժողովի արձանագրություններից, Անկարայի համալսարանի իրատարակչություն, 1984թ., էջ 85-94:

<sup>92</sup> Ahmed Emin, *Turkey in the World War* (Yale University Press, 1930) էջ 222:

ամբոխների այդ ժամանակների նկարները, որոնք քարշ էին տալիս իրենց աղքատիկ ունեցվածքը, կարող են նրա՝ «հարուստ ուղեկցող պահակախմբի» նկարագրությունը համարել մոլորեցնող եւ տիած): Նա ավելացնում է, որ «հաշվարկված է, որ թուրքերը կորցրել են մոտ մեկ միլիոն մարդ նույն պատճառների հետեւանքով», բայց ո՞ւմ կողմից է հաշվարկված, ո՞ր ժամանակահատվածի համար: Օսմանյան կառավարության հրամանով մահմեդականների տեղահանություն չի եղել, եւ համեմատաբար սակավաբիկ թուրք\_զոհեր են եղել հայկական չորս քաղաքների խոռվությունների ժամանակ (որոնցից միայն մեկը՝ Վանը, հաջողության հասավ): Իհարկե, հազարավոր մահմեդականներ տեղափոխվեցին (այն տներից, որոնք շատ դեպքերում նրանք խլել էին տեղահանվածներից) Անատոլիայի շրջաններ ոուսական բանակի (որտեղ կար հայ կամավորականների ստորաբաժանում) առաջխաղացման հետեւանքով, եւ շուրջ մեկ միլիոն թուրքեր զոհվեցին այն պատերազմի ընթացքում, որին օսմանյան կառավարությունը նախընտրել էր մասնակցել Գերմանիայի կողմից, սակայն ենթադրել, որ սա ամեն դեպքում ցեղասպանության արդյունք էր, երեսպաշտություն կլիմեր. իրար հետ համեմատվում են ոչ համարժեք երեւույթներ (Հոլոքոստի սարսափը չի կարող մեղմացվել ընդամենը արդարացմամբ՝ ասելով, որ Երկրորդ համաշխարհային պատերազմում ավելի շատ գերմանացիներ են զոհվել, քան հրեաներ): Անընդունելի է, որ ԱԳՀՀՆ-ն պետք է այդքան վստահի, որքան նա վստահում է մի ամերիկացի այրոֆեսորի, ում աշխատանքը փաստացիորեն (շնայած նրան, որ թուրք դեսպանը կարող է այդպես մտածել) չի հերքում այն փաստերը, որ օրենքի համաձայն կարող են որակվել ցեղասպանություն:

64. 2001թ. Արեւելյան դեպարտամենտը մեկ այլ թուրքամետ առաջարկություն եւս արեց, երբ Լորդ Բիֆֆինի կողմից բարձրացված՝ Հոլոքոստի օրվանից բացառման հարցերին պատասխաններ էր պատրաստում: Նախընտրելի մի մոտեցումն այն էր, որ «դեսպերի մեկնարանությունը դեռևս պատմաբանների միջեւ անկեղծ քննարկման առարկա է»: Ելակետային մի ծանրազիր կա, որում ասված է, որ «հետազոտող վերլուծաբանները անցյալ տարի դարձյալ գիտական համայնքում տեսակետների հավասարակշռություն էին դիտարկում. նրանք հաստատում են, որ անհամաձայնությունները մնում են»<sup>93</sup>: Նման վերլուծություններ չեն բացահայտվել, եւ ԱԳՀՀՆ-ն Տեղեկատվության ազատության դիմումին ուղեկցող նամակով պատասխանելով հերքում է, որ այդ կարգի իմշ-որ բան գոյություն ունի (տե՛ս վերեւում՝ պարագրաֆ 47): Դեռևս չկա ըմբռնումը այն բանի, որ գիտնական պատմաբանները փաստեր են հաստատում, իսկ ցեղասպանության հարցը իրավական քննության առարկա է: Այսպես, թե այնպես ակնհայտ է, որ պատմաբանների գգալի մեծամասնությունը այդ շրջանի վերաբերյալ արձանագրել է փաստեր, որոնք

<sup>93</sup> ԱԳՀՀՆ-ն ելակետային փաստաբուղթ լորդ Բիֆֆենի բարձրացրած հարցի վերաբերյալ, քննարկման է ներկայացվել 25 հունվարի, 2001թ.:

համապատասխանում են միայն ցեղասպանությանը, եւ նույնիսկ Զաքին Մըքջարքիի աշխատանքը, որի վրա հենվում է թուրքական կառավարությունը, չի բացառում իրավական այս բնորոշումը:

65. ԱԳՀՀՆ-ի 2001թ. նախնական պատասխանը, որ բարոնուի Սքոթլանդի պետք է փոխանցեր լորդ Բիֆֆինին, պնդում էր, որ «քաջի այդ՝ կառավարության իրավախորհրդատուները ասել են, որ ՄԱԿ-ի 1948թ. Յեղասպանության կոնվենցիան, որը ամեն դեպքում չունի հետադարձ կիրառություն, կազմվել էր ի արձագանք Հոլոքոստին, եւ քանի որ եզրույթը կարող է կիրառվել այն ողբերգությունների համար, որոնք տեղի էին ունեցել Հոլոքոստին հաջորդող ժամանակաշրջանում, ինչպես Ռուսական պատմություն էր, այն չի կարող հետադարձ կիրառություն ունենալ»<sup>94</sup>: Սա կարծես ինչ-որ կասկածելի փորձ է պառամենտին կուրացնելու ինչ-որ կեղծ իրավական գիտությամբ, եւ եթե կառավարության իրավախորհրդատունները երբեւ ասել են, որ եզրույթը չի կարող կիրառվել Հոլոքոստին նախորդող դեպքերի համար, ակնհայտ է, որ նրանք սխալվում են: Իհարկե, «ցեղասպանությունը» կարող է հետադարձ կիրառվել, եւ հաճախ էլ կիրառվում է, օրինակ՝ քասմանյան արորիզեններին 1830-ականներին ոչնչացնելու փորձի համար<sup>95</sup>: Յեղասպանություն հանցագործության համար հետադարձ ուժով դատական կարգով հետապնդումը (ի տարբերություն ռազմական հանցագործությունների կամ մարդկության դեմ հանցագործությունների) չի կարող կիրառվել Յեղասպանության կոնվենցիայից առաջ իրականացվածի նկատմամբ (տե՛ս վերեւում՝ պարագրաֆ 29), բայց դա բոլորովին այլ խնդիր է: Ավելին՝ 1948թ. Կոնվենցիան չէր ստեղծվել գուտ Հոլոքոստին ի պատասխան: Պատմական ապացույցները ցույց են տալիս, որ Ռաֆայել Լեմկինը հենց հայոց ցեղասպանությունը ի նկատի ուներ Կոնվենցիայի սկիզբը դնելիս, որի Նախարանի մեջ անուղղակի հղում է արված հայոց ցեղասպանությանը (տե՛ս վերեւում՝ պարագրաֆ 27): Քաղաքականության փաստաթղթերում կառավարության իրավաբանների առաջարկությանը որեւէ հղում չկա, ովքեր, եթե այդպիսիք կան, պետք է որ ծանոթ չինեին Յեղասպանության կոնվենցիայի նախապատմությանը:
66. ՄԹ քաղաքականությունը հաջորդ անգամ քննարկվեց 2004թ.-ին՝ այն բանից հետո, երբ Հայաստանի կառավարությունը վիրավորվեց, երբ Բրիտանիայի դեսպանը ոչ դիվանագիտորեն շեշտեց այն տեսակետը, որ «չկա անհերքելի ապացույց», որ երբեւ այդ ցեղասպանությունը տեղի է ունեցել: Պետքարտուղար Բիլ Ռամնելին ուղղված մի

<sup>94</sup> Խորհրդարանական հարցման ելակետային փաստաթուղթ՝ կապված 2001թ. հունվարի 25-ին լորդ Բիֆֆինի կողմից գրավոր ներկայացրած մի հարցի քննարկմանը. բարոնուի Սքոթլանդի պատասխանի նախագիծ:

<sup>95</sup> Ամբողջ ռասան բնաջնջվեց բրիտանացի զինվորների եւ դատապարտյալների ու վերաբնակիչների կողմից Տասմանիայի մայրամաքային մասում. 47 կմնանի մնացածներն աքտորվեցին դեպի մի հեռավոր կղզի: 1938թ. մի խորհրդարանական հանձնաժողով գեկուցեց, սըր Գիլբերտ Մյորբերի հաստատմաբ, որ սա «անմարտելի բիծ է» Բրիտանիայի հեղինակության վրա. ցեղասպանության հանցագործությանը հարմար մի նկարագրություն՝ Լեմկինի կողմից այդ բառը ստեղծելուց մեկ դար առաջ:

հուշագիր (գրված ԱԳՀՀՆ պաշտոնյա Սայմոն Բարի կողմից) ընդունում է, որ «Թուրքիան զգալի դիվանագիտական աղբյուրներ է օգտագործում հնարավոր որեւէ ճանաչում վիմեցնելու համար»: Թուրքիան ամեն դեպքում խստորեն կարձագանքի ՄԹ կողմից ճանաշման ցանկացած առաջարկին»<sup>96</sup>: Սա էր այն պատճառը, որ Բաթթը առաջարկեց, որ քաղաքականությունը պետք է պահպանվի:

67. Ինչ-որ մի պահի 2004թ. կամ 2005թ. (բացահայտված հուշագրերը թվագրված չեն) ԱԳՀՀՆ-ն նախարարներին տվեց սովորական երդումը Պալատում պատասխանների համար, սակայն առաջարկում էր, որ «Եթե ճնշում լինի», նրանք կարող էին ավելացնել.

*«Պատմաբանների շրջանում անկեղծ բանավեճ կա այն մասին, թե արդյո՞ք 1915-16թթ. դեպքերը համապատասխանում էին ցեղասպանությանը, ինչպես սահմանված է 1948թ. ՍԱԿ Կոնվենցիայում: Անվանի պատմաբաններ, ովքեր առաջարկում են ցեղասպանության որակման դեմ՝ ներառյալ պրոֆ. Քեռնար Լյուիսը նախկինում Փրիմարոնից, դոկտոր Լոուրի Փրիմարոնից եւ այրոֆ. Չասթին Մըքջարքին Լուիսվիլի համալսարանից»<sup>97</sup>:*

Թուրքիայի դեսպանը, ինչպես տեսանք, Չասթին Մըքջարքից տեքստը ներկայացրեց 2001թ., եւ հաջորդ փոխանակումը ենթադրում է, որ այս երեք անունները ի սկզբանե կարող են ներկայացված լինել ԱԳՀՀՆ-ի հետազոտող քրեյդ Օլիֆանտի կողմից (տես՝ ստորև՝ պարագրաֆ 83-84): Դրանք առաջին անգամ հայտնվեցին 2001թ. Ջեյք Վազի կողմից ՊԱ-ին գրված նամակում, ով հարցնում էր, թե ինչ աղբյուրների վրա էր ԱԳՀՀՆ-ն հենվում<sup>98</sup>: Վազը գրել է. «Պրոֆեսոր Քեռնար Լյուիսը նախկինում Փրիմարոնից... 1993թ. ասաց, որ դա «խիստ կասկածելի է, որ թուրքերը իրականացրել էին բնաջնջման համակարգված քաղաքականություն»: Նա ավելացրեց, որ թե՛ Հեթ Լոուրին, թե՛ Չասթին Մըքջարքին «վիճարկում են, որ ապացույցները հիմնավորում են ցեղասպանության վճիռ»:

68. Քեռնար Լյուիսը Սերձավոր Արեւելքի գծով ուսումնասիրությունների հայտնի պրոֆեսոր է: Սակայն 1993թ. *Le Monde* տրված հարցազրույցում Վազը չեր բացահայտել, որ նրա դիտողությունների պատճառով նա Ֆրանսիայում դատական կարգով պատասխանատվության է ենթարկվել եւ տուգանվել (թեեւ ընդամենը մեկ ֆրանկով) հայոց ցեղասպանությունը ժխտելու համար<sup>99</sup>: Ավելի ուշ հարցազրույցում նա ասաց, որ «ոչ ոք չի կասկածում, որ սարսափելի դեպքերը տեղի են ունեցել», եւ որ հարյուրավոր հայեր են

<sup>96</sup> Հուշագիր Պետական քարտուղար Բիլ Ռամմելին Սայմոն Բարից՝ վերնագրված «Հայաստան. բանավոր նոտա Հայաստանի ԱԳՆ-ից», 19 մարտի, 2004թ.:

<sup>97</sup> Փաստաբուղ՝ վերնագրված «Հայաստան. պետական ուղղություններ» (շրվագրված): Այն բացառում է Քեն Ուրարերի գեկույցը, տես՝ ստորև, պարագրաֆ 72:

<sup>98</sup> Նամակ Ջեյք Վազը (Եվրոպայի հարցերով նախարար) Զուլիա Դաունին, ՊԱ, 12 մարտի, 2001թ.:

<sup>99</sup> Տես՝ նամակ՝ ուղարկված Փրիմարոնի շրջանավարտների ամսագրին պրոֆ. Քեռնար Լյուիսին, 15 հունիսի 1996թ. [http://www.princeton.edu/~paw/archive\\_old/PAW9596/16\\_9596/0605let.html#story3](http://www.princeton.edu/~paw/archive_old/PAW9596/16_9596/0605let.html#story3):

զոհվել<sup>100</sup>: Նա բացատրեց, որ *Le Monde*-ում նա ընդամենը փորձել էր հերքել այն պնդումը, որ սերտ զուգահեռ կա հայերի տառապանքների եւ նացիստական Գերմանիայում հրեաների տառապանքների միջեւ. առաջինների որոշ մասը ակտիվորեն պայքարում էին պետության դեմ, մինչդեռ վերջինները ոչ մի տեսակի գինված ընդիմություն չեն ցուցաբերում նացիստական կարգերի նկատմամբ: Նա ընդունում էր, որ «անշուշտ, քուրքերը դիմեցին շատ դաժան միջոցների» հայ ազատամարտիկներին ճնշելու համար, սակայն պնդում էր, որ «կա հստակ ապացույց այն բանի, որ քուրքական կառավարության կողմից որոշում էր ընդունվել տեղահանելու հայ ազգաբնակչությանը... սակայն չկա ապացույց զանգվածային սպանությունների որոշման վերաբերյալ...»<sup>101</sup>: Լյուիսը չի հասկանում, որ ցեղասպանության որոշումը կարող է ընդունված լինել կառավարության հստակ պլանավորված ձախողման ներքո պաշտպանելու նրանց, ում նա տեղահանում էր, որոնց մեծամասնությունը՝ կանայք եւ երեխաներ իհարկե ակտիվորեն չեն պատերազմում պետության դեմ: Լյուիսը դժգոհություն է հայտնում, որ «ներկայումս «ցեղասպանություն» բառը շատ ազատորեն է կիրառվում նույնիսկ այդ դեպքերի համար, որտեղ արյունահեղություն ընդհանրապես չի եղել»<sup>102</sup>: Դա այն դժգոհությունը չէ, որ կարող է արվել այն դեպքերը «ցեղասպանություն» որակելու դեմ, որտեղ առանձին ռասայի մոտ կեսը ոչնչացվեց: Վազի նամակը ենթադրում էր, որ Լյուիսը ԱԳՀՀ-ի «աղբյուր է», սակայն փաստաթղթերում չկա որեւէ ապացույց, որ նրա հետ երբեւէ խորհրդակցել են: Շատ հնարավոր է, որ ԱԳՀՀ-ն ուշադրություն դարձրեց նրա կարծիքին միայն նրա դատական կարգով հետապնդվելու հրապարակայնության հետևանքով:

69. Դոկտոր Հեթ Լոուրին հակասական անձ է, նա հրահրեց «Հեթ Լոուրիի գործը» այն բանից հետո, եթք Փրինսրոնի համալսարանը մեծ գումար ընդունեց քուրքական կառավարությունից եւ նրան նշանակեց «Աքարուրքի ամբիոնում», որը այդ կառավարությունը հովանավորում էր: Տարածայնությունը ջրի երես ելավ, եթք բացահայտվեց, որ նա ցեղասպանությունը ժխտելու նամակներ էր պատրաստել թուրքիայի դեսպանի համար<sup>103</sup>: Թե՛ դրկտոր Լոուրին, թե՛ համալսարանը դատապարտվեցին հանրագրով շուրջ հարյուր առաջատար գրողների եւ գիտնականների կողմից՝ ներառյալ Արքուր Միլերը, Հարոլդ Փինթերը, Սյուզան Չոնթագը, Ռիլյան Ստայրոնը, Չոն Ափդաքը, Կուրտ Վոնեգուտը, Նորման Սեյլերը, Սիմուս Հինին, Դերորա

<sup>100</sup> Տե՛ս Փարիզի առաջին ատյանի դատարանի դատավճռը, 21 հունիսի, 1995թ., որը մեջբերում է 1993թ. նոյեմբերի 18-ի *Le Monde* հարցազրոյցը եւ 1994թ. հունվարի 1-ին *Le Monde* տպված «Բեռնար Լյուիսի առաջարկած պարզաբանումը» կայքում.

[http://www-genocide.org/Affirmation.240/current\\_category.76/affirmation\\_detail.html](http://www-genocide.org/Affirmation.240/current_category.76/affirmation_detail.html)

<sup>101</sup> Պրոֆեսոր Բեռնար Լյուիս, Ազգային մամուլի ակումբում արված մեկնաբանություններ, 14 ապրիլի, 2002թ.: Տե՛ս տեսանյութը կայքում.

<http://www.armenian-genocide.com/2007/10/professor-bernard-lewis-conemns.html>

<sup>102</sup> Նոյեմբերի:

<sup>103</sup> Roger W. Smith, Eric Markesen, and Robert Jay Lifton “Professional Ethics and the Denial of Armenian Genocide” *Holocaust and Genocide Studies*, Vol. 9 Number 1, Spring 1995, էջ 1-22:

Լիփստադտը եւ Ալեն Գինզբերգը: Արդարացի կլիներ նշել, որ գրողները հավանաբար պատմաբաններից շատ չեն խորացել ցեղասպանության օրենքի էռության մեջ, եւ պարզվում է, որ դոկտոր Լոուրին, իր անձնական հնարավորությունները օգտագործելով, իրականում չի ժխտել է ցեղասպանությունը, այլ պարզապես ասել է, որ նա պատրաստ չէ զանգվածային սպանություններին այս որակումը տալ, քանի դեռ ամբողջությամբ չի ուսումնասիրել օսմանյան արխիվները: Նա նշում էր, որ նա «չի կարող ընդունել այս մարդկային ողբերգության բնորոշումները՝ որպես նախապես ծրագրված, պետության կողմից իրականացված ցեղասպանություն... եթե եւ քանի դեռ օսմանյան պետության պատմական փաստաթղթերը... ուսումնասիրված եւ գնահատված չեն հեղինակավոր գիտնականների կողմից»<sup>104</sup>: Ըստ նրան աջակցող էլեկտրոնային կայքի՝ նրան օսմանյան արխիվներին մուտքի իրավունք էր տրվել, ինչով նա հնարավորություն էր ստացել գտնելու մեկ փաստաթղթ, որը, նրա ասելով, «որոշակիորեն ցույց է տալիս, որ հայերի սպանություններում ներգրավված է եղել կառավարությունը»<sup>105</sup>: Յանկացած դեպքում, այն պատմաբանները, ովքեր թուրքամետ դիրքորոշում էին որդեգրել թուրքական կառավարության փողերը վերցնելուց հետո եւ ստացել էին փաստաթղթերին հատուկ մուտքի իրավունք, ունեն շահերի բախում: Հաշվի առնելով դոկտոր Լոուրիին շրջապատող հակասությունները, համեմատաբար համեստ գիտական հեղինակությունը եւ թուրքական կառավարության հետ ֆինանսական հարաբերությունները՝ ցեղասպանության ժխտման կամ առնվազն դրանից խուսափելու համար նրա տեսակետի վրա հենվելու բրիտանական կառավարության ընտրությունը տարօրինակ է:

## Հետազա հարցապետումները

70. 2004-2005թթ. հուշագրում կա կցված «Ելակետային հուշագիր», որը արդար լինելու որոշ փորձեր է կատարում.

«Այն հարցը, թե որքանով էին սպանությունները պաշտոնական, պետական քաղաքականություն, երկարատես բանավեճի ենթակա է: Սակայն երիտրուրքական շարժումը, որը կառավարում էր Օսմանյան կայսրությունը 1908թ.-ից, անկասկած հավատացած էր, որ հայերը կայսրության միասնության եւ անվտանգության համար վտանգ էին ներկայացնում... Անկողմնակալ եւ ոչ մասնագետ եվրոպացի պատմաբանները քվում են, թե համաձայն նն, որ դրանում կա ինչ-որ պաշտոնական դավադրություն:

<sup>104</sup> Հողված Rich Miller, “History and the power to change it. Academic leaders erupt over appearance of Turkish influence at Princeton”, *The Trenton Times*, 10 December 1995:

<sup>105</sup>Հողված Lis Verderman, “Professor feels the heat”, *The Princeton Alumni Weekly*, 24 January 1996, էջ 14-15, վերատպված կայքում <http://www.tallarmeniantale.com/lowry.htm>:

Սակայն որքա՞ն հեռու էր այն գնում... Այս պատմաբաններից մեկը՝ Ա. Լ. Մլրֆին, նշում է. *Օսմանյան կայսրության վերջին շրջանը՝ 1908-23թ., (Լոնգման 1998թ.)* ուրվագծում է հետեւյալ հակասարակշուրջությունը. «Դժվար է, եթե ոչ անհնարին, խուսափել այն եզրակացությունից, որ այն բանից հետո, երբ բռնագաղթ կազմակերպվեց, օսմանյան դեկավարությունը կամ գոմե դրա որոշ մասը չխորշեցին հնարավորությունն օգտագործելուց լուծելու մի խնդիր, որը տասնամյակներ շարունակ կայսրությանը բավականին տիհաճություններ էր պատճառել»<sup>106</sup>:

Այս զգուշավոր եզրակացությունը միայն մոտավոր է համապատասխանում այն պատմական ճշմարտությանը, որը հանդիպում է ցեղասպանության ապացույցի բավարար չինելու մասին ԱԳՀՀՆ նախարարներին ուղղված իրավաբանորեն անհասկանալի հաղորդագրությունների հարյուրավոր էջերում:

71. Այնուամենայնիվ, 2005թ. կեսերին ՆՍԿ-ի թուրքամետ դիրքորոշումը վերանայվեց եւ վերահաստատվեց: Թուրքիայի Ջրեալան օրենսգրքի 301-րդ հոդվածի վերաբերյալ, որով մի շարք գրողներ եւ մտավորականներ մեղադրվեցին հայոց ցեղասպանությունը հիշատակելու համար, ճնշման ներքո ԱԳՀՀՆ-ն հայտարարեց, որ ցեղասպանության հիշատակումը օրենսգրքով արգելված չէ, այլ միայն «պարզաբանող գրությամբ», ինչին այն պետք է վերաբերի<sup>107</sup>: Սա դատամոլական արձագանք էր ճշմարտությունը խոսելու կամ առնվազն ճշմարտությունը իրապարակելու կամ հստակ իմնավորված տեսակետի համար քաղաքացիներին Թուրքիայի կողմից հետապնդելու համար, որը ենթադրում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի աղաղակող խախտում:
72. 2005թ. Եվրոպայի հարցերի գծով նախարար Դենիս Մլրշեյնը առաջարկեց ստեղծել Անկախ միջազգային հանձնաժողով՝ դիտարկելու համար 1915թ. զանգվածային սպանությունները: Կասկածից վեր է, որ նա ի նկատի ուներ ուսումնասիրող հանձնաժողով, բայց թուրքական կառավարությունը համաձայնվեց միայն պատմաբանների հանձնաժողովի ուսումնասիրությանը: Հայաստանի կառավարությունը պատասխանեց, որ դա չի լուծի խնդիրը, ինչը, անշուշտ, ճիշտ էր: Այս իմնախնդիրը պաշտոնապես լուծելու վճռական միջոցը կլիներ ՍՍԿ-ի կողմից հատուկ միջազգային դատարան իմնելը՝ քննելու համար բոլոր ապացույցները (որոնք, անկասկած ներկայացված են պատմաբանների օգնությամբ) եւ որոշել՝ արդյո՞ք օսմանյան իշխանությունների վարքածելը հավասարեցվում է ցեղասպանության մեջ

<sup>106</sup> ԱԳՀՀՆ փաստաբուլ՝ վերնագրված «Ելակետ.Հայաստան 1915-16» (առանց ամսաթվի):

<sup>107</sup> Խորհրդաբանական հարցման եալեւտային փաստաբուլ՝ կապված Լորդերի պալատում արված բանավոր հարցի հետ: Փատասխանը պետք է տրվի 2005թ. հովհանքի 14-ին լորդ Թրիգմանի կողմից: Հարց 4. Ինչպիսի՞ն է ՆՍԿ-ի տեսակետը Թուրքիայի Ջրեալան օրենսգրքի այն հոդվածի վերաբերյալ, որը հայկական «ցեղասպանության» հաստատումը որակում է որպես պետության դեմ հանցագործություն:

գործակցության: 2009թ. սեպտեմբերին թուրքական եւ հայկական կառավարությունները Շվեյցարիայի միջնորդությամբ համաձայնության եկան Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրության շուրջ: Այս ողջունելի գարգացումը ներառում է «պատմական կողմի վերաբերյալ երկխոսելու» հեռանկար՝ «պատմական փաստաթղթերի եւ արխիվների անկողմնակալ գիտական հետազոտության միջոցով ուրվագծելու համար գոյություն ունեցող խնդիրը եւ ճենակերպելու համար առաջարկությունները»<sup>108</sup>: Թուրքական մամուլը բարձրագոչեց այս մասին՝ ասելով որ հայերն ընդունել են «Պատմաբանների հանձնաժողովը», թեև խոսքն ընդամենը նախնական ուսումնասիրության մասին էր: Չկա որեւէ պաշտոնական որոշում, որը ընդունվել է պատմաբանների հանձնաժողովի կողմից՝ հիմնախնդիրը պահանջում է անկախ դատական քննության որոշում: «Գոյություն ունեցող խնդիրների ցանկացած սահմանում» պետք է սկսվի Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը չեղալ համարելուց, որով հայերի զանգվածային սպանությունները Թուրքիայում «ցեղասպանություն» բառով հիշատակելը սահմանվում է որպես հանցագործություն:

73. Վստահելի մեկ միջազգային հետաքննությունն է կատարվել, եւ տարօրինակ է, որ քաղաքականության փաստաթղթերի հարյուրավոր էջերում դրան միայն մեկ աղոտ եւ խուսափողական հղում կա: Այն ուղղված էր ՍԱԿ-ի Տնտեսական եւ սոցիալական խորհրդի կողմից (Մարդու իրավունքների հանձնաժողովի խնդրանքով) եւ արվեց Ցեղասպանության մասին հատուկ գեկուցող պրն Բեն Ուիթեքերի՝ Բրիտանական դատապաշտպան եւ Հեմփսթեդից Լեյբորիստական կուսակցության պառլամենտի նախկին անդամի կողմից: 1985թ. նա գեկուցեց, որ չկա որեւէ կասկած եզրակացնելու համար, որ 1915թ. վայրագությունները հանգում են ցեղասպանության<sup>109</sup>: Սա նրա որոշման վճռական ելակետն էր. նախորդ գեկուցողը նախապես եզրակացրեց, որ Թուրքիան մեղավոր է ցեղասպանության մեջ, սակայն այս եզրակացությունը հանվեց թուրքական բողոքից հետո՝ հանուն «միջազգային համայնքում միասնությունը պահպանելու»<sup>110</sup>: Ուիթեքերի գեկույցը ազդեցիկ փաստաթուղթ է, որին բրիտանական ցանկացած կառավարություն նշանակություն է տալիս, թեև զարմանալիորեն ԱԳՀՀ-ի նյութերում դրան որեւէ հղում չկա:

<sup>108</sup> Հրապարակված է <Լրագրի> կողմից, սեպտեմբերի 1, 2009:

<sup>109</sup> Ben Whittaker, Revised and Updated Report on the Question of the Prevention and Punishment of the Crime of Genocide, UN Doc. E/CN.4/Sub.2/1985/6: «Պետական ուղղությունների» մասին մի չբազրված գրություն, որ նախարարը կարող էր կազմել, ենթադրում է, որ «Ճնշման դեպքում». նա կարող էր անդրադառնալ երեք ականավոր պատմաբաններին (Լյուիս, Լաուրի եւ Մըք-Ջարդի), իսկ 1985թ. գեկույցի մասին հարց ստանալու դեպքում (Հիշատակելով դրա հեղինակին) նա կարող էր ասել, որ «այդ ժամանակից ի վեր նենք տեղյակ չենք, որ դա հիշատակվի ՍԱԿ-ի որեւէ փաստաթղթում կամ ֆորումում»:

<sup>110</sup> Stein Schabas, հղում 16, վերեւում, էջ 555-8:

## Վերջին պառամենտական գործընթացները

74. 2006թ. Սրբվեն Փառնդը նախաձեռնեց հիմնախնդրի քննարկում նստաշրջանի փակումից առաջ: ԱԳՀՀՆ-ն Ձեք Հունիին գեկուցեց, որ.

«ՆՄԿ-ն շարունակարար ապացուցել է, որ չկա հստակ հիմք՝ ապացուցելու, որ օսմանյան վարչակազմի վերնախավը հասուլ որոշում էր ընդունել վերացնելու իրենց իշխանության տակ գտնվող բոլոր հայերին: Չի եղել որեւէ պատճառ փոխելու այդ դիրքորոշումը»<sup>111</sup>:

Այնուամենայնիվ, մինչեւ այս փուլը ԵՄ ութ խորհրդարաններ ընդունեցին որոշում՝ ճանաչելով ցեղասպանությունը՝ Ֆրանսիան, Իտալիան, Լեհաստանը, Հունաստանը, Բելգիան, Սլովակիան և Նիդեռլանդները, Էլ չենք ասում Սուրբ Վատիկանի, Ուրուգվայի, Արգենտինայի, Ռուսաստանի, Լիբանանի և Կանադայի մասին: Տարբեր խորհրդարաններ, ներառյալ Գերմանիայի Բունդեսքաղը և ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, քննարկում էին հիմնախնդիրը<sup>112</sup>: Այս ժամանակահատվածում հաղորդագրությունները շարունակվում էին.

«Ժողովական ներալգիկ է<sup>113</sup> եւ ցեղասպանության համար պատասխանատվություն կրելու վերաբերյալ ընդունում է պաշտպանողական կեցվածք՝ չնայած այն փաստին, որ դեպքերը տեղի էին ունեցել Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում, այլ ոչ թե ժամանակակից ժողովայում: Կային բազմաթիվ քուրքեր, ովքեր կորցրեն իրենց կյանքերը պատերազմում, եւ կարող է լինել փոխհատուցման պահանջի տարր, եթե նրանք ընդունեն ցեղասպանության համար պատասխանատվությունը: Այս պաշտպանողականությունը նշանակում է, որ ժողովական պատմականորեն խեղդում է բանավեճը իր երկրում եւ զգայի դիվանագիտական ջանքեր է գործադրում վիճեցնելու համար ցանկացած հետագա քննարկում»<sup>114</sup>:

75. Սրբվեն Փառնդի նախաձեռնած բանավեճը շարունակվեց 2006թ. հունիսի 7-ին: Ձեք Հունը կառավարության անունից հստակորեն կարդաց իր ԱԳՀՀ-ի հաղորդագրությունը:

<sup>111</sup> Ուղղորդող գրություն Ձեք Հունիս Ռուսաստանի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի դիրեկտորատից, ԱԳՀՀՆ, 6 հունիսի, 2006թ.:

<sup>112</sup> 2007թ. Կոմիտեն 27-21 հարաբերակցությամբ քվեարկեց Հայկական ցեղասպանությունը ճանաչելու օգտին: Այս 106 բանաձեւը քվեարկության շրմվեց «Պալատում՝ պատճառաբանությամբ, թե այն կարող է վնասել ԱՄՆ ազգային ամվանմությանը, այսինքն, եթե Թուրքիան ի պատասխան տեղափոխեր ԱՄՆ ուղամական բազմերն ու վերահսկող կայանները»:

<sup>113</sup> Այսինքն՝ նյարդային ջղածգումների մեջ է ընկնում ամեն անգամ, երբ խնդիրը բարձրացվում է:

<sup>114</sup> Ուղեկցող գրություն Ձեք Հունին, 6 հունիսի, 2006թ.

Սակայն այս անգամ «ապացույցները բավականաշափ անհերքելի չեն» կրկնելու փոխարեն ի ցույց դրեց բավականին նոր տեսակետ.

«Փաստն այն է, որ ցեղասպանության հանցագործության իրավական անվանումը կամ սահմանումը տրված չէ այն ժամանակում, երբ այս զանգվածային սպանություններն իրականացվել են: ՄՄԿ-ի Յեղասպանության կոնվենցիան ուժի մեջ է մտել 1948թ., ուստի այն դեպքերի համար, որոնք մենք քննարկում ենք, անհնարին էր զանգվածային սպանությունները որպես որպես ցեղասպանություն՝ մտովի փորձելով Կոնվենցիայի ցեղասպանության սահմանումները կիրառել արտահայտելու սարսափելի ողբերգությունը, որը այս դեպքում տեղի էր ունեցել դրանց երեսուն տարի առաջ: Իրավունքի ընդհանուր պրակտիկան է չկիրառել նման հետադարձ պատասխանատվություն...»<sup>115</sup>:

76. Սա անհերերություն է: Գոյություն չունի «փրավունքի մեջ ընդհանուր պրակտիկա», որպեսզի ցեղասպանության սահմանումը «մտովի» չկիրառվի այն ողբերգությունների համար, որոնք տեղի են ունեցել Կոնվենցիայի վավերացումից առաջ: «Իրավունքի ընդհանուր պրակտիկան» վերաբերում է կանոնին դատական կարգով չհետապնդելու այն հանցագործության համար, որը այն կատարելու պահին հանցանք չի համարվել, բայց ոչ ոք չի խոսում հետապնդելու մասին, նրանցից եւ ոչ մեկը չի մնացել, որ հետապնդվի: Պ.Հունը շարունակեց՝ ասելով, որ անհնարին է այսօր փոխարինում ապահովել «ապացույցի ներկայացման, խաչաձեւ հարցաքննության համար, որոնք անհրաժեշտաբար կծագեն ընդհանուր իրավասության դատարանում»: Բայց հարցադրումը չի փորձում կատարել այս կարգի հետաքննություն: Իհարկե, եթե Թուրքիան եւ Հայաստանը համաձայնության գային միջազգային դատական տրիբունալի վերաբերյալ, ապացույցներ ներկայացնելու ընթացքը եւ խաչաձեւ հարցաքննող փորձագետներ լրիվ տեղին կլինեին: Եթե պրան Հունը կարծում էր, որ կան իրավական տեսանկյունից որոշ տեխնիկական դժվարություններ 1915թ. զանգվածային սպանությունները որակելու որպես ցեղասպանություն, ապա նա թյուրիմացության մեջ է: 2006թ. հոկտեմբերին պրան Հունը այցելեց Հայաստան. նրա գեկույցը մեծապես հիշեցնում էր իր սեփական ելույթը (ինչն իր հերթին բառացիորեն ընթերցվել է իր ԱԳՀՀՆ-ի գեկույցում): Ինչեւէ, 5-րդ պարագրաֆը (որը զգալիորեն խմբագրվել է միջազգային հարաբերությունները, այսինքն՝ Թուրքիայի հետ, վճասելու մտավախությունից) վերջանում է չխմբագրված նախադատությամբ. «Թուրքիան անկասկած վճռականորեն

<sup>115</sup> Զեֆ Հուն, Համայնքների պալատ, Համայնքներ Հանսարդ, 7 հունիսի, 2006թ., Մաս 136WH:

կարձագանքի ՄԹ կողմից ճանաչման ցանկացած առաջարկին»<sup>116</sup>: Սա անտարակույս բացատրում է ԱԳՀՀՆ-ի առաջարկության եւ ՆՍԿ դիրքորոշման իրական պատճառը ներկայիս Լեյբորիստական կառավարության եւ նախկին կառավարությունների գործունեության ամբողջ ժամանակահատվածում:

77. 2007թ. մարտին լորդ Էյվրըրին վերադարձավ վիճահարույց խնդրին՝ խնդրելով բրիտանական այն պատմաբանների անունները, որոնց կարծիքի վրա ՆՍԿ-ն հենվում է մերժելու համար 1915-16թթ. հայերի նկատմամբ վերաբերմունքը որպես ցեղասպանություն որակելը: Դրա արձագանքը եղավ պահանջելը, որ ԱԳՀՀՆ-ն\_«ընդգրկի պատմական աղբյուրների եւ աշխատանքների բազմազանություն»<sup>117</sup>: Սա լրջորեն մոլորեցնող էր: Այն աղավաղվում էր ԱԳՀՀՆ-ի պահանջին տրված արձագանքով (տե՛ս վերեւում նշված պարագրաֆ 47): Միակ հիշատակված աղբյուրներն էին «Կապույտ գիրքը» (որը պարունակում էր վկաների՝ ցեղասպանության ժխտման հետ անհամատեղելի հայտարարություններ) եւ Մալբոր Յափի անունով բրիտանացի պատմաբանը, որը, ասում են, ունի «կասկածելի» այլ պատվիրատուններ: Պրոֆեսոր Յափը Սերձավոր Արեւելքի հետազոտություններ ամսագրի խմբագիրների խորհրդատվական հանձնաժողովի անդամ է եւ անտարակույս կասկածի տակ է առել Վահագն Դադրյանի «Հայոց ցեղասպանության պատմությունը» գիրքը, բայց ոչ ցեղասպանության վերաբերյալ հայտարարությունը հերքելու ձեւով<sup>118</sup>: Յափը ընդունում է, որ զանգվածային սպանությունները տեղի են ունեցել, որ «որանում օսմանյան դեկավարության կողմից որոշ բողտվություն եւ նույնիսկ մասնակցություն է եղել»: Նա ընդունում է, որ օսմանյան կառավարությունը իրամայել է իրականացնել տեղահանություն՝ «առանց համապատասխան փոխադրամիջոցների, սննդի եւ անվտանգության ապահովման»: Նա ասում է, որ «չնայած Դադրյանը բազմաթիվ տեղեկություններ է հավաքագրում, որոնք կարծես թե ենթադրում էին, որ օսմանյան կառավարության անդամները ցանկանում էին ոչնչացնել հայերին, նա չի կարողանում գտնել որեւէ փաստաթուղթ, որը պարունակում է կոտորածի հստակ իրաման»: Այս ձախողումը, ինչին ես ուշադրություն դարձրի, վճռորոշ չէ. այս կազի փաստաթղթեր հայտնաբերված չեն նաև Նացիստական եւ Ռուսական պետական փաստաթղթերում, եւ չնայած լրան՝ գերազանցում են մանրակրկիտ ապացույցները: Յափը նպատակ չուներ կիրառել օրենքը, եւ գրքի վերաբերյալ նրա դիտարկումը ՆՍԿ-ի համար ցեղասպանությունը ժխտելու որեւէ հիմք չի ապահովում:

<sup>116</sup> Ելակետային փաստարուղը 2006թ. հոկտեմբերին Հայաստան կատարած Զեֆ Հունի այցի համար՝ վերնագրված «Հայաստան. Թուրքիայի հետ հարաբերությունները եւ 1915-16թթ. «ցեղասպանությունը»: Կարեւոր հաղորդագրություններ»:

<sup>117</sup> Լորդ Թրիսման, Լորդերի պալատ, Գրավոր պատասխաններ, Հենսարդ, 29 մարտի, 2007թ., Ասս WA321:

<sup>118</sup> Malcolm Yapp, “Review article: The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Casuscasus by Vahagn N Dadrian”, *Middle Eastern Studies*, Vol 32, No 4 (Oct 1996), էջ 395-397:

78. ՆՄԿ-ն հրաժարվում է ընդունել, որ պատմաբանների շրջանում տեսակետների հավասարակշռությունը այն է, որ կոտորածները հանգում են ցեղասպանության: Նույն գրության մեջ ԱԳՀՀՆ-ն վստահաբար պնդում է, որ ապրիլի 24-ին՝ ցեղասպանության հիշատակի օրը հրավիրված ոչ բոլոր նախարարները (տևականությամբ առաջարկության արդյունքն է, ինչպես 1995թ. առն Հոգածի դեպքում):
79. 2007թ. հուլիսի 2-ին հայոց ցեղասպանության վերաբերյալ ՆՄԿ-ի դիրքորոշման հուշագիրը վերահաստատեց այն դիրքորոշումը, ըստ որի «բացակայում են անհերքելի փաստերը՝ ապացուցելու համար, որ օսմանյան ղեկավարության վերնախավը ընդունել էր իր ենթակայության տակ գտնվող բոլոր հայերին ոչնչացնելու հատուկ որոշում»<sup>119</sup>: Հետագայում ավելացվեց շփոթեցնող պնդումը, որ «իրավունքի միջդատական քննության հետադարձ կիրառումը սովորական պրակտիկա չէ»: Չի կարող լինել տրամաբանական կամ իրավական որեւէ առարկություն հեղինակավոր այնպիսի դատաքննության հանդեպ, որը կորոշի՝ արդյո՞ք 1915թ. դեպքերը համապատասխանում են 1948թ. սահմանմանը:
80. Պին Դենիս ՄըքԾեյնի կողմից արված առաջարկությունը՝ ստեղծել անկախ հանձնաժողով, ամբողջությամբ հավանության է արժանանում այս հուշագրում, չնայած միակ հանձնաժողովը, որ Թուրքիան առաջարկում էր ստեղծել պատմաբաններ ընդգրկող հանձնաժողովն էր՝ իսկապես մի անհմաստ գործողություն: Սա կարծես երդում է դառնում. 2007թ. հոկտեմբերի 16-ին Ենդրյու Ջորջի, ՊԱ-ի հետ հանդիպման ժամանակ նախարարներին հրահանգ տրվեց պառլամենտի հայամետ անդամներին խրախուսելու՝ Հայաստանի կառավարության վրա լորրինգ գործադրելով համոզել պատմաբանների հանձնաժողովի բուրքական առաջարկությանը ավելի դրական արձագանքել, իսկ այս ճնշումը հավանաբար հանգեցրել է այն զիջմանը (ինչը նկարագրված է պարագրաֆ 72-ում), որը տեղ է գտել դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրության մեջ:
81. Այս ծավալուն նյութերի մեջ որեւէ նշում չկա, որ Բրիտանիան 1915թ. զանգվածային սպանությունները դատապարտում է որպես «մարդկության դեմ հանցագործություն»: Իրականում որոշ հուշագրեր տարբերեցվում են, որպես թե կառավարությունը դատապարտում է երկու կողմերին էլ եւ չի մեղադրում բուրքերին: Այս գեկույցում ԱԳՀՀՆ-ի ձեռագիրը նորից ի հայտ է գալիս՝ նախարարին ասելով, որ «սա հուզական թեմա է, եւ մենք չենք ակնկալում հեշտ հանդիպում, վերջապես չկա որեւէ դրական

<sup>119</sup> Խորհրդարանական հարցման ելակետային փաստարությ՝ կապված լորդ Էյվերիի գրավոր հարցման 2007թ. մարտի 19-ին քննարկման հետ. պատասխանի նախագիծ լորդ Թրիգմանի համար:

<sup>120</sup> Հուշագիր Ռուսաստանի, Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի դիրեկտորատից, ԱԳՀՀՆ, պ.Մերքիին՝ Վերնագրված «ՆՄԿ դիրքորոշումը Հայկական ցեղասպանության պնդումների վերաբերյալ», 2 հուլիսի, 2007թ.

հաղորդագրություն, որը ՆՍԿ-ն կարող է այս հիմնախնդրի վերաբերյալ տալ այս լսարանին: Բայց կարեւոր է ցույց տալը, որ մենք լսում ենք»<sup>121</sup> (այլ կերպ ասած՝ ՆՍԿ-ն սահմանափակ մտածողություն ունի թեմայի վերաբերյալ, թեև կձեւացնի, որ առնվազն մասնակիորեն բաց է): Քանի որ պատվիրակությունը ընդգրկում էր ոչ միայն Հայկական համերաշխության անդամների, այլ նաև Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության փոխնախագահին, ԱԳՀՀՆ-ի առաջարկությունը, ըստ էության, նրանց աջակցելն էր, չնայած այն փաստին, որ «ցեղասպանագետի ընդգրկումը խմբում հավանական է, հակասում է» բրիտանական դիրքորոշմանը<sup>122</sup> (չկա որեւէ նախանշան, որ ԱԳՀՀՆ -ում որեւէ մեկը կարդացել է պրոֆեսոր Դեյվիդ Բլոքսիամի գիրքը «Ցեղասպանության մեծ խաղը», որը հրատարակվել է Օքսֆորդի համալսարանի հրատարակչության կողմից 2005թ.-ին, ինչն էլ ծանրակշիռ կերպով ապացուցում է ցեղասպանության ժխտման կեցվածքի անզորությունը: Ցեղասպանության վերաբերյալ գիտելիքը մի բան է, որը ԱԳՀՀՆ-ն երբեք շահագրգոված չի եղել կիրառել այն հիմնախնդրի վերաբերյալ, որից նրանք կցանկանային խուսափել: Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի 2007թ, բանաձելի փաստաթղթերում չկա որեւէ հղում, որն ասեր, թե «օսմանյան արշավը կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ 1914-1923թթ. իրենից ներկայացնում է հայերի եւ ասորիների եւ պոնտացի եւ անատոլիացի հոլյուների դեմ ցեղասպանություն»: ԱԳՀՀՆ-ն պարզապես ցուցադրում է վերաբերմունքը, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի կոմիտեն որոշել էր իրադարձությունները ճանաչել որպես ցեղասպանություն. որպես արդյունք՝ «մենք եւս կարող ենք աշխարհասփյուռ հայկական համայնքի լոքիստական մեքենայից կտրուկ ակտիվացում սպասել»: Սա, դժվար թե, անկողմնակալ հարցում անողի խոսք է. ԱԳՀՀՆ-ն դարձել է բավականին ցինիկ հակառակորդ:

82. Չնայած ԱԳՀՀՆ-ն ընդունում է, որ Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով կարող են «քուրքական ինքնությունը վիրավորելու» համար մեղադրանքներ հարուցել նրանց դեմ, ովքեր իիշատակում են ցեղասպանության մասին (ինչպես Օրիան Փամուկը եւ Հրանտ Դինքը), սա խոսքի ազատությանը աջակցելու հարցում բուռն լոքինզի խնդիր չէ: 2007թ. բրիտանական դիրքորոշումը կարծրացավ Թուրքիային Բուշի վարչակազմի աջակցության հետեւում: Վախենալով, որ քուրքական բացասական հակազդումը կվճարեր ԱՄՆ շահերին, մասնավորապես նրա Ազգային անվտանգության գործակալության հսկման բազաներին եւ նավթային շահերին, նախագահ Բուշը տարօրինակ քայլ ձեռնարկեց՝ Պալատի Արտաքին հարաբերությունների կոմիտեի առջեւ ելույթ ունենալով նախքան այն կընդուներ 106 բանաձեւը, եւ կոչ արեց «հայոց

<sup>121</sup> Փաստաթուղթ՝ վերնագրված «Հայաստան. հանդիպում Էնդրյու Ջորջի, ՊԱ, եւ Հայ դաշնակցության անդամների հետ, 16 հոկտեմբերի, 2007թ.», էջ 2:

<sup>122</sup> Նույն տեղում:

ցեղասպանության վերաբերյալ ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ համապատասխան ըմբռնում ցուցաբերել»<sup>123</sup>: Բուշն ասաց, որ «այս բանաձեւը այս պատմական զանգվածային սպանություններին տրված ճիշտ արձագանք չէ... դրա ընդունումը մեծ վճառ կհասցնի ՆԱՏՕ-ում մեր հիմնական գործընկերոջ հետ հարաբերություններին եւ ահաբեկչության դեմ գլոբալ պայքարին»: 2007թ. հոկտեմբերի 23-ին վարչապետ Բլերը հանդիպեց Թուրքիայի վարչապետ Էրդողանին, ով ասաց, որ «իր տեսակետը նույնն է՝ «ցեղասպանությունը» պատմաբանների խնդիրն է»: Սա այն դիրքորոշումն է, ինչպես մենք արդեն տեսանք, որին ԱԳՀՀՆ-ն երկար ժամանակ աջակցում էր: Զգալիորեն խմբագրված արձանագրություններում չկա որևէ ակնարկ, որ պին Բլերը որևէ առաջարկություն էր արել ճշմարտության եւ հաշտեցման գործընթացի վերաբերյալ կամ ուշադրություն էր հրավիրել ազգերի՝ իրենց սեփական անցյալի հետ համաձայնության գալու կարեւորության վրա:

## «Դառնինգ Սթրիթ» էլեկտրոնային կայքի միջադեպը

83. 2008թ. ԱԳՀՀՆ-ն խիստ զարմացավ, երբ ցեղասպանության շուրջ պատմաբանների համաձայնության գալու անզոր լինելու վերաբերյալ նրա հիմնական պատասխանը տեղադրվեց ««Դառնինգ Սթրիթ» էլեկտրոնային կայքում՝ ի պատասխան մի էլեկտրոնային խնդրագրի, եւ հասարակության անդամների կողմից ուշադրություն հրավիրվեց դրա թերացումների վրա: ԱԳՀՀՆ-ի պաշտոնական փաստաթղթեր կազմող Սոֆկա Բրաունը զգուշացվեց իր կողեգա Սերյու Էքստանսի կողմից այս «ուղղության» անբավարարվածության բարձր մակարդակի վերաբերյալ: Անկասկած, նախարարը (Զիմ Սերֆի) պահանջ ներկայացրեց՝ տեղեկանալու՝ կոնկրետ ո՞ր ապացույցն էր համարվել «ոչ բավականաշափ անհերքելի»: Նրա պահանջը «մասնավորապես պնդում է ներկայացնել ուսումնասիրված փաստերի մանրամասն ցանկ, որոնք մեզ ստիպում են հավատալ, որ ապացույցները բավականաշափ անհերքելի չեն»: Այս պահանջը բարդ դրության մեջ է դնում տկն Բրաունին: **FOI** պահանջը բացահայտում է, որ որևէ ապացույց պատշաճ կերպով չի դիտարկվել ԱԳՀՀՆ-ի կողմից առնվազն սկսած 1997թ.: Նա առանց հետաձգման Քրեյգ Օլիֆանտից պահանջեց ապահովել որոշ անուններ. «մենք չենք սուսաջարկում ի պատասխան ապահովել անուններ, սակայն կցանկանայինք նշել պատմաբանների շրջանում բանավեճերի մի քանի դեպքեր: Մենք կցանկանայինք մեջքերել պատմաբանների յուրաքանչյուր «կողմից», կարծում եմ, Դուք մեզ համար կարող

<sup>123</sup> Տես <http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c110:H.RRS.106> Հայկական ցեղասպանության մասին բանաձեւի մասին Կոնգրեսի գրադարանում եղած արձանագրությունը, H.Res.106, Ներկայացուցիչների պալատում: Այն ընդունվել է ԱՄՆ Արտաքին գործերի կոմիտեի կողմից ձայների 27-21 հարաբերակցությամբ 2007թ. հոկտեմբերի 9-ին:

Էիր ավելի շուտ անուններ նշել, սակայն վախենում եմ՝ ես չունեմ նրանց գրավոր ցուցակ: Կարո՞ղ էիր էլեկտրոնային փոստով դրամք ուղարկել իմ»<sup>124</sup>:

84. Պրն Օլիֆանքը ընդամենը երեք ժամ անց պատասխանեց՝ նշելով երեք ծանոթ անուններ: Նա մեջբերեց 2001 և 2005թթ.-ին առաջադրված երեք հոռետեսների անուններ<sup>125</sup>, Բեռնար Լյուիս, Ջասթին ՄըքՔարթի և դոկտոր Հեք Լոուրի: Օլիֆանքը ՄըքՖայի (տես վերեւում) եւ դոկտոր Էրիկ Ջուրխերի տեսակետները համարեց «միջնորդավորված», որնց տեսակետները բոլորովին ել «միջնորդավորված» չեն. «Աշաններ կան, որ թեեւ օսմանյան կառավարությունը, ըստ էության, ներառված չէր ցեղասպանության մեջ, Թալեարի դեկավարության տակ գտնվող Սիասնություն եւ առաջընթաց կուսակցության մի ներքին շրջանակ ցանկություն ուներ արեւելյան հարցը լուծելու հայերին ոչնչացնելով, եւ տեղահանությունը օգտագործեց որպես այդ քաղաքականության քողարկում»<sup>126</sup>: Օլիֆանքը մեջբերում է վեց պատմաբանների, ովքեր գրել են «հեղինակավոր» զեկույցներ այն մասին, թե ինչն են նրանք աներկբայորեն նկարագրում որպես ցեղասպանություն:
85. Երկու կողմերից պատմաբաններ մեջբերելու ԱԳՀՀՆ-ի խորամանկությունը, ինչը կարող է շփորձնող տպավորություն քողնել, որ պատմաբանները հավասարապես են բաժանված, տվյալ դեպքում քննություն չբռնեց: Նախնական պատասխանը պատմաբանների որեւէ հիշատակում չէր անում եւ ուղեկցվում էր Ջիմ Մըքֆիին՝ պատասխանատու նախարարին ուղղված (հավանաբար Էնդրյու Փեյչի՝ դեպարտամենտի դեկավարի կողմից) ձեռագիր բացատրությամբ. «Ջիմ, մի քանի լրացուցիչ մանրամասներ են պահանջվում: Ոչ թե պարզապես պատմաբանների հիշատակում: Մենք դադարեցինք անդրադառնալ պատմաբաններին 2007թ. հունիսին, երբ այս նոր ուղղությունը գարգացավ: Մենք հասկացամք, որ պատմաբաններին անդրադառնալը միտում ունի բարձրացնելու հետագա հարցեր/ենթադրություններ»<sup>127</sup>:
86. Սա կարող է ազդարարել տարակարծիք պատմաբաններին առնչվող ԱԳՀՀՆ-ի սովորական դարձած «պտույտէջի» վերջը: Այնուամենայնիվ, թվում էր, թե Մըքֆին հանգիստ է. նրա պատասխանը՝ տրված լորդ Մելոք-Քրաունի կողմից 2008թ. մարտի 4-ին, կարճ վերահաստատումն էր դասական բանաձեւի. «Թե՛ այս, թե՛ նախկին կառավարությունները վճռում են, որ ապացույցները բավականաշափական չեն՝ մեզ համոզելու համար, որ դեպքերը պետք է որակեն որպես ցեղասպանություն, ինչպես սահմանված է 1948թ. ՍՍԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայում»<sup>128</sup>:

<sup>124</sup> Էլեկտրոնային նամակ Սոֆկա Բրաունից Քրեյգ Օլօֆանտին, 4 փետրվարի, 2008թ.:

<sup>125</sup> Տես պարագրաֆներ 56-59, 63, 64 և 72, վերեւում:

<sup>126</sup> Eric-Jan Zürcher, *Turkey: a Modern History* (London/New York: Tauris, 2004), էջ 116:

<sup>127</sup> Խորհրդաբանական հարցման ելակետային փաստաթուղթ՝ կապված Լանդաֆի բարոնուի Ֆինլիի գրավոր հարցման 2008թ. փետրվարի 19-ի քննարկման հետ:

<sup>128</sup> Լորդ Մելոք-Քրաուն, Համարդ, Գրավոր պատասխաններ, 4 մարտի, 2008թ., Մաս WA165:

87. Սա իհարկե շփոթմունք էր: 1997թ. փաստաթղթերը այժմ սահմանում են, որ այս կառավարությունը բոլորովին «չի քննել որեւէ ապացույց»: Այն ոչ քննել է, ոչ էլ քննելու համար ապացույց է ունեցել: ԱԳՀՀՆ-ն երբեք չի փնտրել նման ապացույց՝ բացի Քրեյդ Օլիֆանտից ամեն կողմը ներկայացնող անուններ խնդրելուց:
88. Ի՞նչ է ի նկատի առնվում՝ ասելով, որ ապացույցները «բավականաչափ անհերքելի չեն»: Սա ապացույցի չափանիշ է, որը թվում է, թե ԱԳՀՀՆ-ի կողմից հորինվել է բառախաղի համար, եւ որը չի արտահայտում օրենքը: Բրիտանական իրավունքում ապացույցի միայն երկու չափանիշ կա՝ քաղաքացիական չափանիշ (հավանականությունների հավասարակշռմամբ, այսինքն՝ ավելի հավանական է, քան ոչ) եւ քրեական չափանիշ (խելամիտ կասկածից վեր):
89. Լորդերի պալատը իր դատավարական հնարավորությամբ հստակեցրեց, որ քաղաքացիական ակտերում կա ապացույցի ընդամենը մեկ նորմ, եւ ցանկացած այլ խստացնող չափանիշ պետք է նշանակի ապացույցի քրեական չափանիշ: Լորդ Հոփմանը հաստատել էր, որ.

«Կարծում եմ՝ ժամանակն է եկել մեկընդմիշտ եւ բոլորին ասելու, որ ապացույցի միայն մեկ քաղաքացիական չափանիշ կա, ինչն ապացուցում է, որ հսկամականությունը ավելի մեծ է, որ դեպքը տեղի է ունեցել, քան թե, որ չի ունեցել, հստակությունը ավելի կհասկանար, եթե դատարանները պարզապես ասեին, որ չնայած ակտերը քաղաքացիական էին, մերառված մասնավոր խնդրի բնույթը այն համապատասխանեցնում է կիրառելու քրեական չափանիշներ»<sup>129</sup>:

90. Ուստի ստուգելը՝ արդյո՞ք ապացույցները «բավականաչափ անհերքելի չեն» որեւէ իմաստ չունի: Եզրույթը օքսիմոռն է (ինչ-որ քան կա՛մ հստակ է, կա՛մ ոչ, այն չի կարող լինել մի քիչ հստակ): Թվում է, թե ձեւակերպումը ԱԳՀՀՆ-ի կողմից ընտրվել է ոչ թե հարցը լուծված համարելու, այլ այն կեղծելու համար, նրանք հորինել են անիմաստ նոր չափանիշ, որով «մարզաձողը» անհնարին բարձրության վրա կարող է դրվել:

<sup>129</sup> Վերաբերում է Բ (Երեխաներ) (սեռական չարաշահում. ապացույցի չափորոշիչ) [2008] UKHL 35, պար. 13:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

91. Վերջին տասնամյակում ԱԳՀՀՆ-ի կողմից ՆՍԿ ներկայացված եւ նախարարների կողմից պառլամենտական պատասխաններում վերարտադրված առաջարկության իմ հետազոտության արդյունքն այն է, որ այս առաջարկությունը ոչ արտահայտում է ցեղասպանության օրենքը, ոչ էլ 1915-16թթ. տեղի ունեցած զանգվածային սպանությունների ապացուցված փաստը, եւ հաշվարկված է պառլամենտին ապակողմնորոշելու՝ հավատացնելով, որ ապացույցի գնահատում եւ այդ ապացույցի գնահատման հետազոտություն է եղել:
92. ճշմարտությունն այն է, որ ներկայիս Լեյբորիստական կառավարության եւ նախկին կառավարությունների գոյության ամբողջ ընթացքում (ինչպես ԱԳՀՀՆ-ն է ընդունում) ՆՍԿ-ի կողմից դատապարտված 1915թ. դեպքերին համապատասխանող կամ անկողմնակալ գնահատական չի եղել ոչ այդ ժամանակ եւ ոչ էլ անմիջապես դրանից հետո այն տեսակետից, որ կարողանար կանխատեսել ցեղասպանության արդի սահմանումը, եւ որոնց անդրադարձել են Ցեղասպանության կոնվենցիան ստեղծողները որպես վայրագության տարատեսակի ելակետային օրինակ, ինչը կարող էր մտնել միջազգային հանցագործության այս նոր տեսակի մեջ: ՆՍԿ-ն հետեւղական կերպով (առնվազն մինչեւ 2007թ.) անարդարացիորեն պնդում էր, որ որոշումը պետք է կայացվի պատմաբանների կողմից, իսկ պատմաբաններն ունեն տարբեր կարծիքներ այդ հարցի շուրջ՝ անտեսելով այն փաստը, որ դա իրավական քննության առարկա է, եւ հարգանքի արժանի ոչ մի պատմաբան հավանաբար չէր կարող ժխտել տեղահանումների եւ ուսայական ու կրոնական դրդապատճառների կենտրոնական փաստերը, որոնք ընկած են հայ ժողովրդի զգալի հատվածի մահվան հետեւում: ՆՍԿ-ն նաև աջակցում էր մտացածին ենթադրություններին, որ դա որոշ առումով հակասում է 1948թ. նախորդած ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերի համար «ցեղասպանության» որակավորումը կիրառելու իրավական պրակտիկային: Ինչպես ներքին քաղաքականության հուշագրերից է բացահայտվում, այս եւ այլ սխալական եւ անտրամաբանական փաստարկներ են արվել, որ մինչեւ այժմ գործադրովել են հաջող ջանքեր՝ չիհասթափեցնելու համար «նեվրալգիկ» քուրքական կառավարությանը: Այս մոտեցման՝ կասկածներ առաջացնող բարոյականությունը գիտակցված էր (դեռեւ 1999թ.), բայց ակնհայտ է, որ չկա որեւէ շահագրգովածություն խնդրի ճշմարտությունը որոշելու կամ այն դիրքորոշումը վերահաստատելու հարցում, որ ՆՍԿ-ն այդ ժամանակ որդեգրել էր, եւ ոչ էլ ցեղասպանության արդի օրենքը ըմբռնելու մեջ (էլ չասած՝ կիրառելու), ինչպես դա ի հայտ է եկել ՄԴ, ՀՀՍՏ եւ ՌՀՄԴ որոշումներից: Բոլորովին չի ընկալվում, թե որքան կարեւոր է մարդկության դեմ գործած անցյալի իրենց հանցագործությունները

ազգերի կողմից գիտակցելը կամ զոհերի իրավահաջորդներին աջակցելը, ովքեր համարյա մեկ դար անց դեռևս պետք է ապրեն այդ հետեւանքների հետ:

93. Իմ կարծիքով՝ 12-27 պարագրաֆներում նկարագրված օրենքը երբ կիրառվում է 30-44 պարագրաֆներում բերված փաստերի նկատմամբ, առաջացնում է անխուսափելի եզրակացություն, որ 1915թ. հայերի նկատմամբ վերաբերմունքը համապատասխանում է ցեղասպանության որակմանը: Պատմաբանները, ում վրա հենվել է ԱԳՀՀՆ-ի այս եզրակացությունը ընդունելու իր մերժմանը աջակցելու գործում, ըստ վերլուծության, չեն պաշտպանում ԱԳՀՀՆ-ի դիրքորոշումը կամ ազդում իմ տեսակետի վրա, ինչպես ամփոփված է պարագրաֆ 45-ում: Եթե բարոնուհի Ջորժի կամ այլոց կողմից բարձրացված հարցը նորից տրվեր, համարժեք պատասխանը կլիներ այս տողերում.

«1915թ. Թուրքական կառավարությունը, որը այն ժամանակ Գերմանիայի դաշնակիցն էր, Դարդանելում բախվեց դաշնակիցների գրոհին, իսկ հետագայում՝ արեւելյան ճակատում ռուսական բանակի ներխուժմանը: Այնուամենայնիվ, այս հանգամանքները չեն արդարացնում Արեւելյան Թուրքիայից երկու միլիոն հայերի տեղահանության հրամանը եւ այնպիսի պայմանների մեջ դնելը, որոնք հաշվարկված էին, եւ փաստորեն այդպես էլ եղավ, որ հանգեցնեին այս հատվածի զգալի մասի ոչնչացմանը: ՆՄԿ-ն ժամանակին այս գործողությունը դատապարտել է որպես «մարդկության դեմ հանցագործություն» եւ խոստացել, որ այն իրականացրած հանցագործները կպատժեն: Սակայն միջազգային իրավունքը ցեղասպանությունը՝ որպես հանցագործություն, ճանաչել է 1948թ.-ից հետո: ՆՄԿ-ն ողջունում է Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ վերջերս դիվանագիտական հարաբերությունների հաստատումը եւ արձանագրությունը, որով նրանք համաձայնության եկան օրենսգրքի 301-րդ հոդվածը, որը այլապես կիսչընդոտեր նման ուսումնասիրությանը: ՆՄԿ-ն հստակեցնում է, որ եթե այսօր նման դեպքեր տեղի ունենային ցանկացած որեւէ այլ երկրում, որը կունենար 1915թ. Թուրքիայի պատմությանը նման պատմություն, կասկածից վեր է, որ կկիրառվեր Յեղասպանության կոնվենցիան եւ կպահանջվեր այդ հանցագործության համար դատական կարգով հետապնդում, ինչպես նաև հետապնդում մարդկության դեմ հանցագործությունների համար»:

# ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ՑԵՎԱԿԱՆ ՑԵՎԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Թագուհու խորհրդական Զեքրի Ռոբերտսոնի տեսակետը, 9 հոկտեմբերի, 2009

94. Ես կարծում եմ, որ պառլամենտը հետեւողականորեն ապատեղեկացվել էր այն նախարարների կողմից, ովքեր կրկնում էին ԱԳՀՀՆ-ի հաղորդագրությունները առանց հարցականի տակ դնելու դրանց ճշգրտությունը: ՆՍԿ-ի իրական եւ միակ քաղաքականությունն էր խուսափել հայոց ցեղասպանության վերաբերյալ ճշմարիտ պատասխաններից, քանի որ ճշմարտությունը կանհանգստացներ թուրքական կառավարությանը: Կարելի է կանխատեսել, որ ապագայում խնդրի վերաբերյալ ցանկացած հարց կհանդիպի նույն անհմաստ բանաձեւին «ոչ բավարար անհերքելի ապացույցի» մասին՝ աղավաղելով այն պարզ փաստը, որ այժմ ՆՍԿ-ն չի գալու համաձայնության հիմնախնդրի շուրջ, որի վերաբերյալ մի ժամանակ այնքան վստահ էր, այսինքն, որ հայկական կոտորածները «մարդկության դեմ հանցագործություն» էին, որը երբեք չի ներփի եւ չի մոռացվի: Ժամանակները փոխվում են, բայց ինչպես որիշ քաղաքակիրք ազգերը ընդունում են, ցեղասպանության եւ խոշտանգումների համաշխարհային հանցագործությունները չունեն վաղեմության ժամկետ: Դատավոր Բալթազար Գարզոնը Ֆրանկոյի ժամանակաշրջանի հանցագործությունների իր դատաքննությունը սկսելիս հայտարարեց, որ դրանք իրականացնողները չունեն հետմահու անպատճելիություն. նույնը կարող էր ասվել հայոց ցեղասպանության հեղինակների մասին:

ԶԵՖՐԻ ՌՈԲԵՐԹՈՒՆ ԹԽ

ԴԱՌԻԹԻ ՍԹՐԻԹ ԶԵՅՍՔԵՐԱ

9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2009